

Հավելված
Հաստատվել է ՀՀ ՀՊ
2022թ. Փետրվարի 28-ի թիվ 64-Ա որոշմամբ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ



ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵՈՒՄ

2019 ԹՎԱԿԱՆԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

I. ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I.	ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ	2
II.	ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ.....	6
III.	ԱՄՓՈՓԱԳԻՐ	6
IV.	ԱՆԿԱԽ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԾԻՔ.....	7
I.	ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ	10
II.	ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ	12
V.	ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ	17
1.	2019թ. աշխատանքի վարձատրության գծով ծախսի կատարողականի վերաբերյալ.....	17
2.	Անընդմեջ հերթապահության ռեժիմով աշխատող (օրական 24 ժամ աշխատաժամանակի տեվողությամբ) ՊԵԿ աշխատողների կողմից կատարվող գիշերային աշխատանքների և հավելումների վերաբերյալ.	20
3.	ՊԵԿ կողմից տրված պարգևատրումների վերաբերյալ	22
4.	ՊԵԿ աշխատաժամանակի հաշվարկի տեղեկագրերի տվյալների և ՍԷԿՏ տվյալների համադրման վերաբերյալ.....	26
5.	ՊԵԿ-ՀԲՄ-ԾՁԲ-19/1 գնման ընթացակարգի վերաբերյալ.....	28
6.	ՊԵԿ-ԳՀԾՁԲ-19/12 գնման ընթացակարգի վերաբերյալ.....	38
7.	ՊԵԿ-ԳՀԾՁԲ-19/5 գնման ընթացակարգի վերաբերյալ.....	41
8.	ՊԵԿ-ԳՀԾՁԲ-19/055 գնման ընթացակարգի վերաբերյալ.....	48
9.	ՊԵԿ-ԳՀԾՁԲ-19/1 գնման ընթացակարգի վերաբերյալ	58
10.	Հազուստ-հանդերձանքի գնումների վերաբերյալ.....	67
11.	Ակցիզային դրոշմանիշների և(կամ) դրոշմապիտակների վերաբերյալ.....	76
VI.	ԽԵՂԱԹՅՈՒՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ	87
1.	2019թ. աշխատանքի վարձատրության գծով ծախսի վերաբերյալ.	87

2.	Անընդմեջ հերթապահության ռեժիմով աշխատող (օրական 24 ժամ աշխատաժամանակի տեվողությամբ) ՊԵԿ աշխատողների կողմից կատարվող գիշերային աշխատանքների և հավելումների վերաբերյալ.	87
3.	ՊԵԿ աշխատաժամանակի հաշվարկի տեղեկագրերի տվյալների և ՍԷԿՏ տվյալների համադրման արդյունքների վերաբերյալ.	89
4.	ՊԵԿ-ՀԲՄ-ԾՁԲ-19/1 պայմանագրի կատարման վերաբերյալ	90
5.	ՊԵԿ-ԳՀԾՁԲ-19/12 պայմանագրի կատարման վերաբերյալ	93
VII.	ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՄԲ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԱՅԼ ՓԱՍՏԵՐ	95
VIII.	ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	95

**Հաշվեքննության
հիմքը**

ՀՀ հաշվեքննիչ պալատի 2020 թվականի մայիսի 26-ի թիվ 77-Ա որոշում:

**Հաշվեքննության
օբյեկտը**

ՀՀ պետական եկամուտների կոմիտե:

**Հաշվեքննության
առարկան**

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 2019 թվականի ֆինանսատնտեսական գործունեություն:

**Հաշվեքննության
առարկայի
չափանիշները**

«ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, «ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենք, «Գանձապետական համակարգի մասին» ՀՀ օրենք, «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենք, «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենք, «Գնումների մասին» ՀՀ օրենք, «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենք, ՀՀ կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի «ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1515 որոշում, ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշումը, ՀՀ կառավարության 2017 թվականի ապրիլի 13-ի N 390-Ն որոշում, «Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ստանդարտ», և այլ իրավական ակտեր:

**Հաշվեքննությունն
ընդգրկող
ժամանակաշրջանը**

2019 թվականի հունվարի 1-ից մինչև 2019 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ:

**Հաշվեքննության
կատարման ժամկետը**

2020 թվականի մայիսի 25-ից մինչև 2021 թվականի դեկտեմբերի 30-ը:

**Հաշվեքննության
մեթոդաբանությունը**

Հաշվեքննությունն իրականացվել է «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի, Հաշվեքննիչ պալատի ֆինանսական և համապատասխանության հաշվեքննության մեթոդաբանությունների համաձայն:

Իրականացվել է ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն, որի ընթացքում կիրառվել են զննում, դիտարկում, հարցում, արտաքին հաստատում, վերլուծական ընթացակարգ, վերահաշվարկ և

**Հաշվեքննությունն
իրականացրած
կառուցվածքային
ստորաբաժանում**

վերականառում ընթացակարգերը:

Հաշվեքննությունն իրականացվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի ութերորդ վարչության կողմից, որի աշխատանքները համակարգում է ՀՀ հաշվեքննիչ պալատի անդամ Արմեն Գևորգյանը:

II. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ՊԵԿ	ՀՀ պետական եկամուտների կոմիտե
ԿԱՐԳ	ՀՀ կառավարության 04.05.2017թ. «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգ
ՍԷԿՏ	Սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգի
ՕՐԵՆՔ	«Գնումների մասին» ՀՀ օրենք

III. ԱՄՓՈՓԱԳԻՐ

ՀՀ պետական եկամուտների կոմիտեում հաշվեքննությունն իրականացվել է 2020 թվականի մայիսի 26-ի թիվ 77-Ա որոշման հիմքով:

Հաշվեքննության առաջադրանքով նախատեսվել է իրականացնել ՊԵԿ-ի 2019 թվականի ֆինանսատնտեսական գործունեության ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն: Հաշվեքննությունն իրականացվել է 2020 թվականի մայիսի 25-ից մինչև 2021 թվականի դեկտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում: Հաշվեքննության ընթացքում կիրառվել են դիտարում, զննում, հարցում, արտաքին հաստատում, վերլուծական ընթացակարգ, վերահաշվարկ ընթացակարգերը:

Հաշվեքննության ընթացքում կազմվել է թվով մեկ արձանագրություն և «ՀՀ հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ծանոթացման և ստորագրման նպատակով ներկայացվել է հաշվեքննության օբյեկտի ղեկավարին, որի վերաբերյալ հաշվեքննության օբյեկտի կողմից ներկայացվել են առարկություններ և մեկնաբանություններ:

Հաշվեքննությունն իրականացվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի 8-րդ վարչության կողմից:

IV. ԱՆԿԱԽ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԾԻՔ

Մենք հաշվեքննության ենք ենթարկել ՊԵԿ-ի 2019 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսատնտեսական գործունեության վերաբերյալ ֆինանսական հաշվետվությունները (այսուհետ՝ ֆինանսական հաշվետվություն), որոնք մասնավորապես ներառում են ֆինանսական վիճակի մասին, ֆինանսական արդյունքների մասին, զուտ ակտիվներում փոփոխությունների մասին և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, բյուջեների կատարման վերաբերյալ հաշվետվությունները և ՊԵԿ-ի կողմից ծրագրերի կատարման համապատասխանությունը ՀՀ օրենքներին և այլ իրավական ակտերին, ինչպես նաև քաղաքացիաիրավական հարաբերությունների շրջանակներում կնքված այլ գործարքներով սահմանված չափանիշներին և պահանջներին:

Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

ՊԵԿ-ի ղեկավարությունը պատասխանատվություն է կրում Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման համար, ինչպես նաև ծրագրերի ՀՀ օրենքներին և այլ իրավական ակտերին, ինչպես նաև քաղաքացիաիրավական հարաբերությունների շրջանակներում կնքված այլ գործարքներով սահմանված չափանիշներին և պահանջներին համապատասխան իրականացնելու համար:

Ղեկավարությունը պատասխանատու է նաև այնպիսի ներքին հսկողության համակարգի համար, որը, ղեկավարության կարծիքով, թույլ կտա պատրաստել սխալների կամ խարդախության արդյունքում առաջացող էական խեղաթյուրումներից և/կամ անհամապատասխանություններից զերծ ֆինանսական հաշվետվություն:

Հաշվեքննողի պատասխանատվությունը

Մեր պատասխանատվությունն է անցկացված հաշվեքննության արդյունքում արտահայտել կարծիք՝ ֆինանսական հաշվետվությունների և օրենքներին ու իրավական ակտերին համապատասխանության վերաբերյալ:

Մենք հաշվեքննությունն անցկացրեցինք «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի, Աուդիտի բարձրագույն մարմինների միջազգային կազմակերպության «ISSAI 100 – Հանրային հատվածի աուդիտի հիմնարար սկզբունքները» «ISSAI 200 – Ֆինանսական աուդիտի հիմնարար սկզբունքները» և «ISSAI 400 –

Համապատասխանության աուդիտի իրականացման հիմնարար սկզբունքները» ստանդարտների համաձայն: Այդ մեթոդաբանություններով պահանջվում է, որ մենք հետևենք վարքագծի սկզբունքների պահանջներին և հաշվեքննությունը պլանավորենք և իրականացնենք այնպես, որպեսզի ձեռք բերենք ողջամիտ երաշխիք, որ ֆինանսական հաշվետվությունները զերծ են էական խեղաթյուրումներից, իսկ գործունեության իրականացումը՝ էական անհամապատասխանություններից:

Հաշվեքննության աշխատանքները ներառում են ֆինանսական և այլ հաշվետվություններում արտացոլված տեղեկատվության վերաբերյալ հաշվեքննության ապացույցի ձեռքբերում:

Հաշվեքննության ընթացակարգերի ընտրությունը կախված է հաշվեքննողի դատողությունից, ներառյալ՝ խարդախության, սխալի կամ անհամապատասխանության հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման և ՊԵԿ-ի կողմից գործունեության իրականացման էական անհամապատասխանության ռիսկերի գնահատումից:

Ռիսկերի նման գնահատում իրականացնելիս հաշվեքննողը դիտարկում է ներքին հսկողության համակարգը՝ կապված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման, ճշմարիտ ներկայացման և գործունեության իրականացման հետ՝ կազմելու տվյալ հանգամանքներին համապատասխան հաշվեքննության ընթացակարգեր, սակայն ոչ ներքին հսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու նպատակով:

Մենք գտնում ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան հաշվեքննության ապացույցներ՝ մեր կարծիքը հիմնավորելու համար:

Համապատասխանության հաշվեքննություն՝ ոչ լիարժեք եզրահանգման հիմքեր.

Սույն եզրակացության անհամապատասխանությունների վերաբերյալ գրառումներ բաժնում ներկայացված ՊԵԿ գործողությունները պարունակել են ՀՀ օրենսդրության պահանջների և քաղաքացիաիրավական հարաբերությունների շրջանակներում կնքված պայմանագրերի կատարման մասով էական անհամապատասխանություններ, որոնք հանգեցրել են նշված շրջանակների հաշվետվողականության և տեղեկատվության էական խեղաթյուրումների:

Կարծիք

• Ֆինանսական հաշվեքննություն

Մեր կարծիքով, ՊԵԿ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում 2019 թվականի բյուջեի կատարման արդյունքները, ֆինանսական վիճակը 2019 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտվող տարվա ֆինանսական արդյունքը և դրամական միջոցների հոսքերը, և էական խեղաթյուրումներ չեն հայտնաբերվել:

• Համապատասխանության հաշվեքննություն

Ոչ լիարժեք եզրահանգում

Մեր կարծիքով, բացառությամբ Ոչ լիարժեք եզրահանգման հիմքեր պարագրաֆում ներկայացված հարցերի հնարավոր ազդեցության, ՊԵԿ 2019 թվականի Ֆինանսատնտեսական գործունեությունը բոլոր էական առումներով համապատասխանում է ՀՀ օրենսդրության պահանջներին և քաղաքացիաիրավական հարաբերությունների շրջանակներում կնքված այլ գործարքներով սահմանված չափանիշներին ու պահանջներին և զերծ է էական խեղաթյուրումներից:

Արմեն Գևորգյան

ՀՀ հաշվեքննիչ պալատի անդամ

22 փետրվարի 2022 թվական

ՀՀ Հաշվեքննիչ Պալատ

Բաղրամյան փող. 19, ք.Երևան, Հայաստան

I. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

1. ՊԵԿ-ի կողմից 2018 թվականին աշխատավարձի գծով կատարված շուրջ 306.8 մլն դրամի ծախսերը ներկայացվել են 2019 թվականի հաշվետվություններում և վճարվել են 2019 թվականի բյուջեով սահմանված միջոցներից:
2. ՊԵԿ-ի 466 աշխատողներ 2019 թվականին աշխատել են անընդմեջ հերթապահության ռեժիմով (24 ժամ աշխատաժամանակի տևողությամբ), սակայն վերջիններիս համար չեն հաշվարկվել և չեն վճարվել օրենքով սահմանված գիշերային աշխատանքի համար հավելումներ:
3. 2019 թվականի ընթացքում ՊԵԿ-ում վճարվել են ընդհանուր 4.9 մլրդ դրամի ամսական պարգևատրումներ, որոնց համար առկա չեն եղել գնահատման մեխանիզմներ և սահմանված կանոնակարգեր:
4. Կիրառված ընտրանքի շրջանակներում ՍԷԿՏ-ի և ՊԵԿ-ի տվյալների համադրման արդյունքում արձանագրվել են ՊԵԿ-ի աշխատակիցների Հայաստանի Հանրապետությունից դուրս գտնվելու ժամանակահատվածում (չլինելով գործուղման մեջ) վերջիններիս ներկա հաշվառելու և 669.4 հազ. դրամի աշխատավարձ վճարելու տասնհինգ դեպք:
5. Ռենտգենյան զննող սարքավորումների տեխնիկական սպասարկման ծառայությունների ձեռք բերման ՊԵԿ-ՀԲՄ-ԾՁԲ-19/1 և ՊԵԿ-ԳՀԾՁԲ-19/12 գնման ընթացակարգերի շրջանակներում արձանագրվել են Կարգի 110-րդ կետի՝ պայմանագրի կամ դրա մի մասի հանձնման-ընդունման արձանագրությունը պատվիրատուին էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով տրամադրման պահանջների, կատարողին շուրջ 13 մլն դրամ ավելի և ՀՀ պետական բյուջե 19.2 մլն դրամ ոչ ռեզիդենտի շահութահարկի պակաս վճարումներ կատարելու, ինչպես նաև պայմանագրերը գործակալության միջոցով իրականացնելու վերաբերյալ անհամապատասխանություններ:
6. Այրում-Ջիլիզա մաքսային կետ-բաժնում շահագործվող Nuctech RF6010 մակնիշի բեռնատար գնացքներ զննող ռենտգենյան սարքավորումների տեխնիկական սպասարկման ծառայությունների ձեռքբերման գործընթացում ՊԵԿ կողմից չի ապահովվել պայմանագրով սահմանված առանձին պայմանների կատարման մասով փաստաթղթավորումը և դրանք կատարված լինելու հիմնավորումները, հաշվարկային փաստաթղթերի ժամանակին և պատշաճ ձևով ներկայացումը, ինչպես նաև Կարգի 110-րդ կետի՝ պայմանագրի կամ դրա մի մասի հանձնման-ընդունման արձանագրությունը պատվիրատուին էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով տրամադրման պահանջների կատարումը:

7. Nuctech MT1213 մակնիշի մոբիլ ռենտգենային զննող սարքավորման վերանորոգման աշխատանքների պայմանագրի շրջանակներում պայմանագրի արդյունքը պատվիրատուին հանձնելու փաստը ֆիկսելու մասին ակտը ՊԵԿ պատասխանատու անձի կողմից չընդունվելու և գնման հայտը նախագծած ներկայացուցչի կողմից այդ մասով բացասական եզրակացություն տալու հանգամանքներում, Կատարողին հետ է վերադարձվել պայմանագրի ապահովումը 500.0 հազ.դրամի չափով, իսկ սարքավորմանը պատճառված շուրջ 10.2 մլն. դրամի վնասը՝ վնասը պատճառած անձից փոխհատուցելու մասով ՊԵԿ կողմից չեն ձեռնարկվել անհրաժեշտ և համապատասխան գործողություններ:

8. ՊԵԿ Բագրատաշենի, Բավրայի և Գոգավան-Պրիվոլնոյեի մաքսային կետերի օդակարգավորման, օդափոխության, ջեռուցման համակարգի սարքավորումների վերանորոգման և պահպանման ծառայությունների ձեռքբերման ՊԵԿ-ԳՀԾՁԲ-19/1 գնման ընթացակարգի շրջանակներում արձանագրվել է Օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ մասով և 3-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջների (առանձին բնութագրեր ունեցող գնման առարկաները մեկ չափաբաժնում խմբավորվելու արգելքի և պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնման և նրանց միջև մրցակցության խրախուսման սկզբունքի), Օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի պահանջների (առաջարկվող գինը, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների արժեքից բացի, ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից) և Կարգի 21-րդ կետի պահանջների կատարման հետ:

9. Ակցիզային դրոշմանիշների և դրոշմապիտակների ձեռքբերման ՊԵԿ-ԷԱՃԱՇՁԲ-19/1-1 գնման ընթացակարգի շրջանակում արձանագրվել են անհամապատասխանություններ Օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջների (արգելվում է խմբավորել առանձին բնութագրեր ունեցող գնման առարկաները մեկ չափաբաժնում, բացառությամբ այն դեպքերի, երբ պատվիրատուն հիմնավորում է նման խմբավորման անհրաժեշտությունը) կատարման և պայմանագրով սահմանված և փաստացի կատարված աշխատանքների ծավալների համապատասխանության, հետևաբար նաև՝ Կատարողին վճարված գումարի համարժեքության հետ:

II. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

ՀՀ 2019 թվականի պետական բյուջեից ՊԵԿ-ի կողմից իրականացվող ծրագրերի տարեկան պլանը սահմանվել է 78,797,403.1 հազ. դրամ, ՀՀ կառավարության կողմից կատարված փոփոխությունների արդյունքում տարեկան ճշտված պլանը կազմել է 106,821,528.7 հազ. դրամ, ֆինանսավորումը՝ 105,088,002.4 հազ. դրամ, դրամարկղային ծախսը՝ 105,058,962.7 հազ. դրամ, իսկ փաստացի ծախսը՝ 104,293,344.9 հազ.դրամ:

ՀՀ 2019 թվականի պետական բյուջեից որպես բյուջետային գլխավոր կարգադրիչ ՊԵԿ-ի կողմից իրականացվող ծրագրերի տարեկան պլանը սահմանվել է 22,017,791.3 հազ. դրամ, ՀՀ կառավարության կողմից կատարված փոփոխությունների արդյունքում տարեկան ճշտված պլանը կազմել է 30,190,380.0 հազ. դրամ, ֆինանսավորումը՝ 28,852,200.3 հազ. դրամ, դրամարկղային ծախսը՝ 28,825,561.1 հազ. դրամ, իսկ փաստացի ծախսը՝ 28,059,943.3 հազ.դրամ:

2019 թվականին ՊԵԿ կողմից իրականացվող ծրագրերի կատարողականների ամփոփ ցուցանիշները հետևյալն են.

ԾՐԱԳԻՐ	Տարեկան պլան	ՀՀ կառավարության կողմից կատարված փոփոխություններ	Տարեկան ճշտված պլան	Փաստ	Կատարման %-ը տարեկան ճշտված պլանի նկատմամբ
ԸՆԴԱՄԵՆԸ, այդ թվում՝	78,797,403.1	28,024,125.6	106,821,528.7	105,058,962.7	98.3
Որպես բյուջետային գլխավոր կարգադրիչ, այդ թվում՝	22,017,791.3	8,172,588.7	30,190,380.0	28,825,561.1	95.5
1023 - Հարկային և մաքսային ծառայություններ	15,232,783.0	6,672,588.7	21,905,371.7	21,038,273.8	96.0
9006 - Աջակցություն ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից իրականացվող ծրագրերին	6,785,008.3	1,500,000.0	8,285,008.3	7,787,287.3	95.3
1015 Սոցիալական փաթեթների ապահովում	-	201,528.0	201,528.0	160,380.1	79.6
1102 Կենսաթոշակային ապահովություն	56,779,611.8	11,604,104.0	68,383,715.8	68,027,116.6	99.5
1205 Սոցիալական ապահովություն	-	8,045,904.9	8,045,904.9	8,045,904.9	100.0

«Սոցիալական փաթեթների ապահովում», «Կենսաթոշակային ապահովություն», «Սոցիալական ապահովություն» ծրագրերի բյուջետային հատկացումների գլխավոր կարգադրիչ (ԲԳԿ) հանդիսացել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, ՊԵԿ-ը սույն ծրագրերի մասով հանդիսացել է բյուջետային հատկացումների ստորադաս կարգադրիչ (ԲՍԿ):

2019 թվականի պետական բյուջեով «Սոցիալական փաթեթների ապահովում» ծրագրի պլանը սահմանվել է 201,528.0 հազ. դրամ, փաստացի ծախսը կազմել է 160,380.1 հազ.դրամ՝ 41,147.9 հազ.դրամով պակաս սահմանված ցուցանիշից: Ծրագրով նախատեսվել է ՊԵԿ-ի շուրջ 2779 աշխատողների ապահովել սոցիալական փաթեթներով, սակայն սոցիալական փաթեթով փաստացի ապահովվել է 2223 աշխատակից՝ 576-ով պակաս քան նախատեսվել էր: Տարբերությունը պայմանավորված է որոշ աշխատողների աշխատանքի ընդունման 6 ամիսը լրացած չլինելու և շահառուների ցուցակում չընդգրկվելու, ինչպես նաև մի շարք աշխատակիցների կողմից դիմումներ չներկայացվելու հանգամանքներով:

2019 թվականին «Կենսաթոշակային ապահովություն» ծրագրով (ճշտված պլանով) շուրջ 307,600 մասնակիցների համար նախատեսվել է կատարել 68,027,116.6 հազ. դրամի կուտակային կենսաթոշակների հատկացումներ (սոցիալական վճարներ), սակայն փաստացի մասնակիցների թիվը կազմել է 364,231՝ 56,631 մասնակցով ավելի քան նախատեսվել էր, իսկ փաստացի կատարված հատկացումների գումարը նախատեսվածից պակաս է կազմել 356,599.2 հազ. դրամով՝ կազմելով 68,027,116.6 հազ. դրամ:

Սոցիալական վճարների պարտավորությունների հաշվառումը իրականացվում է հարկային գործակալի (գործատուի) և սոցիալական վճարները ինքնուրույն կատարող անձանց կողմից ՊԵԿ ներկայացվող եկամտային հարկի և սոցիալական վճարի ամսական և տարեկան հաշվարկների տվյալների հիման վրա՝ վերջիններիս համար ՊԵԿ-ում վարվող անձնական հաշվի քարտերի միջոցով: Սոցիալական վճարի պարտավորությունները հաշվառվում են հաշվարկների ներկայացման օրով և մարվում հարկերի միսնական հաշիվ մուտքագրված միջոցներից մասնակիցների ռեեստրին փոխանցելու համար գործող գանձապետական կամուրջ հաշվին փոխանցելով: Յուրաքանչյուր փաստաթղթով (հաշվարկ, ճշտված հաշվարկ) առաջացած պարտավորությունը (այդ թվում՝ տույժերը) ամբողջությամբ մարվելուց հետո փաստաթուղթը համարվում է մարված և դրանով անհատականացված տվյալների (ՀԾՀ-ների) հիման վրա կամուրջ հաշվից սոցիալական վճարների գումարները փոխանցվում են մասնակիցների ռեեստրը վարողին՝ ՀՀ կենտրոնական դեպոզիտարիա: Նշված գործընթացը իրականացվում է «Հարկատու 3» համակարգից ամենօրյա պարբերականությամբ գեներացվող «007» հաշվետվության հիման վրա, որում ներկայացվում են տեղեկություններ յուրաքանչյուր ՀԾՀ-ի մասով փոխանցված (հաշվարկով առաջացած և ամբողջությամբ մարված) սոցիալական վճարի վերաբերյալ, միաժամանակ հաշվարկվում է նաև մասնակցի համար ՀՀ պետական բյուջեից կատարվող հատկացումների չափը: Համակարգի կողմից ինքնաշխատ գեներացվում է

վճարման հանձնարարական՝ «007» հաշվետվությամբ ձևավորված սոցիալական վճարի ամբողջական գումարի (գործատու+անձ+պետ.բյուջե) չափով:

Ներկայացված գորողությունները կատարվում են ինքնաշխատ՝ «Հարկատու 3» և գանձապետական համակարգերի միջոցով՝ դրանցով սահմանված ծրագրային կարգավորումներին համապատասխան:

«Սոցիալական ապահովություն» ծրագրի 2019 թվականի ճշտված պլանով «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքով սահմանված հատուցումների համար ՀՀ պետական բյուջեով նախատեսվել են 8,045,904.9 հազ. դրամի միջոցներ: Սույն ծրագրով փաստացի հատկացումների (դրոշմանիշային վճարների) գումարը կազմել է 8,045,904.9 հազ. դրամ:

Դրոշմանիշային վճարների հաշվարկները իրականացվում են ՊԵԿ տեղեկատվական տեխնոլոգիաների վարչության կողմից «Հարկատու 3» համակարգի միջոցով ամենօրյա պարբերականությամբ ձևավորվող տվյալների հիման վրա, իսկ դրանց փոխանցումը Հիմնադրամ իրականացվում է ՊԵԿ ֆինանսահաշվային վարչության կողմից: Հիմնադրամին ներկայացվում են նաև անհատականացված տեղեկությունները ըստ ՀՎՀՀ-ների և ՀԾՀ-ների:

2019 թվականի «Հարկային և մաքսային ծառայություններ» և «Աջակցություն ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից իրականացվող ծրագրերին» ծրագրերի կատարողականների ցուցանիշները հետևյալն են.

հազ.դրամ

Հոդված	Տարեկան պլան	Տարեկան ճշտված պլան	Ֆինանսա վորում	Փաստ	Պլանի մնացորդ
ԸՆԴԱՄԵՆԸ	22,017,791.3	30,190,380.0	28,852,200.3	28,825,561.1	1,338,179.8
Ընդամենը աշխատավարձ	11,548,123.0	14,458,195.1	14,458,195.1	14,458,195.1	0.0
Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	9,000,218.2	9,580,218.2	9,580,218.2	9,580,218.2	0.0
Պարգևատրումներ	2,547,904.8	4,877,976.9	4,877,976.9	4,877,976.9	0.0
Էներգետիկ ծառայություններ	448,452.5	440,452.8	396,964.4	396,964.4	43,488.4
Կոմունալ ծառայություններ	18,324.0	24,746.0	23,925.3	23,925.3	820.7
Կապի ծառայություններ	134,971.1	112,971.1	89,462.1	89,462.1	23,509.0
Ապահովագրական ծախսեր	11,280.0	11,280.0	5,850.0	5,850.0	5,430.0
Գույքի և սարքավորումների վարձակալություն	101,896.9	176,784.9	117,980.9	117,980.9	58,804.1
Արտագերատեսչական ծախսեր	58,320.0	58,320.0	32,380.4	32,380.4	25,939.6
Ներքին գործուղումներ	149,016.9	111,576.9	106,431.8	104,187.3	5,145.1
Արտասահմանյան գործուղումների գծով ծախսեր	131,000.0	132,516.5	127,198.2	127,198.2	5,318.3
վարչական ծառայություններ	36,000.0	36,000.0	31,900.7	31,900.7	4,099.3
Համակարգչային ծառայություններ	825,284.7	684,805.2	637,172.3	637,172.3	47,632.9
Տեղեկատվական ծառայություններ	19,600.0	19,394.0	11,695.2	11,695.2	7,698.8
Կառավարչական ծառայություններ	32,300.0	32,300.0	13,247.3	13,247.3	19,052.7
Կենցաղային և հանրային սննդի ծառայություններ	2,000.0	2,000.0	457.9	457.9	1,542.1
Ներկայացուցչական ծախսեր	60,500.0	60,500.0	36,106.7	36,106.7	24,393.4
Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	332,120.0	554,202.7	499,028.2	499,028.2	55,174.5
Մասնագիտական ծառայություններ	8,000.0	13,150.0	7,208.0	7,208.0	5,942.0
Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում	52,000.0	94,417.6	77,376.3	77,376.3	17,041.3
Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում	61,050.0	32,900.0	28,928.3	28,928.3	3,971.8
Գրասենյակային նյութեր և հագուստ	293,151.6	255,846.4	207,461.8	207,461.8	48,384.7
Տրանսպորտային նյութեր	154,159.0	222,825.9	217,437.8	217,437.8	5,388.1

Առողջապահական և լաբորատոր նյութեր	3,000.0	3,000.0	1,227.0	1,227.0	1,773.0
Կենցաղային և հանրային սննդի նյութեր	18,030.4	35,333.4	20,637.2	20,637.2	14,696.2
Հատուկ նպատակային այլ նյութեր	214,869.0	150,201.8	99,364.7	99,364.7	50,837.1
Պարտադիր վճարներ	18,400.0	25,490.7	10,172.4	9,894.4	8,227.6
Այլ ծախսեր	895,162.8	58,000.0	56,685.6	56,685.6	8,405.1
Ակցիզային դրոշմանիշների ձեռքբերում	1,499,760.0	1,897,200.0	1,897,135.2	1,897,135.2	64.8
Դրոշմապիտակների ձեռքբերման ծախսեր	3,026,400.0	4,462,800.0	4,462,781.4	4,462,781.4	18.6
Հարկային և մաքսային ծառայող. վերապատրաստման ծառայություններ	188,680.1	188,680.1	188,680.1	164,563.4	0.0
Փորձաքննությունների ծառայություններ	10,847.3	10,847.3	10,811.3	10,811.3	36.0
ՀՀ պետական կառ. մարմինների կողմից դիմումներ, հայցադիմումներ, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքներ ներկայացնելիս օրենքով սահմանված վճարումներ	0.0	165,097.0	165,097.0	165,097.0	0.0
Այլ մեքենաներ և սարքավորումներ	615,000.0	618,100.0	589,112.4	589,112.4	28,987.7
Վարչական սարքավորումներ	316,152.0	286,284.0	193,444.4	193,444.4	92,839.6
Աճեցվող ակտիվներ	5,960.0	5,960.0	5,800.0	5,800.0	160.0
Ոչ նյութական հիմնական միջոցներ	2,000.0	103,670.0	101,670.0	101,670.0	2,000.0
Շենքերի և շինությունների շինարարություն	425,495.2	4,400,075.2	3,778,654.6	3,778,654.6	621,420.6
Նախագծահետազոտական ծախսեր	2,875.0	37,625.0	9,520.0	9,520.0	28,105.0
Շենքերի և շինությունների ձեռք բերում	0.0	2,233.0	0.0	0.0	2,233.0
Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	285,609.8	182,912.4	134,998.4	134,998.4	47,914.0
Հող	12,000.0	21,685.0	0.0	0.0	21,685.0
Պահուստային միջոցներ	830,072.1	0	0	0	

Վ. ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ

1. 2019թ. աշխատանքի վարձատրության գծով ծախսի կատարողականի վերաբերյալ.

ՊԵԿ 2019 թվականի «Հիմնարկի կատարած բյուջետային ծախսերի և բյուջետային պարտքերի մասին» և 2019 թվականի «Հիմնարկի արտաբյուջետային միջոցների գոյացման և տնօրինման մասին» հաշվետվություններով աշխատանքի վարձատրություն հողվածով ծախսերի ծրագրային և փաստացի ցուցանիշները հետևյալն են.

հազ.դրամ

	Տարեկան ճշտված պլան	Դրամարկղի ծախսը	Փաստացի ծախս	Դեբիտորակ ան պարտք առ 31.12.2019թ.	Կրեդիտորա կան պարտք առ 01.01.2019թ.	Կրեդիտորա կան պարտք առ 31.12.2019թ.
Ընդամենը, այդ թվում՝	14,458,195.1	14 458 195.1	14,464,082.7	5,199.5	312,276.9	16,551.9
Աշխատանքի վարձատրություն բյուջեի միջոցներից, այդ թվում՝	8,826,480.7	8,826,480.7	8,832,368.3	3,796.3	1,706.3	11,390.2
-Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	8,114,990.4	8,114,990.4	8,120,878.0	3,796.3	1,706.3	1,1390.2
-Քաղաքացիական, դատական և պետական այլ ծառայողների պարգևատրում	711,490.3	711,490.3	711,490.3			
Աշխատանքի վարձատրություն արտաբյուջեի միջոցներից, այդ թվում՝	5,631,714.4	5,631,714.4	5,631,714.4	1,403.2	310,570.6	5,161.7
-Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	1,465,227.8	1,465,227.8	1,465,227.8	1,403.2	5,273.1	5,161.7
- Հարկային և մաքսային մարմինների աշխատողների պարգևատրում	4,166,486.6	4,166,486.6	4,166,486.6		305 297,5	

ՊԵԿ-ի աշխատավարձի հաշվարկների անալիտիկ տվյալների և տրված հաշվապահական ձևակերպումների, ինչպես նաև դեբիտորական և կրեդիտորական պարտքերի, վճարված աշխատավարձի և աշխատավարձի փաստացի ծախսի տվյալների վերլուծությունից և համադրումից պարզվում է, որ արտաբյուջետային միջոցներից աշխատավարձի փաստացի ծախսի մասով առկա է 306.8 մլն դրամի չափով անհամապատասխանություն, ինչը հիմնականում պայմանավորված է 2018 թվականին աշխատավարձի գծով կատարված շուրջ 305.3 մլն դրամի ծախսերը (աշխատողների աշխատավարձից հաշվարկված հարկային պարտավորությունները) 2019 թվականին ներկայացնելու և 2018 թվականի ծախսերի մասով առաջացած կրեդիտորական պարտավորությունները 2019 թվականի բյուջեի միջոցներից վճարելու հանգամանքով:

Համաձայն ՀՀ կառավարության 2018 թվականի հունիսի 15-ի «Բյուջեների կատարման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 706-Ն որոշման.

- 26-րդ կետի՝ բյուջեների ծախսերը (ելքերը) նախատեսվում են տվյալ տարվա բյուջեներով, իսկ իրավաբանական անձի դեպքում՝ նախահաշվով և կատարվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով,
- 28-րդ կետի՝ բյուջեներով հաստատված ծախսերի մեծությունը տվյալ ծախսատեսակի կատարման համար սահմանված առավելագույն չափն է:

Սույնով առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 2018 թվականի հունիսի 15-ի N 706-Ն որոշման 26-րդ և 28-րդ կետերի պահանջների կատարման հետ, որով 2018 թվականին աշխատավարձի գծով սահմանված ծախսերից ավելի կատարված շուրջ 306.8 մլն դրամի ծախսերը ներկայացվել են ՊԵԿ-ի 2019 թվականի հաշվետվություններում և վճարվել են 2019 թվականի բյուջեներով սահմանված միջոցներից:

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը

2019 թվականին ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) կողմից աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարների մասով հաշվարկվել և ձևակերպվել է 14,157,601.5 հազ. դրամ փաստացի ծախս: Նշված գումարն իր մեջ ներառում է բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման՝ «4111 - աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ», «4113 - քաղաքացիական, դատական և պետական այլ ծառայողների պարգևատրում», «4114 - հարկային և մաքսային մարմինների աշխատողների պարգևատրում» հոդվածներով ձևակերպված ծախսերը:

2019 թվականին «Հիմնարկի կատարած բյուջետային ծախսերի և բյուջետային պարտքերի մասին» և «Հիմնարկի արտաբյուջետային միջոցների գոյացման և տնօրինման մասին» հաշվետվություններում ներկայացվել է Կոմիտեի կողմից կատարված դրամարկղային ծախսերը՝ 14,458,195,1 հազ. դրամ, որից՝ 8,826,480.7 հազ. դրամը պետական բյուջեի միջոցներից, իսկ 5,631,714.4 հազ. դրամն արտաբյուջետային միջոցներից: Դրամարկղային և փաստացի ծախսերի հաշվարկային տարբերությունը պայմանավորված է 2019 թվականի տարեսկզբում առկա կրեդիտորական, ինչպես նաև տարեվերջի դեբիտորական և կրեդիտորական պարտքերով, մասնավորապես՝ 2018 թվականի դեկտեմբեր ամսվա վերջին վճարված աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարների մասով առաջացել են ՀՀ հարկային օրենսգրքով (այսուհետ՝ Օրենսգիրք) սահմանված հարկային պարտավորություններ, որոնք Օրենսգրքի 158-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն (հարկային գործակալն Օրենսգրքով սահմանված կարգով հաշվարկված՝ պետական բյուջե վճարման ենթական գումարները) ՀՀ պետական բյուջե է վճարում մինչև հաշվետու ժամանակաշրջանին (տվյալ դեպքում՝ հաշվետու ամիսը) հաջորդող ամսվա 20-ը ներառյալ: Առաջացած պարտավորություններն արտացոլված են Կոմիտեի և՛ 2018, և՛ 2019 թվականների «Հիմնարկի դեբիտորական, կրեդիտորական պարտքերի և պահեստավորված միջոցների մասին» տարեկան հաշվետվություններում և «Ծախսերի նախահաշիվների կատարման հաշվեկշռում»: Միաժամանակ, 2019 թվականին, սահմանված ժամկետում, Կոմիտեի կողմից պետական բյուջեի նկատմամբ հաշվարկված պարտավորությունները վճարվել են ՀՀ պետական բյուջե:

Հաշվեքննողների մեկնաբանությունը

Հաշվեքննության օբյեկտի կողմից ըստ էության առարկություններ չեն ներկայացվել:

Առաջարկություն հաշվեքննության օբյեկտին

Յուրաքանչյուր տարվա ծախսերն իրականացնել տվյալ տարվա բյուջեով նախատեսված միջոցների հաշվին և տվյալ ծախսատեսակի կատարման համար սահմանված առավելագույն չափերի սահմաններում:

2. Անընդմեջ հերթապահության ռեժիմով աշխատող (օրական 24 ժամ աշխատաժամանակի տեվողությամբ) ՊԵԿ աշխատողների կողմից կատարվող գիշերային աշխատանքների և հավելումների վերաբերյալ.

Հաշվեքննության ընթացքում պարզվեց, որ ՊԵԿ-ի 466 աշխատողներ 2019 թվականին աշխատել են անընդմեջ հերթապահության ռեժիմով (24 ժամ աշխատաժամանակի տեվողությամբ), սակայն վերջիններիս համար չեն հաշվարկվել և չեն վճարվել օրենքով սահմանված գիշերային աշխատանքի համար հավելումներ:

Համաձայն ՀՀ կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի «Առանձին կատեգորիայի աշխատողների՝ օրական 24 ժամ աշխատաժամանակի տեվողությամբ պայմանավորված աշխատանքների ցանկը սահմանելու մասին» թիվ 1223-Ն որոշմամբ սահմանված հավելվածի՝ ՊԵԿ աշխատակազմի նախաբացթողումային հսկողության վարչության բաժինների, բաժանմունքների և հերթափոխերի ծառայողների, մաքսային կետերի բաժանմունքի պետերի, գլխավոր մաքսային տեսուչների, ավագ մաքսային տեսուչների, մաքսային տեսուչների և անցագրային կետերի հերթապահների աշխատանքը կարող է կատարվել անընդմեջ հերթապահության ռեժիմով՝ օրական 24 ժամ աշխատաժամանակի տեվողությամբ:

Համաձայն «Պետական պաշտոններ եվ պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասի՝ արտաժամյա, գիշերային ժամերին, հանգստյան, տոնական օրերին աշխատելու համար պետական պաշտոն և պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց տրվում է հավելում Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով սահմանված նվազագույն չափերով, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ և 3.1-ին մասերով նախատեսված դեպքերի:

Համաձայն ՀՀ աշխատանքային օրենսգրքի 184-րդ հոդվածի 1-ին մասի՝ գիշերային աշխատանքի յուրաքանչյուր ժամի համար վճարվում է հավելում՝ ժամային դրույքաչափի 30 տոկոսից ոչ պակաս չափով:

Առկա է անհամապատասխանություն «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասի և ՀՀ աշխատանքային օրենսգրքի 184-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների կատարման հետ:

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը

Կոմիտեի հերթապահության ռեժիմով աշխատողների գիշերային ժամերին կատարված աշխատանքի վարձատրության համար ՀՀ պետական բյուջեով միջոցներ չեն նախատեսվել և նշված աշխատակիցներին նման հավելումներ չեն վճարվել:

Միաժամանակ հայտնում ենք, որ Կոմիտեն պատրաստվում է հանդես գալ օրենսդրական փոփոխության նախաձեռնությամբ՝ համաձայն որի Կոմիտեի հարկային և մաքսային ծառայության պաշտոններ զբաղեցնող համապատասխան աշխատակիցներին արտաժամյա, գիշերային ժամերին, հանգստյան, տոնական օրերին աշխատելու համար հավելավճարներ չեն տրվի:

Հաշվեքննողների մեկնաբանությունը

Հաշվեքննության օբյեկտի կողմից առարկություններ չեն ներկայացվել, միաժամանակ՝ ընդունելի չէ ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված պահանջների չկատարումը օրենսդրական փոփոխություններով հանդես գալու նախաձեռնության կամ նման ցանկության արտահայտման պատճառաբանմամբ:

Առաջարկություն հաշվեքննության օբյեկտին

Կատարել վերահաշվարկ չհաշվարկված և չվճարված աշխատավարձի հավելումների մասով՝ պահպանելով ՀՀ գործող օրենսդրության պահանջները և ապահովել անընդմեջ հերթապահության ռեժիմով աշխատող աշխատակիցներին օրենքով գիշերային աշխատանքի համար հասանելիք հավելումների տրամադրումը:

3. ՊԵԿ կողմից տրված պարգևատրումների վերաբերյալ

ՊԵԿ-ի 2019 թվականի աշխատանքի վարձատրության գծով ծախսը կազմել է 14,458,195.1 հազ.դրամ, որից պարգևատրումների գումարը կազմել է **5,598,363.7** հազ. դրամ: Պարգևատրումների գումարից 711,490.3 հազ.դրամը կազմել է կիսամյակային հաշվետվությունների՝ աշխատողների կատարողականի գնահատման և դրա հիման վրա տրված պարգևատրումների գումարը, իսկ 4,886,873.4 հազ.դրամը՝ ամսական և միանվագ կարգով տրված պարգևատրումների գումարը:

Համաձայն «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի.

- հոդված 3-ի 1-ին մասի 3-րդ կետի՝ պարգևատրումը սահմանվում է որպես՝ միանվագ վճար, որը պետական պաշտոն և պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձին տրվում է ծառայողական գործունեության (կատարողականի) գնահատման և(կամ) հատուկ **առաջադրանքների** և(կամ) **որակյալ աշխատանքների կատարման** համար,
- հոդված 9-ի՝ պետական ծառայողին պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող կամ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված համապատասխան լիազորություններով օժտված այլ պաշտոնատար անձը հատուկ **առաջադրանքների և(կամ) որակյալ աշխատանքի կատարման համար** պետական ծառայողներին կարող է պարգևատրել աշխատավարձի ֆոնդի տնտեսված միջոցներից և (կամ) օրենքով չարգելված այլ աղբյուրներից:

Համաձայն ՀՀ աշխատանքային օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի՝ պարգևատրումը օրենքով, այլ նորմատիվ իրավական ակտերով, կոլեկտիվ կամ աշխատանքային պայմանագրերով, գործատուի իրավական ակտով սահմանված կարգով և չափերով **աշխատանքային պարտականությունները պատշաճ կատարելու, երկարամյա աշխատանքի և ծառայության, ծառայողական պարտականությունները գերազանց կատարելու համար ամսական, եռամսյակային, կիսամյակային պարբերականությամբ կամ մեկանգամյա վճարվող վարձատրությունն է:**

ՀՀ օրենսդրությամբ պարգևատրումների մասով սահմանված կարգավորումներից հետևում է, որ պարգևատրումներ տալու համար հիմք կարող են հանդիսանալ աշխատողների կողմից աշխատանքի պատշաճությամբ և/կամ գերազանցությամբ, հատուկ առաջադրանքների և(կամ) որակյալ աշխատանքի կատարումը, ինչպես նաև աշխատողի երկարամյա աշխատանքը ու ծառայությունը՝ կատարված աշխատանքի գնահատականի կամ կատարողականի արդյունքների հիման վրա:

Համաձայն հաշվեքննության ընթացքում հաշվեքննողների կողմից ՊԵԿ-ից պահանջված տեղեկությունների (Գրություն 12.03.2021թ. ՀՊԵ-ՎԱ-58)՝ կապված **ամսական պարզևատրումների** համար պարզևատրում տալու իրավասություն ունեցող պաշտոնատար անձանց կողմից տրված պարզևատրումների մասով կիրառված կանոնակարգերի և սահմանված գնահատման մեխանիզմների վերաբերյալ, ՊԵԿ-ի կողմից պարզաբանվել է, որ ամսական պարզևատրումների տրման համար ՊԵԿ-ը սահմանված կարգ չունի, ՊԵԿ-ի աշխատակիցները պարզևատրվել են ՊԵԿ նախագահի և գլխավոր քարտուղարի հրամանների հիման վրա:

Հաշվեքննության ընթացքում ուսումնասիրվել են նաև ՊԵԿ կողմից իրականացված վարչարարության արդյունքում կազմված վարչական ակտերի դեմ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով, ինչպես նաև դատարան ներկայացված և բավարարված բողոքարկումները:

2019 թվականին դատական ակտերով անվավեր են ճանաչվել ՊԵԿ վարչական ակտեր, որի հիմքով ՀՀ պետական բյուջեի միջոցներից ծախսվել է շուրջ 165.1 մլն դրամ գումար:

Համաձայն ՊԵԿ-ի պաշտոնական կայք էջի տեղեկությունների՝ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի կողմից բավարարվել է թվով 270 դիմում-բողոք: Նշված բավարարված կամ մասնակի բավարարված բողոքները վերաբերվել են՝ 157 դեպքով ՀԴՄ օգտագործման կանոնների խախտումներին, 40 դեպքով բյուջեի ստուգման ակտի խախտումներին և այլն:

Բողոքները հիմնականում վերաբերվել են խախտումների կամ փաստական հանգամանքների, ինչպես նաև խախտումների հատկանիշների՝ վարչարարություն իրականացրած ՊԵԿ պաշտոնատար անձանց կողմից ոչ ճիշտ կամ խեղաթյուրված արձանագրումներին, վարչարարության ընթացքում օրենսդրությամբ սահմանված նորմերը չպահպանելու, իրավախախտման փաստը չհաստատվելու կամ չապացուցելու դեպքերին:

Այս առումով հատկանշական են ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի կողմից բողոքների բավարարման դեպքերը, երբ ՊԵԿ-ն ինքն իր պաշտոնատար անձանց գործողությունները որակել է որպես ոչ իրավաչափ:

Վերը նշված վարչարարական խախտումների դեպքերով պարբերական ամփոփումների, այդ խախտումների պատճառների, նպաստող հանգամանքների, դրանք թույլ տված պաշտոնատար անձանց պարզելու, նրանց մասնագիտական համապատասխանության հարցերը քննարկելու, կազմակերպչական եզրակացություններ կատարելու, կարգապահական պատասխանատվության միջոցներ կիրառելու, պաշտոնատար անձանց կողմից պետությանը պատճառված վնասը վերականգնելու միջոցներ ձեռնարկելու փոխարեն, այդ պաշտոնատար անձանց,

նույնիսկ նրանց կողմից ոչ իրավաչափ վարչարարություն իրականացնելու փաստերը հաստատող ակտերի ընդունման ամիսների համար, հատկացվել են դրամական պարգևատրումներ:

Մինչդեռ ՊԵԿ-ի ղեկավարման գործառույթների շրջանակներում ներառված են կանոնադրության այնպիսի դրույթներ, ինչպիսիք են՝ ՊԵԿ նախագահին օրենքով և ՊԵԿ կանոնադրությամբ նախատեսված դեպքերում նշանակում և ազատում է կոմիտեի աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում է խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր (ՊԵԿ կանոնադրության 17-րդ կետի 6-րդ ենթակետ), ՊԵԿ կառուցվածքային ստորաբաժանումների կողմից իրականացվող գործառույթների՝ ՀՀ օրենքներին և այլ իրավական ակտերին, ընդունված ստանդարտներին, ՀՀ ԿԱ ՊԵԿ խնդիրներին և քաղաքականությանը համապատասխանության գնահատումը (ներքին աուդիտի վարչության կանոնադրություն):

Վերը շարադրված փաստերի պայմաններում ոչ իրավաչափ վարչարարություն իրականացրած պաշտոնատար անձինք 2019թ. ընթացքում ստացել են ամսական պարգևատրումներ, ինչը չի բխում օրենսդրությամբ աշխատողին պարգևատրելու օրենքով սահմանված տրամաբանությունից:

Առկա է անհամապատասխանություն «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքով և ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված՝ պարգևատրումներ տալու պահանջների կատարման հետ: ՊԵԿ կողմից 2019 թվականին ամսական պարգևատրումների հանրագումարը կազմել է մոտ 4.9 մլրդ դրամ:

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը

Հարկային մարմնի յուրաքանչյուր հարկային ծառայող մեկ ամսվա և առավել ևս մեկ տարվա կտրվածքով կատարում է բազմաթիվ աշխատանքներ (այդ թվում՝ ռիսկերի տեսողական նույնականացումներ, վերլուծություններ, թեմատիկ ստուգումներ, արտագնա ուսումնասիրություններ և այլ աշխատանքներ), հետևաբար հաշվեքննությունն իրականացրած անձանց նման գնահատականը կամ դատողությունը (այն է՝ «.....ոչ իրավաչափ վարչարարություն իրականացրած պաշտոնատար անձինք 2019 թվականի ընթացքում ստացել են ամսական պարգևատրումներ, ինչը չի բխում օրենսդրությամբ աշխատողին պարգևատրելու օրենքով սահմանված տրամաբանությունից») կարծում ենք կարող էր համարվել տրամաբանական և համակողմանի ուսումնասիրված, եթե ուսումնասիրվեին տվյալ հարկային ծառայողների կողմից համապատասխան ամիսներում կատարված բոլոր աշխատանքները և գնահատվեր ոչ իրավաչափ վարչարարության կշիռը ընդհանուր աշխատանքներում:

Հաշվեքննողների մեկնաբանությունը

Հաշվեքննությամբ արձանագրվել է, որ ամսական պարզևատրումներ տալու համար ՊԵԿ-ում առկա չեն կանոնակարգեր և գնահատման մեխանիզմներ, տրված պարզևատրումների համար ՊԵԿ կողմից չի ներկայացվել որևէ գնահատում կամ հիմնավորում, իսկ ոչ իրավաչափ վարչարարություն իրականացրած պաշտոնատար անձանց պարզևատրում ստանալու հանգամանքը ներկայացվել է որպես պատշաճությամբ և/կամ գերազանցությամբ կատարված աշխատանքին հակառակ իրողություն, ինչը համապատասխան գնահատումների բացակայության պարագայում առավել կարևորում և հիմնավորում է պարզևատրում տալու համար համապատասխան չափորոշիչների, աշխատանքի գնահատման կանոնակարգի սահմանման անհրաժեշտությունը և այդ հիմնավորումների փաստաթղթավորումը:

Առաջարկություն հաշվեքննության օբյեկտին

Պարզևատրումների տրամադրման համար սահմանել աշխատանքի գնահատման չափորոշիչներ և մեխանիզմներ, համապատասխան փաստաթղթավորման ու վճարման ընթացակարգ ապահովաող կանոնակարգ:

4. ՊԵԿ աշխատաժամանակի հաշվարկի տեղեկագրերի տվյալների և ՍԷԿՏ տվյալների համադրման վերաբերյալ.

ՊԵԿ 2019 թվականի աշխատողների աշխատաժամանակի հաշվարկի ճշտությունը և համապատասխանությունը պարզելու նպատակով, կիրառված ընտրանքի շրջանակներում, սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգից (այսուհետ՝ ՍԷԿՏ) և ՊԵԿ-ից ստացված տվյալների, ինչպես նաև ՊԵԿ աշխատաժամանակի հաշվարկի տեղեկագրերի տվյալների համադրման արդյունքում տասնհինգ դեպքով արձանագրվել են անհամապատասխանություններ, համաձայն որոնց ՍԷԿՏ տվյալներով Հայաստանի Հանրապետությունից դուրս գտնվելու ժամանակահատվածում ՊԵԿ-ի աշխատակիցներին (չլինելով գործուղման մեջ) աշխատաժամանակի հաշվառման տեղեկագրերում հաշվառել են որպես ներկա և վճարել 669.4 հազ. դրամի աշխատավարձ:

Միաժամանակ՝ վերը նշված աշխատակիցներին անհարգելի բացակայության պայմաններում վճարվել է շուրջ 3,436.4 հազ. դրամ պարգևատրում:

Հաշվեքննության ընթացքում ՍԷԿՏ-ից ստացված տվյալները ներկայացվել հաշվեքննության թիվ 1 արձանագրությանը կից (էլեկտրոնային կրիչով)՝ ՊԵԿ-ի կողմից համապատասխան ուսումնասիրություններ և վերլուծություններ կատարելու համար:

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը

Նշված աշխատակիցների մասով համապատասխան ստորաբաժանումների ղեկավարներից կպահանջվեն պարզաբանումներ, որի արդյունքներից ելնելով կներկայացվեն ճշտված աշխատաժամանակի հաշվարկի տեղեկագրեր, որոնց հիման վրա էլ կկատարվեն աշխատավարձերի վերահաշվարկման և ավելի վճարված գումարների հետ գանձման գործընթացներ (անհրաժեշտության դեպքում նաև դատական կարգով):

Ինչ վերաբերվում է «անհարգելի բացակայության պայմաններում» վճարված պարգևատրման գումարներին, ապա հայտնում ենք, որ պարգևատրման գումարներն ուղղակիորեն կապված չեն տվյալ ամսվա ընթացքում աշխատած օրերի հետ, այլ դրանք տրվել են նշված աշխատակիցների կողմից կատարված հատուկ և (կամ) որակյալ աշխատանքների կատարման համար:

Հաշվեքննողների մեկնաբանությունը

Հաշվեքննությամբ անհարգելի բացակայության պայմաններում տրված պարզևատրումներին անդրադառնալը կարգապահական և ներքին վերահսկողության խնդիրներին է վերաբերվում, տրված պարզևատրումների վերաբերյալ խնդիրները ներկայացվել են այլ բաժիններով:

Առաջարկություն հաշվեքննության օբյեկտին

Ներքին վերահսկողության արդյունավետության բարձրացման նկատառումներից ելնելով վերանայել աշխատաժամանակի հաշվարկի կիրառվող հսկողական մեխանիզմները:

5. ՊԵԿ-ՀԲՄ-ԾՁԲ-19/1 գնման ընթացակարգի վերաբերյալ

ՊԵԿ Բագրատաշեն, Բավրա, Գոգավան-Պրիվոլնոյե և Մեղրու մաքսային կետերում տեղադրված RAPISCAN EAGLE GANTRY մակնիշի ռենտգենյան զննող սարքավորումների տեխնիկական սպասարկման ծառայությունների ձեռք բերման նպատակով ՊԵԿ-ը 2019 թվականի մարտի 14-ին էլեկտրոնային գնումների հարթակի «Armeps» համակարգում հրապարակել է բաց մրցույթի հրատապ հայտարարություն, ծառայության նախահաշվային գինը կազմել է 411,428,571 ՀՀ դրամ:

Մրցույթի հայտերի բացման նիստը տեղի է ունեցել 2019թ. ապրիլի 1-ին՝ հայտ ներակացվել է միայն մեկ կազմակերպության՝ Արաբական Միացյալ Էմիրությունների Շարժա Աէրոպորտ միջազգային ազատ տնտեսական գոտում գրանցված Արեմպա Ինթերնեյշնլ ՖԶԵ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) կողմից, որն էլ ճանաչվել է հաղթող մասնակից: 2019թ. ապրիլի 9-ին Ընկերության հետ կնքվել է ՊԵԿ-ՀԲՄ-ԾՁԲ-19/1 պայմանագիրը՝ 411,180,000 դրամ գումարով: Արեմպա Ինթերնեյշնլ ՖԶԵ ընկերության անունից լիազորված անձ հանդես է եկել Ն.Ա.-ն:

Ծառայությունների մատուցման տեխնիկական բնութագրով մասնավորապես նախատեսվել է իրականացնել սարքավորումների կանխարգելիչ տեխնիկական ստուգումներ, խափանումների դեպքերում վերանորոգումներ, կատարողի կողմից մատուցվող ծառայության մեկնաբանում և մատուցվող ծառայության անհրաժեշտության ու պատճառա-հետևանքային կապի բացատրություն Պատվիրատուին, կատարողի կողմից թեժ գծի ապահովում՝ շուրջօրյա հեռախոսակապ (նաև ինտերնետի միջոցով) խորհրդատվության նպատակով, ծրագրային ապահովումների թարմացում:

Ծառայությունների մատուցումը իրականացվել է Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 250 օրացուցային օրվա ընթացքում՝ 2019 թվականի ապրիլի 9-ից 2019 թվականի դեկտեմբերի 14-ը:

2019 թվականի ապրիլի 9-ից մինչև հոկտեմբերի 31-ը ընկած ժամանակաշրջանի ծառայությունների համար պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների հանձնման-ընդունման թվով երեք արձանագրությունները Ընկերության կողմից ՊԵԿ-ին ներկայացվել են 2019 թվականի նոյեմբերի 7-ին, իսկ 2019 թվականի նոյեմբերի 1-ից դեկտեմբերի 15-ը ժամանակահատվածի ծառայության հանձնման-ընդունման արձանագրությունը ներկայացվել է 2019 թվականի դեկտեմբերի 16-ին: Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների հանձնման-ընդունման բոլոր արձանագրությունները ներկայացվել են թղթային կրիչներով:

Ընկերության կողմից կազմված աշխատանքների կատարման ակտերում որպես Ընկերության ներկայացուցիչներ հանդես են եկել և փաստաթղթերը ստորագրել են Գ.Հ.-

ն, Գ.Գ.-ն, Կ.Բ.-ն, Վ.Փ.-ն և Վ.Տ.-ն: Ընկերության կողմից լիազորված և կոնտակտային անձ է հանդիսացել Ն.Ա.-ն:

Ընկերության կողմից մատուցված ծառայությունների համար ներկայացվել են հետևյալ հաշվարկային փաստաթղթերը.

Հ/հ	Հաշիվ-Ապրանքագիր			
	Համար	Ամսաթիվ	Ծառայությունների մատուցման ժամանակահատված	Գումար (ԱՄՆ դոլար)
1	SIN/	08/07/19	09.04.2019-30.06.2019	240,000.0
2	SINAIS0119-0266	01/08/19	01.07.2019-31.07.2019	85,000.0
3	SINAIS0119-0369	04/11/19	01.08.2019-31.10.2019	255,000.0
4	SINAIS0119-0410	13/12/19	01.11.2019-15.12.2019	121,000.0
Ընդամենը				701,000.0

Արձանագրություն պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների հանձնման-ընդունման			
Համար	Ամսաթիվ	Ծառայությունների մատուցման ժամանակահատված	Գումար (<< դրամ)
1	08/07/19	09.04.2019-30.06.2019	144,000,000
2	01/08/19	01.07.2019-31.07.2019	49,470,000
3	04/11/19	01.08.2019-31.10.2019	144,000,000
4	13/12/19	01.11.2019-15.12.2019	70,218,000
Ընդամենը			407,688,000

ՊԵԿ կողմից կատարվել են հետևյալ վճարումները.

Վճարում Կատարողին			Վճարված ոչ ռեզ. շահութահարկ		Ընդամենը (<< դրամ)
Ամսաթիվ	Գումարը (ԱՄՆ դոլար)	Համարժեքը << դրամով	Ամսաթիվ	Գումարը (<< դրամ)	
17.07.2019	240,000	115,560,000	24.07.2019	23,112,000	138,672,000
15.08.2019	85,000	40,842,500	19.08.2019	8,168,500	49,011,000
12.11.2019	255,000	122,910,000	14.11.2019	24582000	147,492,000
17.12.2019	121,000	58,346,200	19.12.2019	11669240	70,015,440
Ընդամենը	701,000	337,658,700		67,531,740	405,190,440

Ոչ ռեզիդենտի շահութահարկը հաշվարկվել է կատարողին վճարված գումարների նկատմամբ հարկի 20 տոկոս դրույքաչափի կիրառմամբ:

Արձանագրված անհամապատասխանություններ.

1. Համաձայն Կարգի 110-րդ կետի՝ Էլեկտրոնային եղանակով իրականացվող գնումների դեպքում պայմանագրի կատարման արդյունքի ընդունման հետ կապված գործողություններն իրականացվում են Էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով, մասնավորապես՝ պայմանագրի կամ դրա մի մասի ընդունման նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունը պայմանագիր կնքած անձը պատվիրատուի ղեկավարին տրամադրում է Էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով:

Համաձայն մրցույթի հրավերի, ինչպես նաև կնքված պայմանագրի 3-րդ կետի պահանջների՝ մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքստոլ փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ Էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է Էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին: Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և Էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

Պայմանագրի շրջանակներում Կատարողի կողմից պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքստելու վերաբերյալ ակտերում բացակայում են փաստաթղթերի կազմման ամսաթվերը, իսկ Կատարողի կողմից Պատվիրատուին պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների հանձնման-ընդունման արձանագրությունների փոխանցումը, ինչպես նաև Պատվիրատուի կողմից հանձնման-ընդունման արձանագրությունների և եզրակացությունների Կատարողին տրամադրումը չի կատարվել Էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով:

Առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 04.05.2017թ. N526-Ն որոշման 110-րդ կետի և Պայմանագրի 3.1, 3.2 և 3.3 կետերի պահանջների կատարման հետ՝ ՊԵԿ-ի կողմից չի ապահովվել օրենսդրությամբ և պայմանագրով ծառայությունների հանձնման-ընդունման փաստաթղթերին և կարգին ներկայացվող պահանջների կատարումը:

2. Համաձայն Կարգի 32-րդ կետի 6-րդ ենթակետի, կնքվելիք պայմանագիրը կարող է իրականացվել գործակալության կամ ենթակապալի պայմանագիր կնքելու միջոցով: Գործակալության կամ ենթակապալի պայմանագրի կողմ չի կարող հանդիսանալ տվյալ ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած այլ մասնակիցը: Եթե պայմանագիրն իրականացվելու է գործակալության կամ ենթակապալի միջոցով, ապա մասնակիցը հայտով ներկայացնում է նաև գործակալության կամ ենթակապալի պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները: Նույն պահանջները սահմանված են ինչպես մրցույթի հրավերում, այնպես էլ կնքված պայմանագրում:

Պայմանագրի շրջանակներում ՊԵԿ-ում Ընկերության կողմից որպես ներկայացուցիչներ և կոնտակտային անձ հանդես են եկել և փաստաթղթերը ստորագրել են Ն.Ա.-ն, Գ.Հ.-ն, Գ.Գ.-ն, Կ.Բ.-ն, Վ.Փ.-ն և Վ.Տ.-ն, որոնք հանդիսանում են «Կոնսել» ՍՊԸ-ի աշխատողներ:

ՊԵԿ-ի և Ընկերության միջև հաղորդակցությունը ըստ ներկայացված տեղեկությունների իրականացվել է գնման հայտը նախագծած ՊԵԿ մաքսային հսկողության վարչության մաքսային գործառնությունների մոնիտորինգի բաժնի պետ Արտակ Գալստյանի և Ընկերության ներկայացուցիչ Ն.Ա.-ի միջոցով: ՊԵԿ-ի կողմից առաջադրված խնդիրները և այլ հաղորդակցությունները ներկայացվել են Ն.Ա.-ի@consel էլեկտրոնային փոստին: ՊԵԿ-ի կողմից հանձնման-ընդունման արձանագրությունները ստորագրվել և համապատասխան եզրակացությունները տրվել են Արտակ Գալստյանի կողմից:

Ներկայացված տեղեկատվությունը փաստում է, որ ծառայությունները փաստացի մատուցվել են «Կոնսել» ՍՊԸ-ի կողմից, որի մասին ՊԵԿ-ի պատասխանատու անձիք ունեցել են բավարար տեղեկություններ:

Սույնով առկա է անհամապատասխանություն Կարգի 32-րդ կետի 6-րդ ենթակետով և մրցույթի հրավերով պայմանագիրը գործակալության կամ ենթակապալի միջոցով իրականացվելու դեպքում սահմանված պահանջների կատարման հետ:

3. Համաձայն պայմանագրի՝ 250 օրվա համար սարքավորումների սպասարկման ծառայության արժեքը կազմել է 411,180,000 դրամ: Մեկ օրվա ծառայության գումարը կազմում է 1,644,720 ՀՀ դրամ:

Համաձայն պայմանագրի կատարման վերաբերյալ պատասխանատու ստորաբաժանման կողմից տրված եզրակացությունների և մաքսային կետ-բաժինների աշխատակիցների կողմից հաստատված ակտերի, ծառայությունների վերաբերյալ տրվել են դրական եզրակացություններ, իսկ կատարողի կողմից սպասարկումը իրականացվել է բարեխղճորեն և պատշաճ:

Հաշվեքննողների կողմից պահանջված պարզաբանմանը այն մասին, թե ինչ հաշվարկների հիման վրա է կատարվել ներկայացված ժամանակահատվածների ծառայության արժեքների և ոչ ռեզիդենտի շահութահարկի գումարների որոշումը (գրություն 22.02.2021թ. ՀՊԵ-ՎԱ-42), ՊԵԿ-ի կողմից ներկայացվել է, որ ոչ ռեզիդենտի շահութահարկը հաշվարկվել է ներկայացված հաշիվ-ապրանքագրի (ինվոյսի) գումարի նկատմամբ 20% դրույքաչափ կիրառելով, սակայն չի պարզաբանվել պատասխանատու ստորաբաժանման կողմից ծառայության արժեքի՝ ինվոյսի կամ հանձնման-ընդունման արձանագրության գումարի որոշման սկզբունքը կամ հաշվարկը:

Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի՝ առանց մշտական հաստատության Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող և (կամ) առանց մշտական հաստատության Հայաստանի Հանրապետության աղբյուրներից եկամուտ ստացող ոչ ռեզիդենտ կազմակերպությունների համար շահութահարկի հարկման բազան համարվում է Հայաստանի Հանրապետության աղբյուրներից ստացվող համախառն եկամուտը:

Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի 125-րդ հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետի՝ վերը նշված ծառայությունների մասով առանց մշտական հաստատության Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողի շահութահարկը հաշվարկվում է հարկման բազայի նկատմամբ կիրառելով 20 տոկոս դրույքաչափ:

Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի 130-րդ հոդվածի 4-րդ մասի՝ առանց մշտական հաստատության Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողներին վճարված եկամուտների գծով ձևավորվող հարկման բազայի, ինչպես նաև մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողներին վճարված՝ մշտական հաստատությանը չվերագրվող եկամուտների գծով ձևավորվող հարկման բազայի մասով շահութահարկը հաշվարկվում է Օրենսգրքի 125-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված դրույքաչափերով:

Ընկերության կողմից հանձնման-ընդունման արձանագրություններով և հաշիվ-ապրանքագրերով ներկայացված ծառայության գումարների միջև անհամապատասխանությունները, ինչպես նաև պայմանագրով սահմանված գնային կարգավորումներով հաշվարկները հետևյալն են.

Ծառայությունների մատուցման ժամնակահատված	Հաշիվ ապրանքագրով ներկայացված		Հանձնման-ընդունման արձանագրությամբ ներկայացված գումարը (ՀՀ դրամ)
	Գումարը ԱՄՆ դոլարով	Համարժեքը ՀՀ դրամով	
09.04.2019-30.06.2019	240,000.0	114,506,400	144,000,000
01.07.2019-31.07.2019	85,000.0	40,443,850	49,470,000
01.08.2019-31.10.2019	255,000.0	121,405,500	144,000,000
01.11.2019-15.12.2019	121,000.0	57,778,710	70,218,000
Ընդամենը	701,000.0	334,134,460	407,688,000

ՀՀ դրամ

Ծառայության գնի հաշվարկ ըստ պայմանագրի					
Ժամնակահատված	Օրեր	Ծառայության մեկ օրվա արժեքը (411,180,000:250օր)	Ծառայության գումար	Ոչ ռեզիդենտի շահութահարկ	Ընկերությանը վճարման ենթակա գումար
09.04.2019-30.06.2019	82	1,644,720	134,867,040	26,973,408	107,893,632
01.07.2019-31.07.2019	31	1,644,720	50,986,320	10,197,264	40,789,056
01.08.2019-31.10.2019	92	1,644,720	151,314,240	30,262,848	121,051,392
01.11.2019-15.12.2019	45	1,644,720	74,012,400	14,802,480	59,209,920
Ընդամենը	250		411,180,000	82,236,000	328,944,000

Համադրման աղյուսակ

ՀՀ դրամ

Հաշվարկ ըստ պայմանագրի		Հանձնման-ընդունման արձանագրություններով ընդունված ծառայության գումար	Տարբերություն (2-3)
Ժամնակահատված	Ծառայության գումար		
1	2	3	4
09.04.2019-0.06.2019	134,867,040	144,000,000	-9,132,960
01.07.2019-31.07.2019	50,986,320	49,470,000	1,516,320
01.08.2019-31.10.2019	151,314,240	144,000,000	7,314,240
01.11.2019-15.12.2019	74,012,400	70,218,000	3,794,400
Ընդամենը	411,180,000	407,688,000	3,492,000

Ներկայացված տվյալներից և հաշվարկներից ակնհայտ է, որ Ընկերության կողմից ՊԵԿ-ին ներկայացված հանձնման-ընդունման արձանագրությունների գումարները չեն համապատասխանում պայմանագրով սահմանված ծառայության գումարին:

Համաձայն պայմանագրի կատարման վերաբերյալ պատասխանատու ստորաբաժանման կողմից տրված դրական եզրակացությունների, մատուցված ծառայության արժեքը պետք է կազմեր 411,180,000 ՀՀ դրամ, իսկ ՊԵԿ-ի կողմից որպես հարկային գործակալ ոչ ռեզիդենտի շահութահարկի գումարի նվազեցումից հետո Ընկերությանը վճարման ենթակա գումարը կկազմեր 328,944,000 ՀՀ դրամ, մինչդեռ Ընկերությանը մատուցված ծառայության դիմաց վճարում կատարելու համար պատասխանատու ստորաբաժանման կողմից ՊԵԿ ֆինանսահաշվային վարչություն ներկայացվել են Ընկերության կողմից դուրս գրված 701,000.0 ԱՄՆ դոլարի հանրագումարի հաշիվ-ապրանքագրեր, որոնց նկատմամբ վարչության կողմից կիրառվելով օրենսդրությամբ սահմանված 20 տոկոս դրույքաչափի ՀՀ պետական բյուջե է փոխանցվել 67,531,740 դրամ ոչ ռեզիդենտի շահութահարկ:

Արդյունքում, Ընկերությանը վճարվել է 8,714,700 ՀՀ դրամով ավելի գումար, իսկ ՀՀ պետական բյուջե վճարվել է 14,704,260 ՀՀ դրամով պակաս ոչ ռեզիդենտի շահութահարկի գումար:

Սույնով առկա է անհամապատասխանություն պայմանագրով սահմանված ծառայության արժեքի և փաստացի ընդունված ծառայության հաշվարկային փաստաթղթերով ներկայացված գումարների, ինչպես նաև ՊԵԿ-ի կողմից ՀՀ պետական բյուջե փաստացի վճարված ոչ ռեզիդենտի շահութահարկի գումարի և ՀՀ հարկային օրենսգրքով հարկային գործակալի կողմից ոչ ռեզիդենտի շահութահարկի պարտավորությունների հաշվարկման և վճարման մասով սահմանված պահանջների կատարման մասով:

Հաշվեքնության օբյեկտի արձագանքը

1. Պայմանագրի կողմ հանդիսացող «Արեմպա Ինտերնեյշնլ» ՍՊԸ ՖԶԵ-ն հանդիսանալով ոչ ռեզիդենտ ընկերություն armeps համակարգի միջոցով տեխնիկական խնդիրների պատճառով հնարավորություն չի ունեցել Պատվիրատուին ներկայացնել հանձնման-ընդունման արձանագրությունը, որի մասին հայտնել է Պատվիրատուին:

Վերոգրյալից ելնելով Պատվիրատուն ևս չի կարողացել ծառայության մասին եզրակացությունը տալ տվյալ համակարգի միջոցով:

Տեխնիկական խնդիրը լուծելու համար մասնակիցը դիմել է նաև լիազոր մարմնին, վերջինս խնդրին լուծում է տվել և դրանից հետո վերոգրյալ ընկերությունը ծառայության հանձնում-ընդունումն իրականացնում է armeps համակարգի միջոցով՝ ապահովելով պայմանագրի 3-րդ կետի պահանջները:

Միաժամանակ հայտնում ենք, որ դա չի հանգեցրել որևէ կողմի շահերի խախտմանը կամ գնումների մասին օրենսդրության նպատակների խաթարմանը:

2. Հայտնում ենք, որ վերոգրյալ ընթացակարգին հայտ է ներկայացրել միայն «Արեմպա Ինթերնեյշնլ» ՍՊԸ ՖԶԵ ընկերությունը, որի հետ գնումների օրենսդրությանն համապատասխան կնքվել է պայմանագիր (պայմանագրում հստակ նշված է, որ կողմ է հանդիսանում միայն վերոգրյալ ընկերությունը):

Կատարող ընկերության հետ կապն իրականացվել է, որպես պատասխանատու ստորաբաժանում՝ Կոմիտեի մաքսային հսկողության վարչությունը, մաքսային գործառնությունների մոնիտորինգի բաժնի միջոցով: Կատարող ընկերության՝ «Արեմպա Ինտերնեյշնլ» ՍՊԸ ՖԶԵ-ի լիազորված անձ հանդես է եկել Ն.Ա-ն, որը Կոմիտե էր ներկայացրել համապատասխան լիազորագիր: Աշխատանքային փուլերում խնդիրների վերաբերյալ տեղեկատվությունը փոխանցվել է նրան ինչպես@consel.am էլեկտրոնային հասցեին, այնպես էլ անձամբ Ն.Ա-ին զանգահարելով:

Աշխատանքների իրականացման, մասնագետների այցի վերաբերյալ մեզ տեղեկացվում էր Ն.Ա-ի կողմից:

Ծառայության մատուցման ընթացքում աշխատանքներին մասնակցել են և հաշվեքննիչ պալատի կողմից նշված անձինք, որոնց մասին տեղեկատվությունը հաշվեքննիչ պալատի աշխատակիցներին տրամադրվել էր Կոմիտեի կողմից, և արտերկրից ժամանած մասնագետներ, և ՀՀ այլ քաղաքացիներ (խառատներ, փականագործներ, եռակցողներ, կռունկավարներ, կոնդիցիոներների մասնագետներ և այլն):

Կոմիտեի հետ պայմանագրում ֆիքսված էր, որ կատարող ընկերությունը պարտավոր է ապահովել սարքավորման անխափան աշխատանքը, անսարքություններն էլ վերացնել սեղմ ժամկետներում:

Մատուցվող ծառայության կազմակերպման և իրականացման համար պատասխանատու էր «Արեմպա Ինտերնեյշնլ» ՍՊԸ ՖԶԵ-ն, և ինչ միջոցներով, ինչ ուժերի

ներգրավմամբ նա կկազմակերպեր և կիրականացներ ծառայության մատուցումը դա իր ռիսկն էր և պայմանագրով ստանձնած պարտականությունը:

Հանձնման-ընդունման արձանագրությունները ստորագրվել են օրենսդրությամբ սահմանված կարգով՝ համապատասխան անձանց կողմից:

Պայմանագրում և գնումների օրենսդրությամբ որևէ սահմանափակում չկա լիազոր ներկայացուցչի վերաբերյալ, հետևաբար պայմանագրի կառավարման փուլում՝ աշխատանքային փուլում՝ ընկերության անունից հանդես եկող լիազոր անձի կամ ենթակապալի գոյության վերաբերյալ պատվիրատուի որևէ դիտարկում դուրս է իր իսկ իրավասությունների շրջանակից:

Հետևաբար չկա անհամապատասխանություն 04.05.2017 թվականի ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 32-րդ կետի 6-րդ ենթակետով և մրցույթի հրավերով պայմանագիրը գործակալության կամ ենթակապալի միջոցով իրականացվելու դեպքում սահմանված պահանջների կատարման հետ:

3. 2019 թվականին Ընկերությանը վճարած ավելի գումարների վերադարձի համար Կոմիտեի կողմից կկատարվի վերահաշվարկ, որից հետո Ընկերության և Կոմիտեի միջև կկնքվի վճարման ժամանակացույց՝ ավելի փոխանցված գումարները ՀՀ պետական բյուջե վերադարձնելու նպատակով:

Հաշվեքննողների մեկնաբանությունը

Հաշվեքննության օբյեկտի առարկություններ ընդունելի չեն, մասնավորապես՝

- պայմանագրի կատարման արդյունքի ընդունման հետ կապված կարգավորումները սահմանված են Կարգի 110-րդ կետով, ինչը Կատարողի կողմից չի պահպանվել, հետևաբար ներկայացված առարկությունը առ այն, որ «դա չի հանգեցրել որևէ կողմի շահերի խախտմանը կամ գնումների մասին օրենսդրության նպատակների խաթարմանը» չի համապատասխանում իրականությանը: Միաժամանակ նշենք, որ Կատարողը գնման գործընթացին մասնակցել է էլեկտրոնային գնումների հարթակի՝ «Armeps» համակարգի միջոցով, իսկ ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության հետ կնքված պայմանագրի շրջանակներում Արեմպա Ինթերնեյշնլ ՖԶԵ ընկերությունը 2019 թվականին պայմանագրի կամ դրա մի մասի հանձնման-ընդունման արձանագրությունը Պատվիրատուին ներկայացրել է «PPCM» համակարգի միջոցով, հետևաբար՝ հանձնման-ընդունման ակտերը տեխնիկական խնդիրներով պայմանավորված էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով չներկայացնելու պատճառաբանությունը հիմնավոր չեն,

- ներկայացված առարկությունը առ այն, որ «չկա անհամապատասխանություն Կարգի 32-րդ կետի 6-րդ ենթակետով և մրցույթի հրավերով պայմանագիրը գործակալության կամ ենթակապալի միջոցով իրականացվելու դեպքում սահմանված պահանջների կատարման հետ» չի համապատասխանում իրականությանը, քանի որ պայմանագիրը փաստացի իրականացվել է այլ կազմակերպության աշխատակիցների միջոցով, ինչը փաստվում է նաև Արեմպա Ինթերնեյշնլ ՖՁԵ ընկերության կողմից 2019 թվականի փետրվարի 24-ին (մինչև մրցույթի հայտերի բացումը և պայմանագրի կնքումը) Կոնսել ՍՊԸ-ի աշխատակիցներին տրված լիազորագրի բովանդակությունից, որտեղ հղում է կատարվում Արեմպա Ինթերնեյշնլ ՖՁԵ-ի և Կոնսել ՍՊԸ-ի միջև կնքված պայմանագրին: Հաշվեքննության արձանագրությամբ ներկայացվել է, որ ՊԵԿ-ի համապատասխան աշխատակիցները այս փաստերի մասին ունեցել են բավարար տեղեկություններ, սակայն չեն ապահովել Կարգով սահմանված պահանջների կատարումը:

Առաջարկություն հաշվեքննության օբյեկտին

Ոչ ռեզիդենտ կազմակերպությունների հետ կնքվող պայմանագրերի շրջանակներում կազմվող փաստաթղթերում (հաշիվ-ապրանքագիր կամ այլ) նախատեսել հնարավոր հարկման ազդեցության մասով տվյալների ներկայացում, ինչի արդյունքում յուրաքանչյուր գործարքին վերաբերվող հաշվարկային փաստաթղթով կարտացոլվեն ինչպես գործարքի ընդհանուր գումարը, այնպես էլ՝ հարկային գործակալի կողմից պահվող հարկի և մատակարար կազմակերպությանը վճարման ենթակա գույք գումարներները:

6. ՊԵԿ-ԳՀԾՁԲ-19/12 գնման ընթացակարգի վերաբերյալ.

ՀՀ ՊԵԿ Բազրատաշենի, Բավրայի, Գոգավան-Պրիվոլնոյեի, Մեղրիի մաքսային կետ-բաժիններում և Արևմտյան մաքսատուն-վարչությունում տեղադրված թեթև մարդատար մեքենաներ գննող Rapiscan CO2, ֆիզիկական անձանց գննող Rapiscan Secure 1000 մակնիշների և Rapiscan 600, Rapiscan 500 սերիաների ռենտգենյան գննող սարքավորումների տեխնիկական սպասարկման ծառայությունների ձեռքբերման նպատակով ՊԵԿ-ը 2019 թվականի հունիսի 12-ին էլեկտրոնային գնումների հարթակի «Armeps» համակարգում հրապարակել է գնանշման հարցման հայտարարություն: Ծառայության նախահաշվային գինը կազմել է 132,716,000 ՀՀ դրամ:

Մրցույթի հայտերի բացման նիստը տեղի է ունեցել 2019թ. հունիսի 20-ին՝ հայտ ներկայացվել է միայն մեկ կազմակերպության՝ Արաբական Միացյալ Էմիրությունների Շարժա Աէրոպորտ միջազգային ազատ տնտեսական գոտում գրանցված Արեմպա Ինթերնեյշնլ ՖԶԵ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) կողմից, որն էլ ճանաչվել է հաղթող մասնակից: 2019թ. հուլիսի 12-ին Ընկերության հետ կնքվել է ՊԵԿ-ԳՀԾՁԲ-19/12 պայմանագիրը 132,702,000 դրամ գումարով: Արեմպա Ինթերնեյշնլ ՖԶԵ ընկերության անունից լիազորված անձ հանդես է եկել Ն.Ա-ն:

Ծառայություններ տեխնիկական բնութագրով մասնավորապես նախատեսվել է իրականացնել սարքավորումների կանխարգելիչ տեխնիկական ստուգումներ, խափանումների դեպքերում վերանորոգումներ, կատարողի կողմից մատուցվող ծառայության մեկնաբանում և մատուցվող ծառայության անհրաժեշտության ու պատճառա-հետևանքային կապի բացատրություն Պատվիրատուին, կատարողի կողմից թեժ գծի ապահովում՝ շուրջօրյա հեռախոսակապ (նաև ինտերնետի միջոցով) խորհրդատվության նպատակով, ծրագրային ապահովումների թարմացում:

Ծառայությունները ն մատուցումը իրականացվել Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 150 օրացուցային օրվա ընթացքում՝ 2019 թվականի հուլիսի 12-ից 2019 թվականի դեկտեմբերի 9-ը:

2019 թվականի դեկտեմբերի 16-ին Ընկերության կողմից ՊԵԿ ներկայացվել է 2019 թվականի հուլիսի 16-ից մինչև դեկտեմբերի 12-ը ընկած ժամանակահատվածի հաշիվ-ապրանքագիրը, պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի արդյունքը պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ ակտը: Բոլոր փաստաթղթերը ներկայացվել են թղթային կրիչներով:

Հաշիվ ապրանքագրով և ծառայության հանձնման-ընդունման արձանագրությամբ ներկայացվել են հետևյալ տվյալները.

Փաստաթուղթ	Համար	Ամսաթիվ	Ծառայությունների մատուցման ժամանակահատված	Գումար	
				ԱՄՆ դոլար	ՀՀ դրամ (համարժեքը դրամով)
հաշիվ-ապրանքագիր	SINAIS0119-0409	13/12/19	16.07.2019-12.12.2019	228,950.0	109,371,705
հանձնման-ընդունման արձանագրություն	1	13/12/19	16.07.2019-12.12.2019	-	132,702,000

ՊԵԿ-ի կողմից կատարվել են հետևյալ վճարումները.

Վճարում Ընկերությունը			ՀՀ պետական բյուջե՝ ոչ ռեզ. շահութահարկ		Ընդամենը դրամ
Ամսաթիվ	Գումարը ԱՄՆ դոլար	Համարժեքը ՀՀ դրամով	Ամսաթիվ	Գումար	
17/12/19	\$228,950.0	110,399,690	18/12/19	22,079,938	132,479,628

Արձանագրված անհամապատասխանություններ.

Սույն գնման ընթացակարգով առկա են նույն անհամապատասխանությունները, ինչ որ արձանագրվել է սույն արձանագրության 3.1.2 կետով՝ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-19/12 գնման ընթացակարգի վերաբերյալ ներկայացված նյութով: Մասնավորապես առկա են հետևյալ անհամապատասխանությունները՝

- ՀՀ կառավարության 04.05.2017թ. N526-Ն որոշման 110-րդ կետի և Պայմանագրի 3.1, 3.2 և 3.3 կետերի պահանջների պահպանման հետ՝ ՊԵԿ-ի կողմից չի ապահովվել օրենսդրությամբ և պայմանագրով ծառայությունների հանձնման-ընդունման փաստաթղթերին և կարգին ներկայացվող պահանջների կատարումը,

- Կարգի 32-րդ կետի 6-րդ ենթակետով և մրցույցի հրավերով պայմանագիրը գործակալության կամ ենթակապալի միջոցով իրականացվելու դեպքում սահմանված պահանջների կատարման միջև,

- պայմանագրով սահմանված կարգով որոշվող, ինչպես նաև պայմանագրի կամ դրա մի մասի հանձնման-ընդունման արձանագրությամբ փաստացի մատուցված ծառայության և ՊԵԿ կողմից հիմք ընդունված ծառայության արժեքների միջև, որի արդյունքում ՊԵԿ կողմից Ընկերությանը վճարվել է 4,238,090 ՀՀ դրամ ավելի գումար, իսկ ՀՀ պետական բյուջե վճարման ենթակա շահութահարկի գծով պարտավորությունը կատարվել է 4,460,462 ՀՀ դրամով պակաս:

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը

Հաշվեքննության օբյեկտի կողմից ներկայացված առակությունները ունեն սույն եղրակացության անհամապատասխանությունների վերաբերյալ գրառումների բաժնի 5-րդ կետով՝ ՊԵԿ-ՀԲՄ-ԾՁԲ-19/1 գնման ընթացակարգի վերաբերյալ ներկայացված առարկության նույն բովանդակությունը:

Հաշվեքննողների մեկնաբանությունը

Հաշվեքննության օբյեկտի առարկություններ ընդունելի չեն:

7. ՊԵԿ-ԳՀԾՁԲ-19/5 գնման ընթացակարգի վերաբերյալ

ՊԵԿ Այրում-Ջիլիզա մաքսային կետ-բաժնում շահագործվող Nuctech RF6010 մակնիշի բեռնատար գնացքներ զննող ռենտգենյան սարքավորումների տեխնիկական սպասարկման ծառայությունների ձեռքբերման նպատակով գնումների armeps էլեկտրոնային հարթակում ՊԵԿ կողմից 28.03.2019թ.-ին հրապարակվել է ծառայությունների ձեռքբերման թիվ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-19/5 գնանշման հարցման հրավերը:

Գնման գործընթացը կազմակերպվել է Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա: Մրցույթին մասնակցել է մեկ կազմակերպություն՝ Չինաստանի Ժաղովրդավարական Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող Նուքթեչ Քոմփանի ընկերությունը, որը և մրցույթի արդյունքում ճանաչվել է հաղթող և 29.04.2019թ.-ին վերջինիս հետ կնքվել է թիվ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-19/5 պայմանագիրը՝ 45,300.0 հազ. դրամ պայմանագրային գումարով: 10.06.2019թ. կողմերի միջև կնքվել է պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին թիվ 1 համաձայնագիրը, որով սահմանվել է պայմանագրով նախատեսված պայմանները տարածել 2019թ. ապրիլի 29-ից ծագած հարաբերությունների վրա: Պայմանագրով ծառայությունների մատուցման ժամկետը սահմանվել է պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից հաշված առավելագույնը 200 օրվա ընթացքում՝ մինչև 14.11.2019 թվականը:

Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսվել է ձեռք բերել ռենտգենային զննող սարքավորումների սպասարկման ծառայություններ (ՀՀ ՊԵԿ Այրում-Ջիլիզա մաքսային կետ-բաժնում շահագործվող Nuctech RF6010 մակնիշի բեռնատար գնացքներ զննող ռենտգենյան սարքավորումների տեխնիկական սպասարկման ծառայություններ), ինչով մասնավորապես նախատեսվել է իրականացնել կանխարգելիչ տեխնիկական ստուգումներ, սարքավորման խափանման դեպքում վերանորոգումներ, մատուցվող ծառայության մեկնաբանում Պատվիրատուին, մատուցվող ծառայությունների անհրաժեշտության և պատճառա-հետևանքային կապի բացատրություն Պատվիրատուին, ծրագրային ապահովումների թարմացումներ, փոխարինման ենթակա պահեստամասերի մատակարարում, թեժ գծի ապահովում՝ շուրջօրյա հեռախոսակապ (նաև ինտերնետի միջոցով):

Արձանագրված անհամապատասխանություններ

1. ՀՀ հաշվեքննիչ պալատի 22.02.2021թ. թիվ ՀՊԵ-ՎԱ-41 և ի լրումն 12.03.2021թ. թիվ ՀՊԵ-ՎԱ-58 գրություններին ի պատասխան՝ կապված պայմանագրի շրջանակներում կատարողի թեժ գծի, կոնտակտային անձերի և կատարողի հետ պայմանագրի շրջանակներում հաղորդակցությունների վերաբերյալ պահանջված տեղեկությունների, ՊԵԿ կողմից որպես կոնտակտային անձանց վերաբերյալ տեղեկություններ ներկայացվել է՝ W.Z.-ն (հեռախոսահամար), Սևակ (հեռախոսահամար) և Խաչիկ (հեռախոսահամար), միաժամանակ տրվել է հետևյալ բացատրությունը.

«գործնական քայլերի ընթացքում ընտրվել է հեռախոսակապը, քանի որ ի սկզբանե միշտ քննարկման հարցեր, ճշտումներ են առաջանում անսարքությունների ճշգրտման, հնարավոր պատճառների, օպերատորի կողմից իրականացված քայլերի մասին և շատ հաճախ հեռախոսակապով համագործակցմամբ վերացվում են խնդիրները: Մեկ կոնկրետ անսարքության վերացման գործընթացում կարող են իրականացվել բազմաթիվ հեռախոսազանգեր՝ մասնագետների կողմից ամեն նշվող քայլերի իրականացումից և արդյունքի գրանցումից հետո: Հաճախ կազմակերպվում է նաև տեսակապ: Հեռախոսակապերի քանակն ու տևողությունը չի ֆիքսվում»:

Պայմանագրով (տեխնիկական բնութագրով) սահմանվում է, որ կատարողը ի թիվս կանխարգելիչ տեխնիկական ստուգման և վերանորոգման աշխատանքների, պետք է իրականացնի նաև մատուցվող ծառայության մեկնաբանում, դրանց անհրաժեշտության և պատճառա-հետևանքային կապի բացատրություն, ինչը ՊԵԿ-ի կողմից որևէ կերպ չի փաստաթղթավորվել կամ այլ կերպ չի արձանագրվել: Սարքավորման շահագործման ընթացքում ի հայտ եկած խափանումների և կանոնավոր սպասարկման մասով կատարողի կողմից կատարված աշխատանքների, ինչպես նաև դրա մասով կատարողի հետ հաղորդակցությունների փաստեր ՊԵԿ կողմից հաշվեքննողներին չեն ներկայացվել, ավելին՝ կատարողի կոնտակտային անձանց վերաբերյալ ՊԵԿ կողմից տրամադրված տեղեկությունները անձը նույնականացնող տվյալներ չեն պարունակել (ազգանուն, անձնագրային տվյալներ, ՀԾՀ):

Համաձայն պայմանագրի 3.1 կետի, մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը, իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը, մինչդեռ 29.04.2019-31.07.2019թթ., 01.08.2019-31.10.2019թթ. և 01.11.2019-14.11.2019թթ. ժամանակահատվածների մատուցված ծառայությունների հաշիվ ապրանքագրերը, պայմանագրի արդյունքը պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ ակտերը և պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների հանձնման-ընդունման արձանագրությունները

ՊԵԿ ներկայացվել են 21.11.2019թ-ին՝ մատուցված ծառայությունների նշված ժամանակահատվածներից ամիսներ և պայմանագրով սահմանված ծառայությունների մատուցման ժամկետից (պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից հաշված առավելագույնը 200 օր)՝ 14.11.2019թ-ից յոթ օր հետո:

Սույնով ՊԵԿ կողմից չի ապահովվել մատուցվող ծառայության պայմանագրով սահմանված առանձին պայմանների՝ կատարողի կողմից մատուցվող ծառայության մեկնաբանման, դրանց անհրաժեշտության և պատճառա-հետևանքային կապի բացատրության, ինչպես նաև սպասարկման ծառայությանը վերաբերվող՝ սարքավորման աշխատանքի խափանման և տեխնիկական սպասարկման վերաբերյալ փաստաթղթավորումը և դրանք կատարված լինելու հիմնավորումները, ինչպես նաև՝ ծառայության մատուցման հաշվարկային փաստաթղթերի ժամանակին և պատշաճ ձևով ներկայացումը:

2. Համաձայն Կարգի 110-րդ կետի, էլեկտրոնային եղանակով իրականացվող գնումների դեպքում պայմանագրի կատարման արդյունքի ընդունման հետ կապված սույն բաժնով սահմանված գործողություններն իրականացվում են էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով, հաշվի առնելով հետևյալ առանձնահատկությունները՝

1) պայմանագրի կամ դրա մի մասի ընդունման նպատակով պայմանագիր կնքած անձը դրանով սահմանված ժամկետում էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով պատվիրատուի ղեկավարին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

Համաձայն մրցույթի հրավերի, ինչպես նաև կնքված պայմանագրի 3-րդ կետի պահանջների՝

- Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

- Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին:

- Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

Պայմանագրի շրջանակներում Կատարողի կողմից պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ ակտերում, ինչպես նաև պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների հանձնման-ընդունման արձանագրություններում բացակայում են փաստաթղթերի կազման ամսաթվերը, իսկ Կատարողի կողմից Պատվիրատուին պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների հանձնման-ընդունման արձանագրությունների փոխանցումը, ինչպես նաև Պատվիրատուի կողմից հանձնման-ընդունման արձանագրությունների և եզրակացությունների Կատարողին տրամադրումը չի կատարվել էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով:

Առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 04.05.2017թ. N526-Ն որոշման 110-րդ կետի և Պայմանագրի 3.1, 3.2 և 3.3 կետերի պահանջների հետ՝ ՊԵԿ-ի կողմից չի ապահովվել օրենսդրությամբ և պայմանագրով ծառայությունների հանձնման-ընդունման փաստաթղթերին և կարգին ներկայացվող պահանջների կատարումը:

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը

1. Պայմանագրով ֆիքսված է, որ կապը կատարողի հետ պահպանվում է կամ wangzujun@nuctech.com էլեկտրոնային հասցեին հաղորդագրություն գրելով, կամ հեռախոսազանգով: Կապի պահպանման առաջին իսկ քայլերի իրականացման ընթացքում պարզ դարձավ, որ ավելի նպատակահարմար և արդյունավետ է կապի պահպանումը հեռախոսազանգի միջոցով:

Nuctech ընկերության մասնագետների նստավայրը Թբիլիսում է և ահազանգից հետո եթե խնդիրը լուծում չէր ստանում ստացված խորհուրդներով և վերլուծություններով, ապա նրանք 2-3 ժամ հետո ներկայանում էին սահմանային անցումային կետ՝ գործնական քալերով լուծելու խնդիրը:

Հեռախոսակապը (նաև տեսակապը) հարմար էր այնքանով, որ միշտ ընթանում էին քննարկումներ, առաջարկվող ինչ որ քայլերից հետո արդյունքների վերլուծություն: Շատ

հաճախ, հենց հեռախոսակապով քննարկումների արդյունքում օպերատիվ կերպով վերացվում էին անսարքությունները:

Հեռախոսազանգեր ընկերությանը կարող էին իրականացվել և Կոմիտեի հերթապահ ծառայությունից (պատասխանատու ստորաբաժանման կողմից) և անմիջապես սահմանային կետից, օրվա ընթացքում բազմաթիվ անգամներ՝ ամեն քայլի և արդյունքի վերլուծության պայմաններում:

Պայմանագրում ֆիքսված է կետ՝ մատուցվող ծառայության մեկնաբանում, դրանց անհրաժեշտության և պատճառահետևանքային կապի բացատրություն:

Տվյալ կետը մտցվել էր մեր կողմից հատուկ նպատակներով, քանի որ սարքավորումները, ապրանքները մատակարարող, ինչպես նաև սպասարկում իրականացնող բոլոր ընկերությունները (Nuctech, Areempa International, Rapiscan) ժամանակին մերժել էին մեր բազմակի խնդրանքները վերապատրաստելու մեր մասնագետներին այս գործընթացում Կոմիտեի բեռը թեթևացնելու նպատակով՝ պատասխանելով որ նման քաղաքականություն չեն վարում և վերապատրաստում են միայն իրենց մասնագետներին:

Նշված կետի պայմանների բավարարմամբ Կատարող ընկերության մասնագետների հետ քննարկումների ընթացքում Կոմիտեի մասնագետները, քայլ առ քայլ, ձգտում են ստանալ անհրաժեշտ գիտելիքներ սպասարկման գործընթացում: Սա է նշված կետի գլխավոր նպատակը:

Մատուցվող ծառայության մեկնաբանում, դրանց անհրաժեշտության և պատճառահետևանքային կապի բացատրություն իրականացվել է միշտ, սխտեմատիկ, սարքավորման հետ տարվող բոլոր աշխատանքների ընթացքում: Դա հետևողականորեն միշտ պահանջվել է Կոմիտեի մասնագետների կողմից: Կոմիտեի մասնագետները ձգտում են ավելի շատ հարցեր տալով ավելի շատ տեղեկատվության տիրապետել: Երբեմն խնդիրների վերլուծությունը բերում է համատեղ որոշման ընդունմանը: Քննարկումներն ընթանում են բանավոր, որոնք կարող են տևել մի քանի րոպեից մինչև մի քանի օր՝ մինչև սարքավորման վերագործարկումը: Այս գործընթացում մեր նպատակն է գիտելիքներ ստանալ, միաժամանակ արագացնելով վերանորոգման գործընթացը:

Պայմանագրում չի ֆիքսված թե կատարողի կողմից ինչպես պետք է ներկայացվի պատվիրատուին ծառայության մատուցումը, պատճառահետևանքային կապը: Ժամանակի ընթացքում հաստատվեց, որ մեր ընտրած աշխատելաճճն ամենաարդյունավետն է մասնագետներ ունենալու, ծառայության մատուցման գործընթացին հետևելու գործում:

Մատուցված ծառայությունների վերաբերյալ Նուբեք Բոմպանի ընկերության կողմից Կոմիտեին ներկայացվել է հաշվետվություն-արձանագրություն կատարողի կողմից մշակված ձևաչափով: Վերջիններս գտնվում են պատասխանատու ստորաբաժանման մոտ և հաշվեքննիչ պալատի կողմից պահանջ չի եղել դրանք ներկայացնելու համար: Նշված հաշվետվություն-արձանագրություններն այնքան նեղ-մասնագիտական են, որ նրանցում գրառումներն ընկալելի են միայն այդ բնագավառում խորացած մասնագետների կողմից: Հաշվետվություն-արձանագրության մեկ օրինակ կցվում է

պատկերացում կազմելու համար: Եթե անհրաժեշտ լինի կարող ենք տրամադրել ամբողջ փաստաթղթերը:

Կատարողի կողմից կոնտակտային անձի տվյալներ ներկայացվել էր նախկինում հաշվեքննիչ պալատի աշխատակիցներին:

Հայ տղաներից Սևակը նույն տարում մեկնել էր Հայաստանից, իսկ Խաչատուրը նշված ընկերությունում ինչ որ վերապատրաստումներ էր անցնում և հանդիսանում էր Կատարողի և Պատվիրատուի միջև միջանկյալ օղակ, մատուցելով նրանց համար թարգմանչական ծառայություններ: Այլ լրացուցիչ տվյալներ, այդ թվում անձնագրի պատճե չի պահանջվել: W.Z.-ի անձնագրի պատճեն կցվում է:

Կատարող ընկերության կողմից ծառայությունների մատուցումն իրականացվել է պայմանագրին համապատասխան՝ պայմանագրով սահմանված ժամանակացույցով, իսկ հանձնման-ընդունման փաստաթղթերի ու ներկայացումը օրենսդրական խախտում չի, քանի որ պայմանագիրը կատարված էր պատշաճ՝ սահմանված ժամկետում համապատասխան որակով:

Փաստաթղթերը հանձնվել են Կոմիտեի քարտուղարություն: Մեր կողմից ընդունվել է քարտուղարության կողմից ֆիքսված ամսաթիվը, քանի որ ներկայացված արձանագրությունների վրա բաց էին թողնված ներկայացման ամսաթվերը:

2. Պայմանագրի կողմ հանդիսացող Նուբթեչ Քոմփանի ընկերությունը՝ հանդիսանալով ոչ ռեզիդենտ ընկերություն, armeps համակարգի միջոցով տեխնիկական խնդիրների պատճառով հնարավորություն չի ունեցել պատվիրատուին ներկայացնել հանձնման-ընդունման արձանագրությունը, որի մասին հայտնել է պատվիրատուին:

Վերոգրյալից ելնելով պատվիրատուն ևս չի կարողացել ծառայության մասին եզրակացությունը տալ տվյալ համակարգի միջոցով: Տեխնիկական խնդիրը լուծելու համար մասնակիցը դիմել է նաև լիազոր մարմնին՝ խնդրին լուծում տալու նպատակով:

Միաժամանակ նշենք, որ դա չի հանգեցրել որևէ կողմի շահերի խախտմանը կամ գնումների մասին օրենսդրության նպատակների խաթարմանը:

Հաշվեքննողների մեկնաբանությունը

Ներկայացված մեկնաբանությունները և առարկությունները ընդունելի չեն:

Հաշվեքննության ընթացքում ՊԵԿ-ից պահանջվել են մանրամասն տեղեկություններ, որոնց տրվել է ոչ լիարժեք պատասխան: Հաշվեքննողների կողմից կրկին գրավոր հարցում կատարելուց հետո դարձյալ տրվել են ոչ ամբողջական տեղեկություններ: Կոնտակտային անձանց վերապերյալ պահանջվել են տեղեկություններ, որի պատասխանը մեջբերված է սույն բաժնում, հաշվեքննողների կողմից չեն պահանջվել

սպասարկողների բջջային հեռախոսի համարները, այլ պահանջվել են այդ անձանց վերաբերյալ տվյալներ, որոնց մասով այդպես էլ պատշաճ տեղեկություններ չեն ներկայացվել: Համեմատության համար նշենք, որ եզրակացության անհամապատասխանությունների վերաբերյալ գրառումների բաժնի 5-րդ և 6-րդ կետերում բերված ընթացակարգերի շրջանակներում ՊԵԿ-ի կողմից սպասարկողի ներկայացուցիչների վերաբերյալ ներկայացված տվյալները պարունակել են ոչ միայն անձը հաստատող և նույնականացնող տվյալներ, այլ սպասարկողի կողմից վերջիններիս տրված լիազորագրեր և այլն:

Առաջարկություն հաշվեքննության օբյեկտին

Այնպիսի պայմանագրերը և գործարքները, որոնց տեխնիկական բնութագրերը բացի մատուցվող հիմնական ծառայությունից (ապրանքի, աշխատանքի) ներառում են ածանցյալ կամ հիմնավորված այլ բնույթի ծառայություններ, դրանց կատարումը հիմնավորող փաստաթղթերում ապահովել տվյալներ, որոնք կփաստեն նշված ծառայությունների մատուցված լինելը:

8. ՊԵԿ-ԳՀԾՁԲ-19/055 գնման ընթացակարգի վերաբերյալ

ՊԵԿ արևմտյան մաքսատուն-վարչությունում (Զվարթնոց օդանավակայան) տեղակայված Nuctech MT1213 մակնիշի մոբիլ ռենտգենային զննող սարքավորման վերանորոգման նպատակով ՊԵԿ կողմից 13.09.2019թ-ին հրապարակվել է նշված ծառայությունների ձեռքբերման թիվ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-19/055 գնանշման հարցման հրավերը:

Գնումը գնումների պլանում ներառվել է 05.08.2019թ-ին 5,000.0 հազ. դրամ նախահաշվային արժեքով: Մրցույթին մասնակցել է մեկ կազմակերպություն՝ Նուքթեչ Քոմփանի ընկերությունը, որը հանդիսանում է Չինաստանի Ժաղովրդավարական Հանրապետության ռեզիդենտ կազմակերպություն: Մրցույթի արդյունքում հաղթող է ճանաչվել Նուքթեչ Քոմփանի ընկերությունը, որի հետ 09.10.2019թ-ին կնքվել է թիվ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-19/055 պայմանագիրը 5,000.0 հազ. դրամ գումարով:

Պայմանագրով նախատեսվել է ծառայությունը մատուցել պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից հաշված առավելագույնը 60 օրվա ընթացքում՝ մինչև 05.12.2019 թվականը:

Մրցույթի հրավերով սահմանված պայմանագրի կատարման ապահովումը Նուքթեչ ընկերության կողմից կատարվել է 07.10.2019թ-ին կանխիկ եղանակով 500.0 հազ.դրամ գումարի չափով:

Նուքթեչ Քոմփանի ընկերության կողմից 2019թ. դեկտեմբեր ամսին ներկայացվել են առանց ամսաթվերի և համարների պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների հանձնման-ընդունման կնքված արձանագրություն և պայմանագրի արդյունքը պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ կնքված ակտ, որին գնման հայտը նախագծած ներկայացուցչի կողմից 16.12.2019թ-ին տրվել է բացասական եզրակացություն: Ներկայացված արձանագրությամբ և հաշիվ-ապրանքագրով աշխատանքների փաստացի կատարման ամսաթիվը 05.11.2019 թվականն է:

Միաժամանակ, ՊԵԿ իրավաբանական վարչության պետի կողմից ՊԵԿ գլխավոր քարտուղարին 12.12.2019թ. ուղղված գրությամբ ներկայացվել է, որ ըստ Արևմտյան մաքսատուն-վարչության 02.12.2019թ. թիվ Ն/21-2.1/162482-2019 գրության, սարքավորման փաստացի վերանորոգման մասին տեղեկություններ չկան և վերանորոգման մասին դրական եզրակացություն կազմվել չի կարող և ելնելով այդ հանգամանքից բացակայում են նաև պայմանագրով նախատեսված գումարը վճարելու հիմքերը:

Իսկ Արևմտյան մաքսատուն-վարչության պետի կողմից ՊԵԿ մաքսային հսկողության վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատարին ուղղված 28.11.2019թ. թիվ Ն/21-2.1/162482-2019 գրությամբ ներկայացվել է, որ.

- ՊԵԿ Արևմտյան մաքսատուն-վարչության բացթողման բաժնի 1-ին բաժանմունքի ՏՏ սպասարկման մասնագետի բանավոր հայտարարության համաձայն փոխվել են գեներատորային դիզելային շարժիչի յուղը և ֆիլտրը, ռենտգենային արագացուցիչի հակասառեցման հեղուկն, ինչպես նաև տրամադրվել են թվով 4 մարտկոցներ,
- անդրադառնալով սարքավորման՝ ներկայումս սարքին լինելուն՝ հարկ է նշել, որ դետեկտորյին թևի հիդրավլիկան անսարք է, իսկ մոնիտորի վրա պատկերը երևում է թերի՝ ոչ ամբողջական, ինչն առաջացել է 25.10.2019թ. ՀՀ 3211 TT հաշվառման համարանիշով, BB 483 կցորդիչով բեռնատար ավտոմեքենայի հետընթացի ժամանակ սարքավորմանը հարվածելու հետևանքով,
- նշված վթարի վերաբերյալ ՊԵԿ Արևմտյան մաքսատուն-վարչությունում առկա տեղեկատվությունը 29.10.2019թ. թիվ Ն/21.1/141995-2019 գրությամբ ներկայացվել է ՊԵԿ գլխավոր քարտուղարին: Ներկայացվել է նաև վթարի տեսագրությունը:

ՀՀ հաշվեքննիչ պալատի 27.05.2021թ. թիվ ՀՊԵ-ՎԱ-127 գրությամբ ՊԵԿ-ից պահանջված տեղեկություններին և պարզաբանումներին ի պատասխան, ՊԵԿ կողմից ներկայացվել են հետևյալ տեղեկությունները.

- 25.10.2019թ-ին «Արմենիա միջազգային օդանավակայաններ» ՓԲԸ-ի «Զվարթնոց» բեռնային համալիրի ավտոկանգառում Վրաստանի Հանրապետության քաղաքացի Զեմալ Տոդուան իր վարած ՀՀ 3211 TT հաշվառման համարանիշով, BB 483 կցորդիչով բեռնատար ավտոմեքենայով հետընթացի ժամանակ հարվածել է Վոլվո մակնիշի 136 BB 01 հաշվառման համարանիշով Nuctech MT1213LH շարժական սկաններ բեռնատար ավտոմեքենային և վնասել է բեռնատար ավտոմեքենայի սկաններ դետեկտորային թևը,
- Դեպքի առթիվ վրացերեն և ռուսերեն լեզուներով Զեմալ Տոդուայից վերցվել է գրավոր հայտարարություն, որով վերջինս հաստատել է իր կողմից վարվող մեքենայով սարքավորմանը հարվածելու փաստը, միաժամանակ՝ ՀՀ ոստիկանության Ճանապարհային ոստիկանության ծառայության համապատասխան ստորաբաժանման աշխատակիցների կողմից կազմվել է պատահարի վերաբերյալ արձանագրություն,
- Պատճառված վնասի մասով հատուցում ստանալու վերաբերյալ ՊԵԿ-ի կողմից 07.11.2019թ-ին «ՌՈՍԳՈՍՍՏՐԱԽ-ԱՐՄԵՆԻԱ» ԱՓԲԸ-ին գույքի զննության դիմում է ներկայացվել, որի արդյունքում «ՌՈՍԳՈՍՍՏՐԱԽ-ԱՐՄԵՆԻԱ» ԱՓԲԸ-ն 29.11.2019թ-

ին գործը հանձնել է անկախ փորձագիտական կենտրոն, որը 14 աշխատանքային օրվա ընթացքում պետք է իրականացնէր համապատասխան ուսումնասիրություն,

- 20.12.2019թ-ին «ՌՈՍԳՈՍՏՐԱԽ-ԱՐՄԵՆԻԱ» ԱՓԲԸ-ն ի պատասխան ՊԵԿ-ի 12.11.2019թ-ի գույքին պատճառված վնասի գծով ապահովագրական հատուցում ստանալու վերաբերյալ դիմումի հայտնել է, որ զննությամբ պարզվել է, որ վնասվել է սկանավորման II-աձև թևի ստորին հատվածը, սակայն վնասված թևի շարժման արդյունքում մոնիտորի վրա առաջանում էին սարքավորման բնականոն աշխատանքին ոչ բնորոշ գծեր և ակնադիտական զննմամբ միանշանակ պնդել, որ այն վնասված է և 25.10.2019թ. ավտովթարի հետևանք է, հնարավոր չէ: Լիարժեք փորձաքննություն իրականացնելու համար վերջինս խնդրել է տրամադրել սարքավորումը սպասարկողների կոնտակտային տվյալները,
- 19.12.2019թ-ի ՊԵԿ գործերի կառավարիչ Արթուր Վանցյանը հայտնել է ՊԵԿ գլխավոր քարտուղարին և իրավաբանական վարչության պետին այն մասին, որ Զեմալ Տոդուան ցանկանում է իր վարած ավտոմեքենան, որը դեպքից հետո մինչև օրս կայանված է ԱՄՕ ՓԲԸ Կարգո բեռնային համալիրի տարածքում, հանել վճարովի ավտոկանգառից և վերադառնալ Վրաստանի Հանրապետություն և խնդրել է խնդրի վերաբերյալ հայտնել դիրքորոշում,
- 21.12.2019թ-ին ՊԵԿ իրավաբանական վարչության պետը պարզաբանել է, որ վնասը հատուցելու պարտականությունը դրվում է առավել վտանգի աղբյուրը (տրանսպորտային միջոցի) սեփականության իրավունքով կամ այլ օրինական հիմքով (վարձակալության իրավունք, լիազորագրով տրանսպորտային միջոցները վարելու իրավունք և այլն) տիրապետող իրավաբանական անձի կամ քաղաքացու վրա, միաժամանակ՝ «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքով և կողմերի միջև կնքված ապահովագրական պայմանագրով սահմանվում են պատճառված վնասների դեպքում հատուցման ենթակա ապահովագրական գումարի առավելագույն չափերը և ելնելով վերոգրյալից առաջարկել է խնդրո առարկա բեռնատար ավտոմեքենան Վրաստանի Հանրապետության քաղաքացի Զեմալ Տոդուային վերադարձնել ապահովագրական ընկերության և «Ճանապարհային ոստիկանության» ծառայության տեղեկությամբ՝ ճշտելով առաջացած վնասների ամբողջ ծավալը ապահովագրական ընկերության կողմից հատուցելու հնարավորությունը, քանի որ հակառակ պարագայում հնարավոր է առաջանա պատճառված վնասը (կամ դրա մի մասը) ավտոմեքենայի սեփականատիրոջից կամ օրինական հիմքով տիրապետողից պահանջելու անհրաժեշտություն,
- 27.04.2021թ-ին Նուբեհչ Քոմփանի ընկերության ներկայացուցչի՝ Լիանգ Լունի կողմից ՊԵԿ ներկայացվել է գրություն, որով վերջինս խնդրել է վերադարձնել

07.10.2019թ-ին վճարված պայմանագրի ապահովման գումարը, ինչը ՊԵԿ գլխավոր քարտուղարի ՀՀ ֆինանսների նախարարության գլխավոր քարտուղարին ուղղված գրությամբ բավարարվել է:

Nuctech MT1213 մակնիշի մոբիլ ռենտգենային զննող սարքավորման վերանորոգման նպատակով ՊԵԿ կողմից 30.11.2020թ-ին հրապարակվել է գնանշման հարցման ընթացակարգով մրցույթ 10,200.0 հազ. դրամ նախահաշվային արժեքով, մրցույթի արդյունքում 23.12.2020թ-ին «Դելտա Քոնսթրաքշն» ընկերության հետ կնքվել է պայմանագիր 10,200.0 հազ. դրամ գումարով:

Արձանագրված անհամապատասխանություններ

Համաձայն ՊԵԿ գլխավոր քարտուղարի կողմից տրված պարզաբանման, Նուբթեչ Քոմփանի ընկերությունը հավաստել է, որ սարքավորման վերանորոգումը ավարտվել էր և փորձարկումից մեկ օր առաջ սարքավորմանը հարվածել է տարածքով անթույլատրելի տեղաշարժ կատարող բեռնատար ավտոմեքենա՝ վնասելով սարքավորման դետեկտորային թևը և ստեղծված իրավիճակում անհնար է եղել գնահատել սարքավորման տեխնիկական վիճակը մինչև վթարը, ստեղծվել էր ֆորս-մաժորային իրավիճակ, որը կանխատեսել հնարավոր չէր, իսկ պատասխանատու ստորաբաժանումը իրականացվող հսկողության ընթացքում հետևել է աշխատանքների ընթացքին և Նուբթեչ ընկերության կողմից թերացումներ կամ այլ խնդիրներ չի արձանագրել, բացասական եզրակացությունը տրվել է կատարված աշխատանքների ստուգման անհնարության պատճառով:

Համաձայն ՊԵԿ Արևմտյան մաքսատուն-վարչության բացթողման բաժնի 1-ին բաժանմունքի ՏՏ սպասարկման մասնագետի հայտարարության՝ փոխվել են գեներատորային դիզելային շարժիչի յուղը և ֆիլտրը, ռենտգենային արագացուցիչի հակասառեցման հեղուկն, ինչպես նաև տրամադրվել են թվով 4 մարտկոցներ:

Մինչդեռ պայմանագրի տեխնիկական բնութագրով ի թիվս վերը ներկայացվածի նախատեսվել են նաև՝

- կատարողի կողմից մատուցվող ծառայության մեկնաբանում և իրականացվող քայլերի անհրաժեշտության բացատրություն Պատվիրատուին,
- սարքավորման արագացուցիչի ենթահամակարգի վերանորոգում՝ իոնիզացիոն խցիկի փոխարինում, SF6 գազի լիցքավորում,
- SF5 սալիկների փոխարինում-2հատ, ճառագայթային գլխիկի սնուցման սալիկի փոխարինում,

- էլեկտրամատակարարման և էլեկտրողեկավարման ենթահամակարգի վերանորոգում՝ ընդունիչ և հաղորդիչ ֆոտոէլեկտրական տվիչների փոխարինում,

որոնց մասով որևէ հաստատում պատասխանատու ստորաբաժանման կամ աշխատակիցների կողմից, ինչպես նաև մատուցված ծառայության մասով մեկնաբանություններ կամ իրականացվող քայլերի անհրաժեշտության բացատրություններ առկա չեն:

Համաձայն արձանագրված փաստերի, վթարը տեղի է ունեցել 25.10.2019թ-ին, իսկ Նուբթեչ ընկերության կողմից ներկայացված 05.11.2019թ. N NUC/ARM 19-1246A հաշիվ ապրանքագրի և պայմանագրով կամ դրա մի մասի կատարման արդյունքների հանձնման-ընդունման արձանագրությամբ աշխատանքները փաստացի կատարվել են 05.11.2019թ-ին:

Համաձայն Օրենքի 35-րդ հոդվածի 4-րդ մասի, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով, ապա պայմանագրի կամ կանխավճարի ապահովումը վերադարձվում է այն ներկայացնողին՝ պայմանագրի կատարման ավարտից հետո՝ ոչ ուշ, քան հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

Վերոգրյալից ակնհայտ է, որ պայմանագրի տեխնիկական բնութագրով սահմանված աշխատանքները Նուբթեչ Քոմփանի ընկերության կողմից կատարվել են մասնակի՝ մինչև վթարի տեղի ունենալու օրը՝ 25.10.2019թ-ը, մինչդեռ ՊԵԿ կողմից ներկայացված պարզաբանմամբ՝ ՊԵԿ պատասխանատու ստորաբաժանումը իրականացվող հսկողության ընթացքում հետևել է աշխատանքների ընթացքին և Նուբթեչ ընկերության կողմից թերացումներ կամ այլ խնդիրներ չի արձանագրել, իսկ բացասական եզրակացությունը տրվել է կատարված աշխատանքների ստուգման անհնարության պատճառով, որն էլ հիմք է հանդիսացել ՊԵԿ պատասխանատուներին վճարած պայմանագրի ապահովումը վերադարձվել է ընկերությանը:

Առկա է անհամապատասխանություն Օրենքի 35-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջների կատարման հետ, այն է՝ պայմանագրի ապահովումը վերադարձվում է այն ներկայացնողին՝ պայմանագրի կատարման պայմանի դեպքում, ավարտից հետո՝ ոչ ուշ, քան հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

Միաժամանակ առկա է անհամապատասխանություն, կապված պայմանագրի արդյունքի հանձնման-ընդունման հետ, քանի որ տվյալ պահին կատարված աշխատանքների ստուգման անհնարությունը չի վերացնում կատարողի պարտավորությունը պատվիրատուի նկատմամբ, հատկապես, երբ պայմանագրի ապահովումը կատարողին վերադարձվում է 2021 թվականի մայիս ամսին՝ պայմանագրով սահմանված ծառայության մատուցման ժամկետից 18 ամիս հետո, երբ տվյալ սարքավորումն թերությունները ախտորոշված էին և «Դելտա Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի կողմից իրականացվում էին վերանորոգման աշխատանքներ:

Համաձայն ՊԵԿ կողմից տրամադրված տեղեկությունների և պարզաբանումների, ինչպես նաև հաշվեքննության ընթացքում ուսումնասիրված փաստաթղթերի, 25.10.2019թ-ին Վրաստանի Հանրապետության քաղաքացի Ջեմալ Տոդուան իր վարած բեռնատար ավտոմեքենայով «Արմենիա միջազգային օդանավակայաններ» ՓԲԸ-ի «Զվարթնոց» բեռնային համալիրի ավտոկանգառի տարածքով անթույլատրելի տեղաշարժ կատարելով հարվածել է Nuctech MT1213 մակնիշի մոբիլ ռենտգենային զննող սարքավորմանը և վնասել է սարքավորման սկաներ դետեկտորային թևը, որի առթիվ վերջինիցս վերցվել է գրավոր հայտարարություն, որով նա հաստատել է իր կողմից վարվող մեքենայով սարքավորմանը հարվածելու փաստը, իսկ ՀՀ ոստիկանության Ճանապարհային ոստիկանության ծառայության համապատասխան ստորաբաժանման աշխատակիցների կողմից կազմվել է պատահարի վերբերյալ արձանագրություն: Պատճառված վնասի մասով հատուցում ստանալու նպատակով ՊԵԿ-ը դիմել է «ՌՈՍԳՈՍՍՏՐԱԽ-ԱՐՄԵՆԻԱ» ԱՓԲԸ-ին:

Վրաստանի քաղաքացի Ջեմալ Տոդուան 2019 թվականի դեկտեմբեր ամսին հայտնել է ՊԵԿ-ին, որ ցանկանում է իր վարած ավտոմեքենան, դուրս բերել ԱՄՕ ՓԲԸ Կարգո բեռնային համալիրի տարածքից և վերադառնալ Վրաստանի Հանրապետություն, որի վերաբերյալ ՊԵԿ իրավաբանական վարչությունը հայտնել է հստակ դիրքորոշում, որ վնասը հատուցելու պարտականությունը կրում է տրանսպորտային միջոցը սեփականության իրավունքով կամ այլ օրինական հիմքով տիրապետող իրավաբանական անձը կամ քաղաքացին, իսկ համաձայն «Ավտոտրանսպորտամիջին միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի և կողմերի միջև կնքված ապահովագրական պայմանագրի, սահմանվում են պատճառված վնասների դեպքում հատուցման ենթակա ապահովագրական գումարի առավելագույն չափերը և ելնելով դրանից, խնդրո առարկա բեռնատար ավտոմեքենան Վրաստանի Հանրապետության քաղաքացի Ջեմալ Տոդուային կարող է վերադարձվել ապահովագրական ընկերության և «Ճանապարհային ոստիկանության» ծառայության տեղեկությամբ՝ **ճշտելով առաջացած վնասների ամբողջ ծավալը ապահովագրական ընկերության կողմից հատուցելու հնարավորությունը, քանի որ հակառակ պարագայում հնարավոր է առաջանա պատճառված վնասը (կամ դրա մի մասը) ավտոմեքենայի սեփականատիրոջից կամ օրինական հիմքով տիրապետողից պահանջելու անհրաժեշտություն:** Սակայն Ջեմալ Տոդուային թույլատրվել է դուրս բերել իր վարած ավտոմեքենան ԱՄՕ ՓԲԸ Կարգո բեռնային համալիրից և Հայաստանի Հանրապետությունից, առանց ապահովագրական ընկերությունից կամ տրանսպորտային միջոցի սեփականատիրոջից կամ այն օրինական հիմքով տիրապետողից պատճառված վնասի մասով երաշխիքներ ստանալու:

23.12.2020թ-ին պատճառված վնասի վերացման նպատակով (տեխնիկական բնութագրով ներկայացված է վթարի հետևանքների վերանորոգման աշխատանքների բնութագիրը) ՊԵԿ-ի և «Դելտա Քոնսթրաքշն» ընկերության միջև կնքվել է պայմանագիր 10,200.0 հազ. դրամ գումարի չափով:

Վերը բերված փաստերից և հիմնավորումներից պարզ է, որ ՊԵԿ-ի կողմից չեն ձեռնարկվել անհրաժեշտ միջոցառումներ՝ պետական գույքին պատճառված վնասի հատուցումը վնասը պատճառած անձից ստանալու հետ կապված, միաժամանակ՝ պատճառված վնասի վերականգնումը ՊԵԿ-ը նախատեսել է իրականացնել 2021 թվականի ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին, որը կազմել է 10,200.0 հազ. դրամ:

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը

Նուբեք Քոմփանի ընկերության հետ կնքված պայմանագրի շրջանակներում պետք է իրականացվեր Nuctech MT1213 մոբիլ ռենտգենյան զննող սարքավորման վերանորոգում, որի ընթացքում պլանավորված էր որոշ բաղադրամասերի փոխարինում, կարգավորումների իրականացում:

Ընթացող աշխատանքներին պարբերաբար հետևել են պատասխանատու ստորաբաժանման աշխատակիցները, երբեմն նաև նշված ռենտգենյան սարքավորումը շահագործող Արևմտյան մաքսատուն-վարչության 1-ին բաժանմունքի ՏՏ սպասարկման մասնագետը: Վերջինիս կողմից նկարագրված աշխատանքները, որոնք կատարել էր Կատարող ընկերությունն ամբողջական չեն, քանի որ նա ոչ միշտ է մասնակցել-հետևել կատարողի կողմից կատարված աշխատանքներին և նրա կողմից թվարկված աշխատանքների ցանկը Հաշվեքննիչ պալատի կողմից սխալմամբ է ընդունվում որպես ամբողջական ցանկ (ամբողջական ցանկը ներառված է պայմանագրի տեխնիկական բնութագրում):

Կատարողի կողմից աշխատանքների իրականացման ընթացքում Պատվիրատուի հետ քննարկվել են աշխատանքների հետ կապված քայլերի անհրաժեշտությունը և ակնկալվող արդյունքները: Ֆիզիկապես կատարվել են պլանավորված, ինչպես նաև աշխատանքի ընթացքում հայտնաբերված նոր անսարք բաղադրամասերի փոխարինումը:

Վրացական բեռնատար ավտոմեքենայի կողմից ռենտգենյան սարքավորմանը հարվածից հետո, վթարի հետևանքով հնարավորություն չի եղել ստուգելու Կատարող ընկերության կողմից, վերագրյալ պայմանագրի շրջանակներում, կատարված վերանորոգման աշխատանքների արդյունքը՝ փոխարինված պահեստամասերի պիտանելիությունը (սարքինությունը), կատարված աշխատանքների ճշգրտությունը, փոխարինումներից հետո իրականացված կարգաբերումների արդյունքները: Հնարավոր չէր ստուգել Կատարողը աշխատանքները կատարել է ամբողջությամբ, թե մասնակի, ստուգել՝ Կատարողը

փոխարինել է բոլոր անհրաժեշտ բաղադրամասերը կամ գուցե փոխարինել է խոտան պահեստամասերով, ստուգել՝ թե նոր անսարքությունները (արդեն փոխարինված պահեստամասերի պայմաններում) առաջացել են Կատարողի մասնագիտական սխալ աշխատանքի կամ արդեն վրացական բեռնատարի հարվածի՝ վթարի հետևանքով:

Արդյունքը կարող էր ստուգվել միայն սարքավորման շահագործմամբ՝ սահմանված կարգով թեստավորմամբ: Ստեղծվել էր ֆորս-մաժորային իրավիճակ: Նման պայմաններում տալ դրական եզրակացություն ճիշտ չէր: Այդ եզրահանգումը կատարել էր նաև Կոմիտեի իրավաբանական վարչությունը: Պայմանագրի ապահովումը կատարողին վերադարձվել է ծառայության մատուցման ժամկետի ավարտից հետո, Կատարողի դիմումի հիման վրա: Ստեղծված ֆորս-մաժորային իրավիճակում Կատարողի նկատմամբ որևէ պահանջ չէր կարող ներկայացվել:

Միակողմանի վնաս էր կրել Կատարողը՝ կատարելով ծախսեր, ձեռք բերել նյութեր, փոխարինել բաղադրամասեր, կատարելով աշխատանք և չստանալով որևէ փոխհատուցում: Նման պայմաններում պայմանագրի ապահովման չվերադարձնելը, Կատարողին տույժի ենթարկելը կլիներ սխալ և անհիմն:

Վոլվո մակնիշի 136 BB 01 հաշվառման համարանիշով Nuctech MT1213LH շարժական սկաներ բեռնատար ավտոմեքենային պատճառված գույքային վնասների գծով հատուցում ստանալու վերաբերյալ 07.11.2019 թվականին գույքի գննության դիմում է ներկայացվել «ՌՈՍԳՈՍՍՏՐԱԽ-ԱՐՄԻՆԻԱ» ԱԲԲԸ-ին, սակայն համապատասխան ուսումնասիրությամբ հնարավոր չի եղել գնահատել պատճառված վնասի չափը, որի արդյունքում «ՌՈՍԳՈՍՍՏՐԱԽ-ԱՐՄԻՆԻԱ» ԱԲԲԸ-ն 29.11.2019 թվականին գործը հանձնել է անկախ փորձագիտական կենտրոն, որը 14 աշխատանքային օրվա ընթացքում պետք է իրականացնի համապատասխան ուսումնասիրություն՝ պատճառված վնասի չափը ճշտելու և հստակ գնահատելու նպատակով:

Վթարի պատճառ հանդիսացած Վրաստանի քաղաքացի Ջեմալ Տոկուն 2019 թվականի դեկտեմբերի 18-ին ներկայանալով Կոմիտեի Արևմտյան մաքսատուն-վարչություն, հայտնել է, որ ցանկանում է իր վարած HH 321 TT հաշվառման համարանիշով BB 483 կցորդով ավտոմեքենան, որը դեպքից հետո նշված օր կայանված է «ԱՄՕ» ՓԲԸ Կարգով բեռնային համալիրի տարածքում, հանել վճարովի ավտոկանգառից և վերադառնալ Վրաստան:

Կոմիտեի իրավաբանական վարչության կողմից տրվել է դիրքորոշում, համաձայն որի առաջարկվել է խնդրո առարկա բեռնատար ավտոմեքենան Ջեմալ Մոդուլային վերադարձնել ապահովագրական ընկերության և «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության տեղեկությամբ, միաժամանակ ճշտելով առաջացած վնասների ամբողջ ծավալը ապահովագրական ընկերության կողմից հատուցելու հնարավորությունը, քանի որ հակառակ պարագայում հնարավոր է առաջանա պատճառված վնասը (կամ դրա մի մասը) ավտոմեքենայի սեփականատիրոջից կամ օրինական հիմքով այն տիրապետողից պահանջելու անհրաժեշտություն:

Պատճառված վնասի չափը ճշտելու և հստակ գնահատելու վերաբերյալ «ՌՈՍԳՈՍՏՐԱԽ-ԱՐՄԻՆԻԱ» ԱՓԲԸ-ի 2019 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ RGS-04 գրության (կցվում է) համաձայն «RVM Consult» ՍՊԸ-ի կողմից ուսումնասիրվել է ռենտգենյան սարքավորումը և հնարավոր չի եղել պարզել սարքավորմանը հասցված որևէ էական վնաս կամ դրա չափը, քանի որ Վոլվո մակնիշի 136 BB 01 հաշվառման համարանիշով տրանսպորտային միջոցը վերասարքավորված է չինական արտադրության ռենտգեն սարքավորումներով և հնարավոր չի եղել միանշանակ պնդել, որ տվյալ պահին առկա խնդիրները առաջացել են բեռնատարի հարվածի հետևանքով:

Կից Ձեզ են ներկայացվում Կոմիտեն ամրացված Nuctech MT1213 մակնիշի մոբիլ ռենտգենային զննող սարքավորմանը պատճառված վնասի փոխհատուցման ուղղությամբ իրականացված գործողությունների համապատասխան փաստաթղթերը:

Վնասի չափը հստակ հասկանալու համար Կոմիտեն կազմակերպել է գնման գործընթաց, որի արդյունքում կնքվել է պայմանագիր «Դելտա Քոնստրակշն» ՍՊԸ-ի հետ՝ 10,200.0 հազար դրամի չափով:

Վնասված սարքավորման վերանորոգման նպատակով, հետագայում «Դելտա Քոնստրակշն» ՍՊԸ-ի հետ կնքված պայմանագրի շրջանակներում իրականացվել են նաև աշխատանքներ, որոնք ներառված էին «Նուքթեք Քոմփանի» ընկերության կատարված աշխատանքների ցանկում (ընդունիչ հաղորդիչ ֆոտոէլեկտրական տվիչների փոխարինում, SF6 գազի լիցքավորում, ճառագայթման գլխիկի սնուցման սալիկի կարգաբերում, համակարգի ընդհանուր կարգաբերում և այլն): Այս քայլերն ինչպես ժամանակի պահանջի, այնպես էլ կատարվող աշխատանքների պարտադիր ընթացիկ քայլեր էին և պատվիրատուն չէր կարող պնդել թե այդ աշխատանքները «Նուքթեք Քոմփանի» ընկերության կողմից նախկին պայմանագրի շրջանակներում չեն կատարվել: Նույն այդ տվիչների անսարքությունները կարող էին հարվածից առաջանալ, գազի ճնշման անկումը կապված է ժամանակի հետ կամ հարվածից միջադիրների վնասվելուց, ճառագայթման գլխիկի շեղումներն ու կարգաբերումների անհրաժեշտության պատճառը կրկին հարվածը կարող է լինել և այլն:

Հաշվեքննիչ պալատի պնդումը, թե «Դելտա Քոնստրակշն» ՍՊԸ-ն արդեն ախտորոշել էր սարքավորման թերությունները ճիշտ չեն: Ախտորոշումը լիակատար չէր: «Դելտա Քոնստրակշն» ՍՊԸ-ն նշել էր վնասված թևի փոխարինման հետ կապված աշխատանքները:

Անսարքության հետ կապված շատ խնդիրներ ամբողջությամբ պարզ չէին: Դրա համար սարքավորման վերանորոգման բոլոր փուլերում հստակ նշված էր նաև ծառայության մատուցման ընթացքում անհրաժեշտաբար ծագած նոր դետալների և պահեստամասերի փոխարինում: Դա կատարող ընկերության ռիսկի գործոնն էր և այդպիսի աշխատանքներ իրականացվել են կատարողի կողմից:

Վերոգրյալ ընկերության կողմից ծառայության մատուցումից հետո (08.10.2021թ.) նոր պարզ դարձավ վնասի իրական չափը, որը հիմք հանդիսացավ վարույթ սկսելու

համար (նախապատրաստվել են համապատասխան նյութեր) դատական կարգով վնասը փոխհատուցելու նպատակով:

Հաշվեքննողների մեկնաբանությունը

Ներկայացված մեկնաբանությունները և առարկությունները ընդունելի չեն հետևյալ հիմնավորումներով.

- Այն պնդումը, որ ընթացող աշխատանքներին պարբերաբար հետևել են պատասխանատու ստորաբաժանման աշխատակիցները, իսկ Արևմտյան մաքսատուն-վարչության 1-ին բաժանմունքի ՏՏ սպասարկման մասնագետը ոչ միշտ է մասնակցել և հետևել կատարողի կողմից կատարված աշխատանքներին և նրա կողմից թվարկված աշխատանքների ցանկը ամբողջական չէ և որ տվյալ ցանկը հաշվեքննիչ պալատի կողմից սխալմամբ է ընդունվում որպես ամբողջական ցանկ, ճիշտ չէ, քանի որ թե իրավաբանական վարչությունը և թե պատասխանատու ստորաբաժանումը հիմնվել են Արևմտյան մաքսատուն-վարչության 1-ին բաժանմունքի ՏՏ սպասարկման մասնագետի հայտարարության վրա և պատասխանատու ստորաբաժանումը կամ որևէ այլ պաշտոնատար անձ որևէ կերպ և որևէ փաստաթղթով չի հաստատել կամ արձանագրել, որ կատարողը աշխատանքները կատարել է ամբողջ ծավալով, սակայն դրանք ստուգելու հնարավորություն չի եղել: Հետևաբար որևէ վստահություն և/կամ փաստ, որ աշխատանքները ըստ էության կատարվել են, սակայն դրա արդյունքի թեստավորումը հնարավոր չի եղել իրականացնել, չի հիմնավորվում անգամ ՊԵԿ կողմից ներկայացված առարկությունով՝ այս մասով չի ներկայացվում որևէ պաշտոնատար անձի գրավոր հայտարարություն: Հատկանշական է, որ Կատարողը պահանջ է ներկայացրել միայն պայմանագրի ապահովման և ոչ կատարած աշխատանքների համար:

- Սարքավորման վերանորոգման մրցույթը հայտարարվել է 30.11.2020թ-ին, աշխատանքները ավարտվել են 08.10.2021թ.-ին, մատուցված ծառայությունների հանձնման-ընդունման արձանագրությամբ կատարված և տեխնիկական բնութագրով սահմանված աշխատանքների միջև տարբերություններ չեն եղել, փաստեր առ այն, որ կատարված աշխատանքները ներառել են լրացուցիչ բաղադրիչներ, իսկ «Դելտա Քոնստրակշն» ՍՊԸ-ն իր ռիսկի և միջոցների հաշվին իրականացրել է դրանք որևէ հիմնավորում չունի: Միաժամանակ՝ պետական գնումների մասին օրենսդրությամբ ձեռք բերվող ապրանքների, ծառայությունների և աշխատանքների տեխնիկական բնութագրերի մասով սահմանված են հստակ պահանջներ, սահմանված են նաև հստակ իրավակարգավորումներ կատարվող լրացուցիչ աշխատանքների համար, հետևաբար

կատարել գնում այնպիսի տեխնիկական բնութագրի հիման վրա, որը ի սկզբանե թերի է, իսկ դրա արդյունքում ռիսկը միայն Կատարողինն է, իրավաչափ չէ:

Առաջարկություն հաշվեքննության օբյեկտին

Ձեռնարկել գործուն միջոցներ պատճառված վնասը փոխհատուցելու ուղղությամբ:

9. ՊԵԿ-ԳՀԾՁԲ-19/1 գնման ընթացակարգի վերաբերյալ

ՊԵԿ Բագրատաշենի, Բավրայի և Գոգավան-Պրիվոլնոյեի մաքսային կետերի օդակարգավորման, օդափոխության, ջեռուցման համակարգի սարքավորումների վերանորոգման և պահպանման ծառայությունների ձեռքբերման նպատակով ՊԵԿ կողմից 12.02.2019թ.-ին հրապարակվել է ծառայությունների ձեռքբերման թիվ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-19/1 գնանշման հարցման հրավերը:

Մրցույթի հրավերի ծառայությունների ձեռքբերման տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսվել է իրականացնել մաքսային կետերի շենքերում տեղակայված օդափոխության, օդորակման, ջեռուցման և կաթսայատների սարքավորումների վերանորոգումներ և սպասարկում (պահպանում): Ծառայությունների ցանկը ներկայացվել է հրավերի թիվ 4.1 հավելվածով, ինչով մասնավորապես նախատեսվել է (ըստ անհրաժեշտության) վերանորոգել շուրջ 86 անվանում (տեսակի) և 413 մավոր սարքավորումներ և եռամսյա պարբերականությամբ իրականացնել դրանց կանխարգելիչ ու վերականգնողական տեխնիկական սպասարկումը, որը մասնավորապես ներառում է սարքավորումների ախտորոշման, ստուգման և կարգաբերման աշխատանքներ:

Գնման ընթացակարգը կազմակերպվել է մեկ չափաբաժնով և Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետով սահմանված պահանջների հիման վրա:

Մրցույթին մասնակցել են «Կոնսէլ» ՍՊԸ-ն և Ա/Ձ Մեսրոպ Վիգենի Աղազարյանը հետևյալն գնային առաջարկներով՝

Հ/Հ	Մասնակիցների անվանումները	Մասնակցի գնային առաջարկը		
		Առանց ԱԱՀ	ԱԱՀ	Ընդամենը
1	«Կոնսէլ» ՍՊԸ	29 080 000	5 816 000	34 896 000
որից կանխարգելիչ և վերականգնողական տեխնիկական սպասարկում		12,600,0000	2,520,000	15 120 000

2	ԱԶ Մեսրոպ Աղազարյան Վիգենի	13 146 630	-	13 146 630
<i>որից կանխարգելիչ և վերականգնողական տեխնիկական սպասարկում</i>		50 000		50 000

Գնահատող հանձնաժողովի 22.02.2019թ. թիվ 3 արձանագրությամբ որոշվել է մասնակիցներին 27.02.2019թ-ին կանչել գնային բանակցությունների, որի արդյունքում մասնակիցները ներկայացրել են հետևյալ վերանայված գնային առաջարկները՝

Հ/Հ	Մասնակիցների անվանումները	Մասնակցի վերանայված գնային առաջարկը		
		Առանց ԱԱՀ	ԱԱՀ	Ընդամենը
1	«Կոնսէլ» ՍՊԸ	12 500 000	2 500 000	15 000 000
<i>որից կանխարգելիչ և վերականգնողական տեխնիկական սպասարկում</i>		7 750 000	1 750 000	10 500 000
2	ԱԶ Մեսրոպ Աղազարյան Վիգենի	13 146 630	-	13 146 630
<i>որից կանխարգելիչ և վերականգնողական տեխնիկական սպասարկում</i>		50 000		50 000

Բանակցությունների արդյունքում «Կոնսէլ» ՍՊԸ-ն իր ներկայացրած գնային առաջարկը նվազեցրել է մինչև 15 000 000 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն, իսկ ԱԶ Մեսրոպ Աղազարյանը իր գինը թողել է անփոփոխ:

Գնահատող հանձնաժողովը որոշել է «Կոնսէլ» ՍՊԸ-ին ճանաչել առաջին տեղը զբաղեցրած մասնակից:

02.04.2019թ-ին «Կոնսէլ» ՍՊԸ-ի հետ կնքվել է թիվ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-19/1 պայմանագիրը՝ 35,000.0 հազ. դրամ առավելագույն գնով:

06.06.2019թ-ին կողմերի միջև կնքվել է թիվ 1 համաձայնագիրը, որով հաստատվել է ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը, որով պայմանագրի ֆինանսավորումը նախատեսվել է իրականացնել ՀՀ պետական բյուջեի միջոցներից՝ 15,000.0 հազ. դրամի չափով, ինչպես նաև սահմանվել է դրույթ, որով պայմանագրով նախատեսված պայմանները տարածվում են 2019թ. ապրիլի 2-ից ծագած հարաբերությունների վրա:

Պայմանագրով ծառայության մատուցումը նախատեսվել է իրականացնել է այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման հիման վրա և համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2019թ. դեկտեմբերի 15-ը, իսկ կանխարգելիչ և վերականգնողական տեխնիկական սպասարկման ստուգայցերն իրականացնել եռամսյա ընթացակարգով:

Արձանագրված անհամապատասխանություններ

Գնման ընթացակարգի չափաբաժինների վերաբերյալ.

Համաձայն Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջների, գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

Համաձայն Օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջների, արգելվում է խմբավորել առանձին բնութագրեր ունեցող գնման առարկաները մեկ չափաբաժնում, բացառությամբ այն դեպքերի, երբ պատվիրատուն հիմնավորում է նման խմբավորման անհրաժեշտությունը:

ՊԵԿ-ի կողմից շուրջ 86 անվանում (տեսակի) օդափոխության, օդորակման, ջեռուցման ու կաթսայատների սարքավորումների վերանորոգման, պահպանման և սպասարկման ծառայությունների ձեռք բերման գնման ընթացակարգը կազմակերպվել է մեկ չափաբաժնով, մինչդեռ դրանք ունեն տարբեր բնութագրեր և պետք է խմբավորվեին ըստ իրենց բնութագրերի ընդհանրության՝ երեք կամ չորս չափաբաժիններով:

Առկա է անհամապատասխանություն Օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ մասով և 3-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջների պահպանման հետ՝ առանձին բնութագրեր ունեցող գնման առարկաները խմբավորվել են մեկ չափաբաժնում և պայմանագրի կնքման նպատակով չի ապահովվել մասնակիցների շրջանակի ընդլայնման և նրանց միջև մրցակցության խրախուսման օրենքով սահմանված սկզբունքը:

Գնման առարկայի միավոր առավելագույն գների և բանակցությունների արդյունքների վերաբերյալ.

Համաձայն Կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետի, պատասխանատու ստորաբաժանումը կազմում և հաստատում է գնման հայտը, որը ի թիվս այլ պայմանների ներառում է նաև գնման առարկայի պահանջվող ծավալը և մեկ միավորի ձեռքբերման համար նախատեսված առավելագույն գինը:

Համաձայն Կարգի 21-րդ կետի 2-րդ ենթակետի, պատասխանատու ստորաբաժանումը, եթե գնման ընթացակարգը կազմակերպվում է օրենքի՝

ա. 15-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետի հիման վրա, ապա ապրանքների գնման դեպքում հայտով ներկայացվում է նաև ընթացակարգը կազմակերպելու կամ դրան նախորդող տարվա ընթացքում նմանատիպ ապրանքի ձեռքբերման նպատակով կնքված պայմանագրով (գործարքով) սահմանված մեկ միավորի գինը, եթե առկա է նման պայմանագիր (գործարք): Եթե նմանատիպ պայմանագիր առկա չէ, ապա դրա մասին հայտում կատարվում է նշում, իսկ գինը չի սահմանվում,

բ. 15-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետի հիման վրա, և առկա են պլանավորված, սակայն տվյալ գնման համար օրենքով սահմանված կարգով չնախատեսված ֆինանսական միջոցներ, հայտով ներկայացվում է նաև նմանատիպ ապրանքի, աշխատանքի կամ ծառայության ձեռքբերման համար պլանավորված մեկ միավորի առավելագույն գինը.

Համաձայն Օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի, ինչպես նաև մրցույթի հարավերի 5.1 կետի՝ առաջարկվող գինը, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների արժեքից բացի, ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից:

ՊԵԿ-ի կողմից սույն գնման ընթացակարգով նախահաշվային առավելագույն գինը սահմանվել է 35,000.0 հազ. դրամ, սակայն պատասխանատու ստորաբաժանման գնման հայտում չեն նշվել վերը նշված տվյալները և պայմանները:

Համաձայն Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի, եթե գնումն իրականացվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա՝

ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները,

բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, ըստ դրան ներկա մասնակիցների ներկայացրած գների, որոնք չեն գերազանցում գնման

հայտով սահմանված գինը, որոշվում ու հայտարարվում են ընտրված և հաջորդական տեղերն զբաղեցրած մասնակիցները:

27.02.2019թ. գների նվազեցման նպատակով տեղի ունեցած բանակցությունների արդյունքում «Կոնսէլ» ՍՊԸ-ն իր ներկայացրած գնային առաջարկը նվազեցվել է մինչև 15,000.0 հազ. դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն, առանց ԱԱՀ՝ 12,500.0 հազ. դրամ, իսկ ԱԶ Մեսրոպ Աղազարյանը իր ներկայացրած գնային առաջարկը թողել է անփոփոխ՝ 13,146.6 հազ.դրամ:

Գնահատող հանձնաժողովը որոշել է «Կոնսէլ» ՍՊԸ-ին ճանաչել առաջին տեղը զբաղեցրած մասնակից և 02.04.2019թ-ին վերջինիս հետ կնքվել է թիվ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-19/1 պայմանագիրը՝ 35,000.0 հազ. դրամ առավելագույն գնով:

«Կոնսէլ» ՍՊԸ-ի հետ նվազեցված գնով կնքված պայմանագրի գինը (առավելագույն գինը) սահմանվել է 35,000.0 հազ. դրամ, պայմանագրի թիվ 1.1 հավելված՝ ծառայությունների մատուցման միավոր գների գնացուցակով կանխարգելիչ և վերականգնողական տեխնիկական սպասարկման ծառայությունների գինը կազմել է 10,500.0 հազ. դրամ, իսկ շուրջ 413 մավոր սարքավորումների վերանորոգման, այդ թվում պահեստամասերի արժեքը, ծառայությունների միավոր գներով հաշվարկման գումարը կազմել 4,500.0 հազ. դրամ: Սարքավորումների գերակշիռ մասի վերանորոգման (ներառյալ պահեստամասերի արժեքը) ծառայությունների արժեքները սահմանվել են 0 դրամ:

Պայմանագրի շրջանակներում «Կոնսէլ» ՍՊԸ-ն մատուցել է միայն կանխարգելիչ և վերականգնողական տեխնիկական սպասարկման ծառայություններ և վերջինիս վճարվել է 10,500.0 հազ. դրամ, իսկ էականորեն և/կամ ամբողջությամբ նվազեցված գներով ծառայությունների մասով պայմանագրի գործողության ընթացքում փաստացի ծառայություններ չեն մատուցվել:

Առկա է անհամապատասխանություն՝

ա) Կարգի 21-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջների պահպանման հետ, այն է՝ պատասխանատու ստորաբաժանման հայտով չեն սահմանվել ոչ նախորդող տարվա ընթացքում նմանատիպ ապրանքի ձեռքբերման նպատակով կնքված պայմանագրով սահմանված մեկ միավոր գները կամ նմանատիպ պայմանագիր առկա չլինելու դեպքու դրա մասին նշում, ոչ էլ՝ նմանատիպ ծառայության ձեռքբերման համար պլանավորված մեկ միավորի առավելագույն գները,

բ) Օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի և մրցույթի հրավերի 5.1 կետի պահանջների կատարման հետ՝ հաղթող ճանաչված մասնակցի հետ կնքվել է ինքնարժեքից ցածր գնով ծառայությունների ձեռք բերման պայմանագիր,

գ) Օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված գնման ընթացակարգի կազմակերպման սկզբունքի պահպանման հետ, այն է՝ գնումների գործընթացը

հիմնվում գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպման սկզբունքի վրա, մինչդեռ պայմանագրի նվազեցված գինը բանակցություններից հետո պայմանագրում բաշխվել է միավոր ծառայությունների գների միջև ոչ համաչափ հիմունքներով, առանձին ծառայությունների պայմանագրային գների որոշումը (սահմանումը) տեղի է ունեցել ոչ մրցակցային, ոչ թափանցիկ և ոչ հրապարակային սկզբունքով, քանի որ միավոր գներով ծառայությունների ձեռք բերման գների իջեցման բանակցությունները տեղի են ունեցել ոչ թե բանակցությունների ժամանակ, այլ հաղթող ճանաչված մասնակցի հետ պայմանագիրը կնքելիս, որով մյուս մասնակցին հնարավորություն չի տրվել համադրելի մրցակցային առաջարկով հանդես գալ:

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը

Գնման ընթացակարգի չափաբաժինների վերաբերյալ անհամապատասխանության մասով՝ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-19/1 ծածկագրով գնումների էլեկտրոնային (ARMEPS) համակարգի միջոցով գնանշման հարցման ընթացակարգով Կոմիտեի կարիքների համար օդակարգավորման, օդափոխության, ջեռուցման համակարգի սարքավորումների վերանորոգման և պահպանման ծառայություններն արհեստական ձևով չեն հիմնավորվել, քանի որ գնման առարկան հանդիսացել է շենքերում տեղակայված սարքավորումների սպասարկումը և առկա է տվյալ գնման առարկայի մասով պատասխանատու ստորաբաժանման հիմնավորումը՝ Բագրատաշեն, Բավրա և Գոգավան մաքսակետերը կառուցվել են ՄԱԿ-ի ԲԲԳԱ ծրագրի շրջանակներում: Մաքսակետերի վարչական շենքերում ջեռուցման, օդափոխության և օդորակման համակարգերի նախագծման և շինմոնտաժման աշխատանքներն իրականացվել են վերոհիշյալ ծրագրի շրջանակներում: Զեռուցման, օդափոխության և օդորակման համակարգերը հիմնականում նախագծվել և կառուցվել են համանման ինժեներական սխեմաներով և լուծումներով տեղադրվել են միջազգային մաշտաբով բարձր որակավորում ունեցող առաջատար դիրք գրավող ֆիրմաների արտադրության, ինչպես նաև նմանատիպ տեխնիկական բնութագիր ունեցող սարքեր և սարքավորումներ: Մաքսակետերում վերոհիշյալ համակարգերն ապահովված են մեկ կենտրոնից էլեկտրոնային հեռահար կառավարման ծրագրերով:

Քանի որ երեք մաքսակետերում վերոհիշյալ համակարգերի մոնտաժման սխեմաները և տեխնիկական լուծումները հիմնականում նույնն են և տեղադրվել են նմանատիպ տեխնիկական բնութագրերով և ֆիրմային արտադրության սարքեր և սարքավորումներ, դրանց կառավարման և կարգավորման պահեստամասերը (պլատա) ունեն հատուկ ծրագրային ալգորիթմեր, ապա համակարգերի սպասարկման վերանորոգման և վերականգնողական ծառայությունների արդյունավետ և օպերատիվ կազ-

մակերպելու տեսանկյունից համակարգերը նպատակահարմար է դիտարկել որպես մեկ ամբողջություն:

Հաշվի առնելով վերոհիշյալը՝ երեք մաքսակետերի համակարգերի տեխնիկական սպասարկման կանխարգելիչ վերականգնողական և վերանորոգման ծառայությունների իրականացումն արդյունավետ կազմակերպելու նպատակով դրանց ձեռքբերումը դիտարկվել է որպես մեկ ամբողջականություն:

2. Գնման առարկայի միավոր առավելագույն գների և բանակցությունների արդյունքների վերաբերյալ անհամապատասխանությունների մասով՝

ա) պատասխանատու ստորաբաժանման հայտում հստակ սահմանված է ծառայության պլանավորված առավելագույն ընդհանուր գումարը՝ 35000.0 հազար դրամ (ծառայությունը համարվում է 1 ամբողջություն՝ 1 միավոր), այսինքն՝ պահպանվել են Կարգի 21-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջները:

Իսկ յուրաքանչյուր տեսակի մատուցման միավոր առավելագույն գինը հրավերով սահմանելու վերաբերյալ համապատասխան դրույթը հաստատվել է ՀՀ կառավարության 2019 թվականի մայիսի 2-ի N 516-Ն որոշման 32-րդ կետի 24-րդ ենթակետի համաձայն, ըստ որի ավտոմեքենաների, սարքերի և սարքավորումների վերանորոգման ծառայությունների գնման դեպքում, հրավերով սահմանվում է նաև ծառայության յուրաքանչյուր տեսակի մատուցման միավոր առավելագույն գինը, իսկ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է՝ հաշվի առնելով այդ առավելագույն գների հանրագումարը՝ նկատի ունենալով, որ կնքվող պայմանագրի շրջանակում մատուցվող ծառայությունների դիմաց վճարումներն իրականացվում են համապատասխան բանաձևով, որը տվյալ պարագայում կիրառելի չեն, քանի որ հրավերը հրապարակվել է 2019 թվականի փետրվարի 12-ին:

բ, գ) համաձայն ՊԵԿ-ԳՀԾՁԲ-19/1 ծածկագրով գնանշման հարցման հրավերի՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է **արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում:** Ինքնարժեք չի ներկայացնում և բանակցությունների ժամանակ կարող է գնային առաջարկը նվազեցնել այնքան, ինչքան կամենա՝ հաշվի առնելով օրենսդրական պահանջները, իսկ պատվիրատուն չի կարող արգելել գնի նվազեցմանը կամ մերժել այն, քանի որ ինքնարժեքի ցուցանիշ մասնակիցը չի ներկայացնում: Հետևաբար պայմանագիրը կնքվել է գնումների մասին ՀՀ օրենսդրությանը համապատասխան:

Հաշվեքննողների մեկնաբանությունը

Ներկայացված մեկնաբանությունները և առարկությունները ընդունելի չեն:

Տարբեր տեխնիկական բնութագրեր ունեցող գնման առարկաները մեկ չափաբաժնում խմբավորելու հիմնավորումը ըստ էության պետք է պարունակի տեխնիկական և արդյունավետության տեսանկյունից հիմնավորումներ, որոնք իրենց հերթին կհիմնավորեն գնումը առանձին չափաբաժիններով կազմակերպելու աննպատակահարմարությունը: Նշված դեպքում գնումը առանց որևէ խոչընդոտի, դժվարության և անհարմարությունների կարող էր իրականացվել առանձին չափաբաժիններով, միաժամանակ ապահովելով ավելի մրցակցային պայմաններ և մասնակիցների ընդլայնման հնարավորություն:

Կարգի 32-րդ կետի 23-րդ ենթակետով սահմանվում է, որ ավտոմեքենաների, սարքերի և սարքավորումների վերանորոգման ծառայությունների գնման դեպքում, **հրավերով** սահմանվում է նաև ծառայության յուրաքանչյուր տեսակի մատուցման միավոր առավելագույն գինը: Արձանագրված անհամապատասխանությունը չի վերաբերվում նշված կետին, այն առնչվում է Կարգի 21-րդ կետի 2-րդ ենթակետին, որով պատասխանատու ստորաբաժանումը պարտավոր էր **գնման հայտում** (ոչ թե հրավերում) սահմանել նմանատիպ ապրանքի ձեռքբերման նպատակով կնքված պայմանագրով սահմանված մեկ միավոր գները կամ նմանատիպ պայմանագիր առկա չլինելու դեպքում դրա մասին նշում, կամ սահմանել նմանատիպ ծառայության ձեռքբերման համար պլանավորված մեկ միավորի առավելագույն գները:

Արձանագրված անհամապատասխանությունը վերաբերվում է ոչ թե ներկայացված գնային առաջարկին (դրա ներկայացման ձևին կամ բովանդակությանը), այլ Օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի պահանջներին, որով առաջարկվող գինը չի կարող պակաս լինել դրա ինքնարժեքից:

10. Հագուստ-հանդերձանքի գնումների վերաբերյալ

«Գրասենյակային նյութեր և հագուստ» հոդվածով 2019 թվականի տարեկան պլանով նախատեսվել է 293.2 մլն դրամ, որից 174 մլն դրամը կազմել են հագուստի և հանդերձանքի ծախսերը, իսկ 119.2 մլն դրամը՝ գրասենյակային նյութերի գծով ծախսերը: Կատարված փոփոխությունների արդյունքում 2019 թվականի ճշտված պլանով (նաև գնումների պլանով) նշված հոդվածով ծախսը սահմանվել է 255.8 մլն դրամ, որից 139.7 մլն դրամը կազմել են հագուստի և հանդերձանքի գծով ծախսերը, իսկ 116.1 մլն դրամը՝ գրասենյակային նյութերի գծով ծախսերը: «Գրասենյակային նյութեր և հագուստ» հոդվածով 2019 թվականի դրամարկղի ծախսը կազմել է 207.5 մլն դրամ, որից 117.1 մլն դրամը կազմել են հագուստի և հանդերձանքի գծով ծախսերը, իսկ 90.4 մլն դրամը՝ գրասենյակային նյութերի գծով ծախսերը:

2019 թվականին ՊԵԿ-ը ձեռք է բերել շուրջ 117.1 մլն դրամի հագուստ և հանդերձանք, որից 2019 թվականին օգտագործել է ընդամենը 18.3 մլն դրամի պարագաներ, կամ 15.6 տոկոսը, իսկ 2020 թվականին՝ 34.8 տոկոսը:

Ընդ որում, 2019թ-ին ձեռք բերված շուրջ 34.2 մլն դրամի 15 անվանում և 17677 միավոր հանդերձանքից 2019 թվականին ընդհանրապես չի օգտագործվել, իսկ 2020 թվականին օգտագործվել է դրանց ընդամենը 41 տոկոսը:

2019 թվականին ձեռք բերված շուրջ 38.2 մլն դրամի 10 անվանում և 17290 միավոր հանդերձանքի սպառումը 2019 թվականին կազմել է մինչև 10 տոկոս, իսկ 2020 թվականին սպառվել է դրանց ընդամենը 45 տոկոսը:

2019 թվականին ձեռք բերված հանդերձանքի մնացած մասով 2019 և 2020 թվականների սպառումը ընդհանուր առմամբ չի գերազանցել 50.4 տոկոսը:

[illegible]

տաբատ/													
Գլխարկ /ձմեռային/	հատ	12	63,936	16	85,248	15	3	12	79,920	15,984	63,936	13	69,264
Կիսաճտքավոր կոշիկներ /կաշվից, սև գույնի/	զույգ	0	0	290	4,290,840	130	130	0	1,923,480	1,923,480	0	160	2,367,360
Աստղեր լեյտենանտից - կապիտան	հատ	0	0	1,100	99,000	0	0	0	0	0	0	1,100	99,000
Կոշիկ տղամարդու /կաշվից սև գույնի/	զույգ	0	0	700	5,275,200	180	180	0	1,356,480	1,356,480	0	520	3,918,720
Կիսաշրջագգեստ /կիսաբրոյա/ կանացի	հատ	0	0	65	337,350	55	55	0	285,450	285,450	0	10	51,900
Աստղեր կրտսեր լեյտենանտից - կապիտան /փոքր/	հատ	0	0	867	26,010	0	0	0	0	0	0	867	26,010
Աստղեր մայորից - գնդապետ /մեծ/	հատ	0	0	1,500	60,000	318	318	0	12,720	12,720	0	1,182	47,280
Կոճակ փոքր	հատ	0	0	11,000	382,800	776	279	497	27,005	9,709	0	10,224	355,795
Ձեռնոց տղամարդու /բնական սև կաշվից/	զույգ	0	0	700	3,360,000	279	279	0	1,339,200	1,339,200	0	421	2,020,800
Ձեռնոց կանանց համար /բնական սև կաշվից/	զույգ	0	0	130	624,000	58	58	0	278,400	278,400	0	72	345,600
Գոտի տաբատի սինթետիկ 35մմ լայն-մբ մետաղյա ճարմանդանով	հատ	0	0	500	720,000	86	86	0	123,840	123,840	0	414	596,160
Գոտի տաբատի սինթետիկ 35մմ լայն-մբ զենք և հատուկ միջոցներ կրելու պատյանով	հատ	0	0	300	1,436,400	0	0	0	0	0	0	300	1,436,400
Գոտի տաբատի սինթետիկ 35մմ լայն-մբ մետաղյա ճարմանդով կանանց համար	հատ	0	0	100	144,000	13	13	0	18,720	18,720	0	87	125,280
Գլխարկ բրոյա մուգ կապույտ կտորից	հատ	0	0	400	1,920,000	8	8	0	38,400	38,400	0	392	1,881,600
Կոշիկ կանացի /սև գույնի, կաշվից/	զույգ	0	0	130	1,039,740	41	41	0	327,918	327,918	0	89	711,822
Կոշիկ կիսաճտքավոր /սև գույնի, կաշվից/	զույգ	0	0	410	6,066,360	88	88	0	1,302,048	1,302,048	0	322	4,764,312
Շապիկ տրիկոտաժե /սպիտակ գույնի, կլոր օձիքով/	հատ	0	0	800	758,400	14	14	0	13,272	13,272	0	786	745,128
Շապիկ տրիկոտաժե կանացի/սպիտակ գույնի,կարճաթև,կլոր օձիքով/	հատ	0	0	130	117,000	12	12	0	10,800	10,800	0	118	106,200

Վերնաշապիկ կարճաթև ամառային ուսադիրներով, կանացի/սպիտակ գույնի/	հատ	0	0	130	415,740	0		0	0	0	0	130	415,740
Վերնաշապիկ կարճաթև ամառային ուսադիրներով, կանացի / բաց երկնագույն /	հատ	0	0	130	415,740	1	1	0	3,198	3,198	0	129	412,542
Վերնաշապիկ երկարաթև ձմեռային ուսադիրներով, կանացի / սպիտակ գույնի /	հատ	0	0	130	441,480	81	81	0	275,076	275,076	0	49	166,404
Վերնաշապիկ երկարաթև ձմեռային ուսադիրներով, կանացի / բաց երկնագույն /	հատ	0	0	130	441,480	69	69	0	234,324	234,324	0	61	207,156
Կիսավերարկու ձմեռային, ուսադիրներով, կանացի / մուգ կապույտ, անջրանցիկ/	հատ	0	0	50	534,900	35	35	0	374,430	374,430	0	15	160,470
Սվիտեր /կանանց համար նախատեսված/	հատ	0	0	130	1,131,000	90	90	0	783,000	783,000	0	40	348,000
Վերնաշապիկ տղամարդու երկարաթև՝ (ամառային կամ ձմեռային) ուսադիր-վ,բաց երկնագույն	հատ	0	0	600	2,757,600	0		0	0	0	0	600	2,757,600
Վերնաշապիկ տղամարդու երկարաթև՝ (ամառային կամ ձմեռային) ուսադիր-վ,բաց երկնագույն	հատ	0	0	400	1,963,200	3	3	0	14,724	14,724	0	397	1,948,476
Կիսավերարկու՝ ձմեռային, ուսադիրներով, տղամարդու /մուգ կապույտ,անջրանցիկ/	հատ	0	0	700	10,920,000	24	24	0	374,400	374,400	0	676	10,545,60 0
Ուսադիր կոշտ / հանվող /	հատ	0	0	4,120	4,120,000	0		0	0	0	0	4,120	4,120,000
Ուսադիր կոշտ / կարվող /	հատ	0	0	1,000	1,000,000	0		0	0	0	0	1,000	1,000,000
Վզպատ թաշկինակ՝ տղամարդու, սպիտակ	հատ	0	0	500	1,000,000	0		0	0	0	0	500	1,000,000
Վզպատ թաշկինակ՝ կանացի, սպիտակ	հատ	0	0	130	260,000	0		0	0	0	0	130	260,000
Ուսադիր փափուկ	հատ	0	0	400	319,200	0		0	0	0	0	400	319,200
Ընդամենը		1,372	6,973,614	44,163	117,095,120	4,751	3,613	1,138	20,606,377	18,288,411	2,300,670	40,784	103,462,357

Հ/հ	Ապրանքի անվանումը	Չ/մ	2019թ. մնացորդ սկզբում	2019թ. ձեռքբերում		2019թ. ծախս	2019թ. մնացորդ վերջում		2020թ. ծախս	
			քանակ	քանակ	գումար	քանակ	քանակ	գումար	քանակ	գումար
071027	Տաբատ կանացի՝ կ/բրդյա, կ/բամբակյա, մուգ կապույտ	հատ	0	130	975,000	0	130	975,000	124	930,000
071033.	Սպայական կաշվե կոշիկ / տղամարդու/	զույգ	0	500	3,204,000	0	500	3,204,000	132	845,856
071044	Բաճկոն տղամարդու կ/բրդյա ուսադիրներով, մուգ կատույտ	հատ	0	700	17,148,600	0	700	17,148,600	396	9,701,208
071053	Թևքանշան /ՀՀ մաքսային ծառայության տարբերանշանով/	հատ	0	2,200	1,078,000	0	2,200	1,078,000	0	0
071063	Կոճակ մեծ	հատ	0	5,000	354,000	0	5,000	354,000	0	0
071090	Աստղեր լեյտենանտից - կապիտան	հատ	0	1,100	99,000	0	1,100	99,000	200	18,000
071093	Աստղեր կրտսեր լեյտենանտից - կապիտան /փոքր/	հատ	0	867	26,010	0	867	26,010	0	0
071099	Գոտի տաբատի սինթետիկ 35մմ լայն-մբ գենք և հատուկ միջոցներ կրելու պատյանով	հատ	0	300	1,436,400	0	300	1,436,400	6	28,728
071106	Վերնաշապիկ կարճաթև ամառային ուսադիրներով, կանացի/սպիտակ գույնի/	հատ	0	130	415,740	0	130	415,740	72	230,256
071112	Վերնաշապիկ տղամարդու երկարաթև՝ (ամառային կամ ձմեռային) ուսադիր-վ, բաց երկնագույն	հատ	0	600	2,757,600	0	600	2,757,600	79	363,084
071114	Ուսադիր կոշտ / հանվող /	հատ	0	4,120	4,120,000	0	4,120	4,120,000	671	671,000
071115	Ուսադիր կոշտ / կարվող /	հատ	0	1,000	1,000,000	0	1,000	1,000,000	428	428,000
071116	Վզպատ թաշկինակ՝ տղամարդու, սպիտակ	հատ	0	500	1,000,000	0	500	1,000,000	215	430,000
071117	Վզպատ թաշկինակ՝ կանացի, սպիտակ	հատ	0	130	260,000	0	130	260,000	72	144,000
071118	Ուսադիր փափուկ	հատ	0	400	319,200	0	400	319,200	340	271,320
	Ընդամենը		0	17,677	34,193,550	0	17,677	34,193,550	2,735	14,061,452

Հ/ h	Ապրանքի անվանումը	Չափման միավոր	2019թ. մնացորդ սկզբում քանակ	2019թ. ձեռքբերում		2019թ. ծախս		2019թ. մնացորդ վերջում		2020թ. ծախս	
				քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար
1	Կրծքի մակագրություն համազգեստի /հայերեն և անգլերեն/ մաքսային ծառայություն	հատ		2,900	1,421,000	40	19,600	2,860	1,401,400	420	205,800
2	Գարնանային - աշնանային անձրևանոց կանացի	հատ		130	1,400,880	4	43,104	126	1,357,776	15	161,640
3	Տարազաբաճկոն տղամարդու/կիսաբրդյա, մուգ կապույտ/	հատ		700	18,900,000	37	999,000	663	17,901,000	454	12,258,000
4	Կոճակ փոքր	հատ		11,000	382,800	776	27,005	10,224	355,795	806	28,049
5	Գլխարկ բրդյա մուգ կապույտ կտորից	հատ		400	1,920,000	8	38,400	392	1,881,600	90	432,000
6	Շապիկ տրիկոտաժե /սպիտակ գույնի, կլոր օձիքով/	հատ		800	758,400	14	13,272	786	745,128	63	59,724
7	Շապիկ տրիկոտաժե կանացի/սպիտակ գույնի,կարճաթև,կլոր օձիքով/	հատ		130	117,000	12	10,800	118	106,200	84	75,600
8	Վերնաշապիկ կարճաթև ամառային ուսադիրներով, կանացի / բաց երկնագույն /	հատ		130	415,740	1	3,198	129	412,542	102	326,196
9	Վերնաշապիկ տղամարդու երկարաթև՝ (ամառային կամ ձմեռային) ուսադիր-վ,բաց երկնագույն	հատ		400	1,963,200	3	14,724	397	1,948,476	79	387,732
10	Կիսավերարկու՝ ձմեռային, ուսադիրներով, տղամարդու /մուգ կապույտ,անջրանցիկ/	հատ		700	10,920,000	24	374,400	676	10,545,600	197	3,073,200
	Ընդամենը		0	17,290	38,199,020	919	1,543,503	16,371	36,655,517	2,310	17,007,941

Արձանագրված անհամապատասխանություններ

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի, օրենքի նպատակն է ապահովել պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ:

Համաձայն «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ և 8-րդ հոդվածի 7-րդ մասերի դրույթների՝ ՀՀ բյուջետային համակարգի սկզբունքներից է բյուջետային միջոցների օգտագործման արդյունավետությունը, ինչը նշանակում է, որ բյուջեների կազմման և կատարման ժամանակ պետք է ելնել նախատեսված արդյունքի բյուջետային միջոցների նվազագույն ծավալի օգտագործմամբ կամ բյուջեով նախատեսված միջոցների ծավալով լավագույն արդյունքի հասնելու անհրաժեշտությունից:

ՊԵԿ կողմից 2019 թվականին հանդերձանքի պլանավորման և ձեռքբերումների մասով չեն պահպանվել «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ մասով և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ բյուջետային միջոցների արդյունավետ օգտագործման և լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան գնումների իրականացման սկզբունքները, որի արդյունքում ձեռք բերված 117.1 մլն դրամի հանդերձանքի շուրջ 50 տոկոսի չափով գնումը կատարվել է անհրաժեշտ կարիքին ոչ համարժեք:

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը

Կոմիտեն մաքսային մարմնի հանրային ծառայողի համազգեստը ձեռք է բերում հիմք ընդունելով պետական մարմինների բյուջետային հայտերի (կառավարման ապարատ, Ձև 13) կազմման ժամանակ ներկայացված տվյալները, որոնք գոյանում են հաշվի առնելով ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2013 թվականի հուլիսի 19-ի «Մաքսային ծառայողներին համազգեստ տրամադրելու և այն կրելու կարգն ու պայմանները սահմանելու մասին» թիվ 320-Ա

հրամանը, Կոմիտեի պահեստում առկա ապրանքատեսակների մնացորդը, ինչպես նաև մաքսային ծառայողների փոփոխությունները (նոր մաքսային ծառայողների աշխատանքի նշանակում, ազատում, ինչպես նաև պաշտոնների և մաքսային ծառայության կոչումների փոփոխություններ):

2019 թվականին Կոմիտեն մաքսային մարմնի հանրային ծառայողի համազգեստի գնման գործընթացը կազմակերպելիս, վերը նշված հանգամանքներից բացի, հաշվի է առել նաև նախանշվող կառուցվածքային և կադրային բարեփոխումները, համաշխարհային մակարդակով Կորոնավիրուսային համավարակի տարածման տենդենցները (վերջինիս բերովի դեպքով/դեպքերով (COVID-19) պայմանավորված արդեն 2020 թվականի մարտի 16-ից Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում ևս հաստատվեց հատուկ իրավական ռեժիմ՝ հայտարարվեց արտակարգ դրություն, արգելվեցին մի շարք տնտեսական գործունեության տեսակներ, այդ թվում՝ տեքստիլի արտադրությունը), ինչպես նաև այն հանգամանքը, որ ձեռքբերվող համազգեստի տեսակների 2019 թվականի սկզբնական մնացորդը կազմել է զրո, ինչն ակնհայտ երևում է նաև Արձանագրության 41-ից 43-րդ էջերով ներկայացված ցանկում:

Այսպիսով, Կոմիտեն 2019 թվականին ձեռք է բերել շուրջ 44 անվանում (թվով 44,062 հատ) ապրանքատեսակ՝ 116,543,600 դրամ ընդհանուր արժեքով, որից 9,380 հատ ապրանքատեսակ՝ շուրջ 59,363,600 դրամ ընդհանուր արժեքով մատակարարվել է միայն 2019 թվականի դեկտեմբերի 18-ից 24-ը ընկած ժամանակահատվածում:

Վերը նշված ցանկում առկա են նաև այնպիսի ապրանքատեսակներ, որոնց գնման գործընթացն ավարտվել և ապրանքատեսակները մատակարարվել են այն ժամանակ, երբ անցում է կատարվել այլ սեզոնային համազգեստի կրման, արդյունքում 2019 թվականին տվյալ ապրանքատեսակների ելքագրում ևս չի իրականացվել:

Հարկ ենք համարում նշել նաև, որ Արձանագրության 41-ից 43-րդ էջերով ներկայացված ցանկում ներառված են ապրանքատեսակներ, որոնք չեն հանդիսանում 2019 թվականի գնում: Մասնավորապես, ցանկում ներառված թվով 16 հատ գոտին, թվով 36 հատ մետաղական տարբերանշանը, թվով 32 հատ լաքապատ գլխարկահովհարով գլխարկը, թվով 1 հատ կոստյումը /տարազաբաճկոն, տաբատ/ և թվով 16 հատ գլխարկը /ձմեռային/ հանդիսանում են պահեստի մուտք, որն իրականացվել է Կոմիտեի գործերի կառավարման վարչության կողմից (ելքագրված ապրանքի հետ մուտքագրում), այլ ոչ թե հանդիսանում է գնում:

Բացի այդ, ներկայացված թվով 753 հատ՝ 4 518 000 դրամ ընդհանուր արժեքով մետաղական տարբերանշանը հանդիսանում է դեռևս 2014 թվականին ձեռք բերված ապրանքատեսակի մնացորդ: Վերը նշված տարբերանշանները տրամադրվում են մաքսային ծառայողներին, ովքեր աշխատանքից ազատվելու դեպքում դրանք մշտապես վերադարձնում են Կոմիտեի պահեստ, որը և Կոմիտեի գործերի կառավարման վարչության կողմից հետ է մուտքագրվում պահեստ: Ուստի, մետաղական տարբերանշանների ներառումը վերոգրյալ ցանկում գտնում ենք ոչ նպատակահարմար:

Հայտնում ենք նաև, որ Արձանագրության 44-ից 45-րդ էջերում ներառված ցանկն ամբողջական չէ, մասնավորապես ցանկում ներառված չէ թվով 1937 հատ ապրանքատեսակ՝ ընդհանուր 9 733 538 դրամ արժեքով: Արդյունքում ստացվում է, որ Կոմիտեն 2020 թվականին ելքագրել է 2019 թվականին ձեռքբերված թվով 7300 հատ ապրանքատեսակ՝ ընդհանուր 42 334 946 դրամ արժեքով, այլ ոչ թե թվով 5045 հատ՝ ընդհանուր 31 069 393 դրամ արժեքով:

Հաշվեքննողների մեկնաբանությունը

Ներկայացված մեկնաբանությունները և առարկությունները ընդունելի չեն:

Թե 2019թ. գնումների պլանավորման և թե գնումների կատարման ժամանակահատվածում համավարակը գործոն հանդիսանալ չէր կարող և ըստ էության ձեռք են բերվել նախապես պլանավորված ապրանքատեսակները, այլ ոչ թե համավարակի համաշխարհային տենդենցներով պայմանավորված ճշտված պլանով նախատեսված ապրանքները:

Ներկայացված մեկնաբանությունը առ այն, որ «Կոմիտեն 2019 թվականին ձեռք է բերել շուրջ 44 անվանում (թվով 44,062 հատ) ապրանքատեսակ՝ 116,543,600 դրամ ընդհանուր արժեքով, որից 9,380 հատ ապրանքատեսակ՝ շուրջ 59,363,600 դրամ ընդհանուր արժեքով մատակարարվել է միայն 2019 թվականի դեկտեմբերի 18-ից 24-ը ընկած ժամանակահատվածում» և, որ «ցանկում առկա են նաև այնպիսի ապրանքատեսակներ, որոնց գնման գործընթացն ավարտվել և ապրանքատեսակները մատակարարվել են այն ժամանակ, երբ անցում է կատարվել այլ սեզոնային համազգեստի կրման», փաստում է արձանագրված անհամապատասխանության օբյեկտիվության՝ բյուջետային միջոցների արդյունավետ օգտագործման և լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան գնումների իրականացման սկզբունքների չպահպանման մասին:

Ներկայացված առարկությունները առ այն, որ եզրակացության աղյուսակներում ներառված են այնպիսի ապրանքներ, որոնք չեն հանդիսացել գնում, ընդունելի են հաշվեքննողների համար, սակայն դրանց ծավալը և արժեքը (հաշվի առանձ ինչպես մուտքերի, այնպես էլ ելքի (ծախսերի) ազդեցությունը հաշվարկների վրա) չի ազդում արձանագրված անհամապատասխանության վրա:

Առաջարկություն հաշվեքննության օբյեկտին

Սահմանել պատասխանատու ստորաբաժանումների գնման հայտերի իրատեսությունը և կարիքին համարժեքությունը գնահատող մեխանիզմներ և չափորոշիչներ, այդ թվում՝ գնումը կատարելու ժամանակացույցներ:

11. Ակցիզային դրոշմանիշների և (կամ) դրոշմապիտակների վերաբերյալ

Ակցիզային դրոշմանիշների և դրոշմապիտակների ձեռքբերում միջոցառումների համար ՊԵԿ 2019 թվականի տարեկան պլանով նախատեսվել է համապատասխանաբար 1,499,760.0 հազ. դրամ և 3,026,400.0 հազ. դրամ, ճշտված պլանով համապատասխանաբար՝ 1,897,200.0 հազ. դրամ և 4,462,800 հազ. դրամ, դրամարկղային ծախսը՝ 1,897,135.2 հազ. դրամ և 4,462,781.4 հազ. դրամ:

28.12.2018թ-ին ՊԵԿ կողմից պետական գնումների էլեկտրոնային հարթակում հրապարակված «Ծխախոտ, ակոհոլային խմիչք տեսակների ակցիզային դրոշմանիշների և դրոշմապիտակների տպագրություն» ՊԵԿ-ԷԱՃԱՇՁԲ-19/1-1 գնման ընթացակարգով նախատեսվել է ձեռք բերել՝

Չափաբաժիններ	Ապրանքի, ծառայության, աշխատանքի անվանումը	Մակագրությունը	քանակ /հատ/	Նախահաշվային գինը /դրամ/
1	««ԱԼԿՈՆՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔ»» տեսակի ակցիզային դրոշմանիշ	Ներմուծում	14,070,000	131,695,200
2	««ԾԽԱԽՈՏ»» տեսակի ակցիզային դրոշմանիշ	Ներմուծում Տեղական	380,000,000	1,368,000,000
3	Պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքների պոլիմերային թաղանթի հիմքով դրոշմապիտակ	Ներմուծում Տեղական	800,630,000	3,026,381,400

Համաձայն մրցույթի տեխնիկական բնութագրերի, ի թիվս ակցիզային դրոշմանիշների և դրոշմապիտակների տպագրական աշխատանքների, յուրաքանչյուր չափաբաժնով նախատեսվել է նաև ձեռք բերել.

- ծրագրային ապահովում, որը պետք է պարունակի՝
 - ֆայլերի և հաշվետվությունների արխիվ,
 - դերերի և հասանելիության կառավարման մոդուլ,
 - ստանդարտ (նախապես ծրագրավորված) հաշվետվությունների մշակման մոդուլ,

- օգտվողների կողմից գործողությունների և ավտոմատ գործողությունների պատմության մոդուլ (իրադարձությունների մատյան),
- 2D կոդի ընթերցման սարքից ստացված հարցմանը համապատասխան, շտեմարանից փոխանցվող տվյալների ձևավորման մոդուլ:
- մատուցել ՀՀ ՊԵԿ-ում գործող «Դրոշմապիտակների և դրոշմանիշերի վերագրման, հաշվառման» էլեկտրոնային համակարգի և դրանց ենթահամակարգերի սպասարկման ծառայություններ, ապահովելով դրանց անխափան աշխատանքը (հայտնաբերված խնդիրների ուղղում, օրենսդրական փոփոխություններից բխող ծրագրային փոփոխությունների իրականացում, համակարգի օպտիմալացում):
- երկչափ 2D-կոդի գեներացում, ինչով հնարավոր կլինի կարդալ Apple iOS, Android 7, Windows Mobile 8 օպերացիոն համակարգերից որևէ մեկով աշխատող համընդհանուր օգտագործման էլեկտրոնային մոբիլ սարքով (քջջային հեռախոս, iPad, ...), որն ունի տեսախցիկ և որում նախորոք ներբեռնվել է 2D-կոդի ընթերցման ծրագիր: 2D – կոդում ներառված տվյալների հիման վրա(տվյալները պետք է պարունակեն համակարգի URL հասցեն), սարքը անմիջապես ինտերնետ կապուղիով համակարգի սերվերին պետք է փոխանցի տվյալ ապրանքի համարանիշը, որի վերաբերյալ ստանա և արտապատկերի սարքի էկրանի վրա տվյալ ապրանքի համար համակարգի տվյալների շտեմարանում գրանցված համապատասխան տվյալները, մասնավորապես, արտադրող կամ ներմուծող կազմակերպության անվանումը, հասցեն, հարկային կոդը, ապրանքատեսակը, տարողությունը և այլն: Էլեկտրոնային կոդի գեներացման ծրագիրը և ալգորիթմը չի փոխանցվում ՀՀ ՊԵԿ-ին սեփականության իրավունքով:
- պայմանագրով մատուցված ծառայությունների արդյունքները հանդիսանում են պատվիրատուի սեփականությունը: Պատվիրատուն իրավունք ունի այն օգտագործել ՀՀ պետական եկամուտների կոմիտեի համակարգում՝ առանց սահմանափակումների:
- Կատարողը պատվիրատուին է տրամադրում համակարգերի փոփոխությունների ծրագրային ապահովմանն առնչվող ամբողջ նյութերը (ծրագրային կոդեր, գրադարաններ, ֆայլեր, փաթեթներ և այլ ծրագրային ապահովումներ), որոնք հարկավոր են համակարգի բնականոն աշխատանքի և նոր ապարատային ապահովման վրա համակարգի ներդրման, կոնֆիգուրացման, շահագործման համար:
- ցանկացած լրամշակման հանձնման հիման վրա Պատվիրատուի և Կատարողի միջև կազմվում է հանձնման/ընդունման ակտ:
- սպասարկման ծառայության մատուցումը նախատեսվել է իրականացնել այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցների առկայության և դրա

հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման հիման վրա՝ համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 180 օրացույցային օրվա ընթացքում:

Տեխնիկական բնութագրով նախատեսվել է նաև Պատվիրատուի պահանջի դեպքում Կատարողի կողմից աշխատանքի արդյունքի հանձնման ժամանակ Միջազգային հոլոգրամ արտադրողների ասոցիացիայի անդամի (IHMA) հավաստագրի պատճենի ներկայացում:

Կատարողը պարտավոր է մինչև աշխատանքի արդյունքի առաջին խմբաքանակի հանձնումը Պատվիրատուին՝ իր միջոցների հաշվին իրականացնել դրոշմանիշների և դրոշմապիտակների նմուշների փորձաքննություն:

Կատարողը պարտավոր է ներկայացնել ՀՀ կառավարության 22.08.2002թ. թիվ 1458-Ն որոշմամբ նախատեսված որակավորման չափորոշիչներից մասնագիտական որակավորման չափանիշներին ներկայացվող պահանջներին համապատասխանելու վերաբերյալ տեղեկանքը:

Հաշվեքննության ընթացքում ՊԵԿ-ից պահանջված տեղեկություններին և բացատրություններին (03.11.2021թ. N ՀՊԵ-ՎԱ-232 գրություն) ի պատասխան ՊԵԿ-ը ներկայացրել է հետևյալ պարզաբանումներ.

- Տվյալ ընթացակարգի գնման հիմնական առարկան հանդիսացել է դրոշմապիտակների և դրոշմանիշների գնումը, իսկ ծրագրային ապահովումները տվյալ պարագայում հանդիսացել են լրացուցիչ ուղեկցող հաշվառման և նույնականացման գործիք և քանի որ յուրաքանչյուր տարի հայտարարվում է նոր մրցույթ, որի արդյունքում հաղթող կարող էր ճանաչվել նախորդ հաղթողից տարբերվող կազմակերպություն, ուստի ինչպես ցանկացած գնման մրցույթում, այնպես էլ այս դեպքում, անհրաժեշտ է նախատեսել այնպիսի պայմաններ, որոնք ոչ մի պարագայում չեն խոչընդոտի հաղթողի կողմից պայմանագրի դրույթների իրականացումը:
- Դիտարկվող պայմանագրում համակարգչային ծրագրերը հանդիսացել են կապալառուի կողմից մշակված 2D կոդի սպասարկման միջոց, և քանի որ կողմը հանդիսացել է կապալառու կազմակերպության մտավոր սեփականությունը, ապա նոր կապալառուի կողմից նոր 2D կոդ ներդնելու պարագայում կառաջանար նոր անհարժեշտություն նոր ծրագրի ներդրման, իսկ նախկին գործող ծրագրի շահագործումը կդառնար անհնար կամ մեծ դժվարությունների պատճառ կհանդիսանար, հետևաբար նաև համակարգերի սպասարկման ծառայությունները և տպագրական աշխատանքների ձեռքբերումը խմբավորվել են մեկ չափաբաժնում:

- Տեխնիկական բնութագրով նախատեսված ծրագրային սպասարկումը վերաբերվում է դրոշմապիտակների և դրոշմանիշերի վերագրման, հաշվառման «ՎԵՐՈ» էլեկտրոնային համակարգին, սպասարկման ծառայությունները ներառել են «ՎԵՐՈ» համակարգի սպասարկումը ամբողջությամբ:

Հաշվեքննության ընթացքում ՊԵԿ-ից պահանջված հետևյալ հարցերի (03.11.2021թ. N ՀՊԵ-ՎԱ-232 գրություն) վերաբերյալ ՊԵԿ-ի կողմից տեղեկություններ և բացատրություններ չեն ներկայացվել:

- Արդյոք մրցույթով նախատեսվել է ձեռք բերել դրոշմավորված ապրանքների նույնականացման ծրագրային ապահովում, մասնավորապես՝ Tax Stamp ծրագիրը:
- Եթե Tax Stamp ծրագրի ձեռք բերումը չի իրականացվել վերը նշված գնման ընթացակարգով, պահանջվել է ներկայացնել տեղեկություններ տվյալ գնման ընթացակարգի և մատակարար կազմակերպության վերաբերյալ:
- Պահանջվել է պարզաբանել, որ եթե մրցույթի արդյունքում գնման ընթացակարգով ներկայացված երեք չափաբաժինների մասով տարբեր կազմակերպություններ հաղթող ճանաչվեին, ինչպես և որ կազմակերպությունը պետք է իրականացներ ծառայությունների մատուցումը՝ ծրագրային սպասարկման աշխատանքները և ծրագրային ապահովումների մշակումները:
- Պահանջվել է ներկայացնել ՀՀ կառավարության 22.08.2002թ. թիվ 1458-Ն որոշմամբ նախատեսված որակավորման չափորոշիչներից մասնագիտական որակավորման չափանիշներին ներկայացվող պահանջներին համապատասխանելու վերաբերյալ տեղեկանք:
- Պահանջվել է տրամադրել կնքված պայմանագրի շրջանակում ծրագրային լրամշակումների հանձնման հիման վրա Պատվիրատուի և Կատարողի միջև կազմված հանձնման-ընդունման ակտերի պատճենները:

Համաձայն Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

- 1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.
- 2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Համաձայն Օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝

- 1) մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը,
- 2) մասնագիտական փորձառություն,
- 3) տեխնիկական միջոցներ,
- 4) ֆինանսական միջոցներ,
- 5) աշխատանքային ռեսուրսներ:

Համաձայն Օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի՝ չեն կարող սահմանվել մասնակցի՝ գնումներին մասնակցելու իրավունքի և որակավորման հետ կապված այնպիսի չափանիշներ, որոնք՝

- 1) նախատեսված չեն սույն հոդվածով.
- 2) խտրական են և սահմանափակում են մրցակցությունը՝ անհիմն կերպով բարդացնում կամ պարզեցնում են հնարավոր մասնակցությունը գնման գործընթացին.
- 3) համարժեք չեն՝ ուղղակիորեն չեն բխում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման անհրաժեշտությունից:

Համաձայն Օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ մասի՝ արգելվում է խմբավորել առանձին բնութագրեր ունեցող գնման առարկաները մեկ չափաբաժնում, բացառությամբ այն դեպքերի, երբ պատվիրատուն հիմնավորում է նման խմբավորման անհրաժեշտությունը:

Համաձայն Օրենքի 28-րդ հոդվածի 4-րդ մասի՝ հրավերը պետք է պարունակի որակավորման չափանիշները, մասնակցության իրավունքի պահանջները և դրանց գնահատման կարգը:

Համաձայն Օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

Արձանագրված անհամապատասխանություններ

1. ՊԵԿ-ԷԱՃԱՇՁԲ-19/1-1 գնման ընթացակարգի հրավերով սահմանվել են դրոշմապիտակների և դրոշմանիշների տպագրության ծառայությունների, ծրագրային ապահովումների և ծրագրային ապահովման սպասարկման ձեռքբերումներ: Պեկ կողմից տարբեր տեխնիկական բնութագրեր ունեցող ծառայությունները մեկ չափաբաժնում ներկայացնելու վերաբերյալ տրված պարզաբանումը ըստ էության ոչ թե հիմնավորել է դրա անհրաժեշտությունը, այլ հակառակը, քանի որ «տարբեր կապալառուների կամ նոր կապալառուի դեպքում նախկին գործող 2D կողմի գեներացման ծրագիրը կդառնար անհնար կամ դժվարությամբ իրագործելի» ձևակերպումը փաստում է, որ 2D կողմի գեներացման ծրագիրը պետք է լիներ առանձին գնում, հետևաբար այն կաող էր դառնալ ՊԵԿ-ի սեփականությունը և կողմերի գեներացումը ու տպագրական ծառայություններ մատուցող կապալառուներին տրամադրումը կկատարվեր առանց բարդությունների և խոչընդոտների: Մնացած ծառայությունների մասով՝ «ՎԵՐՈ» համակարգի սպասարկման ծառայությունների և 2D կողմի ընթերցման սարքից տվյալների փոխանակման ծրագրային ապահովման գնման առարկաների մեկ չափաբաժնում միավորելու վերաբերյալ ՊԵԿ-ի կողմից հիմնավորումներ չներկայացնելը առավել ևս փաստում են դրանց բացակայության մասին: Միաժամանակ՝ նման պայմաններով կազմակերպված մրցույթի արդյունքում տարբեր կապալառուների պայմանագրեր շնորհելու դեպքում հնարավոր չէր լինի որոշել, թե որ կազմակերպությունն էր սպասարկելու «ՎԵՐՈ» համակարգը և որ կազմակերպությունն էր իրականացնելու մրցույթի տեխնիկական բնութագրով նկարագրված դրոշմավորված ապրանքների նույնականացման ծրագրային ապահովման մշակումը:

Սույնով առկա է անհամապատասխանություն Օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջների կատարման հետ, որով արգելվում է խմբավորել առանձին բնութագրեր ունեցող գնման առարկաները մեկ չափաբաժնում, բացառությամբ այն դեպքերի, երբ պատվիրատուն հիմնավորում է նման խմբավորման անհրաժեշտությունը:

2. ՊԵԿ-ի կողմից տպագրական ծառայությունների գնման ընթացակարգով միաժամանակ ծրագրային ապահովումների և ծրագրային ապահովման սպասարկման ծառայությունների ձեռք բերում նախատեսելը, ինչպես նաև դրոշմապիտակների և դրոշմանիշների փորձաքննության հետ մեկտեղ միջազգային հոլդգրամ արտադրողների ասոցիացիայի անդամի (IHMA) հավաստագրի և ՀՀ կառավարության 22.08.2002թ. թիվ 1458-Ն որոշմամբ նախատեսված տեղեկանքի ներկայացման պահանջը ըստ էության սահմանափակում և գրեթե անհնար է դարձնում մրցույթին մասնակցությունը:

Սույնով առկա է անհամապատասխանություն Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի և 6-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջների պահպանման հետ, որով գնումների գործընթացը հիմնվում է գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպման և պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնման և նրանց միջև մրցակցության խրախուսման սկզբունքների վրա և չեն կարող սահմանվել մասնակցի՝ գնումներին մասնակցելու իրավունքի և որակավորման հետ կապված այնպիսի չափանիշներ, որոնք խտրական են և սահմանափակում են մրցակցությունը՝ անհիմն կերպով բարդացնում կամ պարզեցնում են հնարավոր մասնակցությունը գնման գործընթացին, համարժեք չեն՝ ուղղակիորեն չեն բխում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման անհրաժեշտությունից:

3. Մրցույթի հրավերով սահմանվել են կատարողի (մասնակցի) միջազգային հոլոգրամ արտադրողների ասոցիացիայի անդամի (IHMA) հավաստագիր ունենալու և ՀՀ կառավարության 22.08.2002թ. թիվ 1458-Ն որոշմամբ նախատեսված որակավորման չափորոշիչներից մասնագիտական որակավորման չափանիշներին ներկայացվող պահանջներին համապատասխանելու վերաբերյալ տեղեկանք ներկայացնելու պահանջներ, որոնք լինելով մասնակցի որակավորմանը վերաբերվող չափանիշներ ներկայացվել են մրցույթի հրավերի տեխնիկական բնութագրում, մնչդեռ դրանք պետք է ներկայացված լինեին հրավերի «Մասնակցի մասնակցության իրավունքի պահանջները, որակավորման չափանիշները և դրանց գնահատման կարգը» բաժնում:

4. Գնման առարկայի տեխնիկական բնութագրով ի թիվս տպագրական աշխատանքների ներկայացվել է նաև «2D կոդի ընթերցման սարքից ստացված հարցմանը համապատասխան շտեմարանից փոխանցվող տվյալների ձևավորման, դերերի և հասանելիության կառավարման, նախապես ծրագրավորված հաշվետվությունների մշակման և օգտվողների կողմից գործողությունների պատմության մոդուլների առկայությամբ» ծրագրային ապահովման և ՊԵԿ-ում գործող «Դրոշմապիտակների և դրոշմանիշերի վերագրման, հաշվառման» էլեկտրոնային համակարգի և դրանց ենթահամակարգերի 180 օրացույցային օրվա ընթացքում սպասարկման ծառայությունների ձեռք բերում:

Տվյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ Պատվիրատուի և Կատարողի կողմից հաստատված որևէ հաշվարկային կամ այլ փաստաթուղթ հաշվեքննության ընթացքում չի ներկայացվել, դեռ ավելին՝ դրոշմավորված ապրանքների նույնականացման Tax Stamp ծրագրային ապահովման ձեռք բերման վերաբերյալ ՊԵԿ-ին կատարված հարցումը և պահանջված բացատրությունները, ինչպես նաև սպասարկման ծառայությունների մասով (մասնավորապես՝ կատարված ծրագրային լրամշակումների հանձնման-ընդունման ակտերի տրամադրում) պահանջված տեղեկությունները մնացել են անպատասխան, ինչը բավարար հիմք է առ այն, որ նման ծառայությունների մատուցում Կատարողի կողմից փաստացի չի իրականացվել:

Ի լրումն վերը ասվածին և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Կատարողի կողմից ծրագրերի սպասարկումը առնվազն ենթադրում է վերջինիս մասնագետներին համակարգերին հասանելիությունների (ՊԵԿ-ում գործող ընթացակարգերին և մասնավորապես՝ SS անվտանգության սահմանված ստանդարտներին և նորմերին համապատասխան) ապահովում, դերերի և լիազորությունների սահմանում, հայտնաբերված խնդիրների ուղղման, օրենսդրական փոփոխություններից բխող ծրագրային փոփոխությունների և համակարգի օպտիմիզացման արձանագրումներ և ծրագրային կոդերերի փոփոխությունների և լրամշակումների աշխատանքներ, որոնց մասով փաստացի տեղեկություններ և արձանագրություններ ՊԵԿ-ի կողմից չեն ներկայացվել, փաստում է, որ Կատարողը պայմանագրի տեխնիկական բնութագրով սահմանված դրոշմավորված ապրանքների նույնականացման ծրագրային ապահովման և ՎԵՐՈ» համակարգի սպասարկման ծառայություններ չի իրականացրել:

Առկա է անհամապատասխանություն պայմանագրով սահմանված և փաստացի կատարված աշխատանքների ծավալների միջև, հետևաբար նաև՝ Կատարողին վճարված գումարի համարժեքության հետ: Մրցույթով տարբեր ծառայությունների համար մեկ գնային առաջարկ նախատեսելը և համապատասխան պայմանագիր կնքելը (պայմանագրով նման կարգավորումների սահմանում) խոչնդոտում և դժվարացնում է փաստացի մատուցած ծառայությունների արժեքի որոշումը:

Հաշվեքննության օբյեկտի արձագանքը

1. Գնման ընթացակարգի չափաբաժինների վերաբերյալ անհամապատասխանության մասով՝ ՊԵԿ-ԷԱՃԱՇՁԲ-19/1-1 ծածկագրով Կոմիտեի կարիքների համար ծխախոտ, ալկոհոլային խմիչք տեսակների ակցիզային դրոշմանիշերի և դրոշմապիտակների տպագրության աշխատանքներն արհեստական ձևով չեն հիմնավորվել, քանի որ առկա է տվյալ գնման առարկայի մասով պատասխանատու ստորաբաժանման հիմնավորումը՝ երկու տարբեր բնութագրեր ունեցող գնման առարկաների՝ դրոշմապիտակների տպագրության աշխատանքներ և էլեկտրոնային կոդի գեներացման ծրագրի խմբավորելը պայմանավորված է կոդի գաղտնիության (փակ կոդի) հանգամանքով: Կոդի գաղտնիությունը բացառում է դրոշմապիտակների և

դրոշմանիշների կողերի կեղծումը և նվազեցնում է շուկայում կեղծ կողերով դրոշմապիտակների և դրոշմանիշների հայտնվելը:

Այս տեսակետից ծառայությունների երկու չափաբաժնով ձեռք բերումը հնարավոր է միայն բաց կողերի օգտագործման պարագայում, քանի որ երկու տարբեր կազմակերպությունների կողմից մրցույթը շահելու դեպքում, դրանք պետք է կարողանան օգտագործել նույն կողը:

2. Գնման ընթացակարգին մասնակցելու վերաբերյալ անհամապատասխանության մասով՝ ՀՀ կառավարության 22.08.2002 թվականի N 1458-Ն որոշմամբ է սահմանված նման տեղեկանքի ներկայացման պահանջը, հետևաբար այն օրինական է և չի սահմանափակում մասնակցությունն ու մրցակցությունը:

Միաժամանակ հայտնում եմ, որ IHMA - International Hologram Manufacturers Association (Հոլոգրամ արտադրողների միջազգային ասոցիացիա) հավաստագիրը հոլոգրաֆիկ պաշտպանիչ հատկանիշներով տպագրության իրականացման իրավասությունը հավաստող փաստաթուղթ է, որը տրվում է միջազգային հոլոգրամ արտադրողների ասոցիացիայի անդամին: Ակցիզային դրոշմանիշների և (կամ) դրոշմապիտակների հոլոգրաֆիկ պաշտպանիչ հատկանիշներով որակյալ տպագրության աշխատանքների ձեռք բերման ռիսկերը նվազեցնելու նպատակով ակցիզային դրոշմանիշների և (կամ) դրոշմապիտակների տեխնիկական բնութագրում նախատեսվել էր IHMA հավաստագիրը ներկայացնելու պահանջ:

3. Մասնակցի գնահատման վերաբերյալ անհամապատասխանության մասով՝ ՊԵԿ-ԷԱՃԱՇՁԲ-19/1 ծածկագրով հրավերի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերով հստակ սահմանված է թե ինչ փաստաթղթեր մասնակիցը պետք է ներկայացնի: Դրանք են՝ ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարություն՝ համաձայն հավելված N 1-ի, ըստ չափաբաժինների նշված գնային առաջարկ, որում գումարը նշվում է միայն թվերով, առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը համակարգի միջոցով, հանձնաժողովին է ներկայացնում նույն հրավերի 2-րդ հավելվածով նախատեսված գրությունը, որին կցվում են՝ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում, պատշաճ ձևով իրականացրած համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագրի և դրա հաշիվ ապրանքագրերի պատճենները, ինչպես նաև այդ պայմանագրի (պայմանագրերի) սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենները կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստման բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը, գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները, եթե կնքվելիք պայմանագիրն իրականացվելու է գործակալության միջոցով, համատեղ գործունեության պայմանագրի պատճենը, եթե մասնակիցները ընթացակարգին մասնակցում են համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով):

Նշված փաստաթղթերը մասնակցի կողմից ներկայացվել են հրավերի պահանջներին համապատասխան և հայտը գնահատվել է բավարար ու գնումների մասին ՀՀ օրենսդրության համաձայն կնքվել է պայմանագիր: Իսկ ՀՀ կառավարության 22.08.2002 թվականի N 1458-Ն որոշմամբ նախատեսված տեղեկանքի ներկայացումը սահմանված է տեխնիկական բնութագրում և մասնակիցն այն պետք է ներկայացներ պայմանագրի կնքումից հետո՝ պայմանագրի կառավարման փուլում:

Նշեմ նաև, որ հաղթող մասնակիցը համապատասխան տեղեկանքը ներկայացրել է և պատշաճ կերպով իրականացրել է պայմանագրով սահմանված աշխատանքների կատարումը:

Համապատասխան տեղեկանքը ներկայացվել է նաև ՀՀ հաշվեքննիչ պալատի համապատասխան ուսումնասիրություն իրականացնող խմբին՝ 11.11.2021 թվականի ՀՀ հաշվեքննիչ պալատի ութերորդ վարչության պետ՝ Վ. Առաքելյանին հասցեագրված թիվ /70-21/71908-2021 ուղեկցող գրությամբ ներկայացված երեք խտացրած էլեկտրոնային ֆայլերում:

4. Ինչ վերաբերում է Կատարողը պայմանագրի տեխնիկական բնութագրով սահմանված դրոշմավորված ապրանքների նույնականացման ծրագրային ապահովման և «ՎԵՐՈ» համակարգի սպասարկման ծառայությունների չիրականացմանը, ապա հայտնում ենք որ այն չի համապատասխանում իրականությանը կապալառուն պայմանագրով ստանձնած իր պարտականությունները ամբողջությամբ կատարել է այդ թվում՝ սպասարկել է «ՎԵՐՈ» համակարգը, որի մասին է վկայում կապալառույի հասանելիություն համակարգին և վերջինիս անխափան աշխատանքը:

Միաժամանակ հայտնում ենք, որ պայմանագրով սահմանված տեխնիկական բնութագիրը կազմում է մեկ ամբողջություն է և կապալառուի կատարած աշխատանքների փաստը արձանագրող փաստաթղթերում գնման առարկան ներկայացվում է ընդհանրական (հանձման-ընդունման արձանագրությունում պարտադիր չէ առանձին նշվի «ՎԵՐՈ» համակարգի սպասարկման ծառայությունը):

Հաշվեքննողների մեկնաբանությունը

Հաշվեքննության օբյեկտի կողմից ներկայացված առարկությունը ՀՀ կառավարության 22.08.2002 թվականի N 1458-Ն որոշմամբ նախատեսված տեղեկանքը հաշվեքննողներին տրամադրելու վերաբերյալ հաշվի է առած սույն եզրակացությունում:

Մնացած մասերով ներկայացված առարկությունները ընդունելի չեն հետևյալ հիմնավորումներով:

Տարբեր տեխնիկական բնութագրերը մեկ չափաբաժնում խմբավորելու անհամապատասխանության վերաբերյալ ՊԵԿ-ի կողմից առարկություն ներկայացվել է միայն 2D կողի գեներացման ծառայությունների մասով, որի վերաբերյալ սույն եզրակացության մեջ հաշվեքննողների կողմից արդեն անդրադարձ կատարվել է, իսկ «ՎԵՐՈ» համակարգի սպասարկման ծառայությունների և 2D կողի ընթերցման սարքից տվյալների փոխանակման ծրագրային ապահովման գնման առարկաների մեկ չափաբաժնում միավորելու վերաբերյալ ՊԵԿ-ի կողմից ինչպես հաշվեքննության ընթացքում կատարված հարցումներին, այնպես էլ հաշվեքննության արձանագրությանը առարկություններ, բացատրություններ կամ պարզաբանումներ չեն ներկայացվել, ինչը հիմնավորում է արձանագրված անհամապատասխանության օրյեկտիվությունը:

Անհիմն և անհասկանալի են առարկությունները, առ այն, որ «պայմանագրով սահմանված տեխնիկական բնութագիրը կազմում է մեկ ամբողջություն է և կապալառուի կատարած աշխատանքների փաստը արձանագրող փաստաթղթերում գնման առարկան ներկայացվում է ընդհանրական (հանձման-ընդունման արձանագրությունում պարտադիր չէ առանձին նշվի «ՎԵՐՈ» համակարգի սպասարկման ծառայությունը)», քանի որ տպագրության աշխատանքների հանձնումը ենթադրում է կոնկրետ տեսականուն և քանակին համապատասխան դրոշմապիտակների և դրոշմանիշների հանձնում և ընդունում, իսկ համակարգի սպասարկումը, ինչպես սահմանված է տեխնիկական բնութագրով, ենթադրում է ծառայությունների մատուցում որոշակի ժամանակահատվածի համար, իսկ ավելի ճշգրիտ՝ ծառայությունների մատուցումը նախատեսվել է իրականացնել կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման հիման վրա՝ համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 180 օրացույցային օրվա ընթացքում՝ 18.02.2019-17.08.2019թ.թ. ընկած ժամանակահատվածում, մինչդեռ մատուցված ծառայությունների (թվով 170,390,000 հատ դրոշմապիտակների մատակարարման) վերջին հարկային հաշիվը և «կատարած աշխատանքների փաստը արձանագրող փաստաթուղթը» կատարողի կողմից պատվիրատուին ներկայացվել է 07.06.2019թ.-ին՝ ծառայությունների մատուցման վերջնաժամկետից շուրջ երկու ամիս առաջ:

VI. ԽԵՂԱԹՅՈՒՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ

1. 2019թ. աշխատանքի վարձատրության գծով ծախսի վերաբերյալ.

ՊԵԿ 2019 թվականի «Հիմնարկի արտաբյուջետային միջոցների գոյացման և տնօրինման մասին» հաշվետվությունում առկա է խեղաթյուրում 306.8 մլն դրամի չափով, ինչը պայմանավորված է 2018 թվականին աշխատավարձի գծով կատարված ծախսերը 2019 թվականի հաշվետվությունում ներկայացնելու՝ 2019 թվականի աշխատավարձի գծով փաստացի ծախսը 306.8 մլն դրամով ավելի արտացոլելու հանգամանքով:

2. Անընդմեջ հերթապահության ռեժիմով աշխատող (օրական 24 ժամ աշխատաժամանակի տեվողությամբ) ՊԵԿ աշխատողների կողմից կատարվող գիշերային աշխատանքների և հավելումների վերաբերյալ.

ՊԵԿ-ի 466 աշխատողներ 2019 թվականին աշխատել են անընդմեջ հերթապահության ռեժիմով (24 ժամ աշխատաժամանակի տևողությամբ), սակայն վերջիններիս համար չի հաշվարկվել և չի վճարվել օրենքով սահմանված գիշերային աշխատանքի համար հավելումներ, որի արդյունքում «Հիմնարկի կատարած բյուջետային ծախսերի և բյուջետային պարտքերի մասին» ՊԵԿ-ի հաշվետվությունը խեղաթյուրվել է՝ «Հարկային և մաքսային ծառայություններ» միջոցառման «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» հոդվածով ծախսերը պակաս է ներկայացվել գիշերային աշխատանքի համար հասանելիք հավելումների գումարի չափով:

ՊԵԿ-ի կողմից էլեկտրոնային ֆայլերով հաշվեքննողներին տրամադրված աշխատավարձի հաշվարկի տեղեկագրերում վերը նշված աշխատողների աշխատաժամերը և աշխատանքային օրերը ներկայացվել են հնգօրյա աշխատանքային շաբաթվա ռեժիմով, ինչը հնարավորություն չի տվել ներկայացված հաշվարկների և տվյալների հիման վրա կատարել վերահաշվակ՝ խեղաթյուրման մեծությունը գնահատելու համար: Միաժամանակ որոշ դեպքերով առկա են նաև անհամապատասխանություններ աշխատաժամանակի հաշվարկի տեղեկագրերի տվյալների և ՊԵԿ-ի կողմից անընդմեջ հերթապահության ռեժիմով աշխատողների վերաբերյալ ներկայացված տեղեկությունների միջև՝ աշխատաժամանակի հաշվարկի

տեղեկագրերում անընդմեջ հերթափոխով աշխատող որոշ աշխատողների վերաբերյալ տվյալները լրացված են հնգօրյա աշխատանքային շաբաթվա ռեժիմով:

Վերը ներկայացված հանգամանքները սահմանափակել են ճշգրիտ վերահաշվարկներ կատարելու հաշվեքննողների հնարավորությունը և այդ իսկ պատճառով խեղաթյուրման գումարը հաշվարկվել է ընդհանրացված և միջինացված տվյալների հիման վրա, համաձայն որի այն կազմել է 249.5 մլն դրամ:

դրամ

Հաստիքների անվանումները	Հերթափոխի հաստիքների քանակ	Դրույքա չափ	Հերթա փոխի միջին ամսական ժամերը (30.4x24ժամ /4հերթափոխ)	Մեկ ժամվա արժեք (3/4)	Տարվա գիշերային ժամեր (365x 8ժամ x սյուն 2)	Գիշերային ժամերի գումարը (5x6)
1	2	3	4	5	6	7
Արևմտյան մաքսատուն-վարչություն						38,200,396
Բաժանմունքի պետ	1	226,199	182.4	1,240	2,920	3,621,168
Մաքսային տեսուչ	14	154,287	182.4	846	40,880	34,579,228
Հարավային մաքսատուն-վարչություն						27,174,197
Բաժանմունքի պետ	1	226,199	182.4	1,240	2,920	3,621,168
Մաքսային տեսուչ	9	154,287	182.4	846	26,280	22,229,503
ՌԶՍ օպերատոր	1	82,675	182.4	453	2,920	1,323,525
Այրում-Ջիլիգայի մաքսային կետ-բաժին						21,140,829
Բաժանմունքի պետ	1	226,199	182.4	1,240	2,920	3,621,168
Մաքսային տեսուչ	6	154,287	182.4	846	17,520	14,819,669
ՌԶՍ օպերատոր	1	82,675	182.4	453	2,920	1,323,525
Կշեռքավար	1	85,982	182.4	471	2,920	1,376,466
Բագրատաշեն մաքսային կետ-բաժին						74,229,220
Բաժանմունքի պետ	1	226,199	182.4	1,240	2,920	3,621,168
Մաքսային տեսուչ	24	154,287	182.4	846	70,080	59,278,676
ՌԶՍ օպերատոր	2	82,675	182.4	453	5,840	2,647,050
Կշեռքավար	1	85,982	182.4	471	2,920	1,376,466
Տնտեսագետ	3	152,122	182.4	834	8,760	7,305,859
Գոգավան-Պրիվոլնոյե մաքսային կետ-բաժին						29,644,142
Բաժանմունքի պետ	1	226,199	182.4	1,240	2,920	3,621,168
Մաքսային տեսուչ	10	154,287	182.4	846	29,200	24,699,448
ՌԶՍ օպերատոր	1	82,675	182.4	453	2,920	1,323,525
Շիրակ օդանավակայանի մաքսային կետ-բաժին						8,561,058
Բաժանմունքի պետ	1	226,199	182.4	1,240	2,920	3,621,168
Մաքսային տեսուչ	2	154,287	182.4	846	5,840	4,939,890
Բավրայի մաքսային մաքսային կետ-բաժին						50,550,120
Բաժանմունքի պետ	1	226,199	182.4	1,240	2,920	3,621,168

Մաքսային տեսուչ	19	154,287	182.4	846	55,480	46,928,952
Ընդամենը						249,499,960

3. ՊԵԿ աշխատաժամանակի հաշվարկի տեղեկագրերի տվյալների և ՍԷԿՏ տվյալների համադրման արդյունքների վերաբերյալ.

ՊԵԿ 2019 թվականի աշխատողների աշխատաժամանակի հաշվարկի ճշտությունը և համապատասխանությունը պարզելու նպատակով, կիրառված ընտրանքի շրջանակներում, ՍԷԿՏ-ից և ՊԵԿ-ից ստացված տվյալների, ինչպես նաև ՊԵԿ աշխատաժամանակի հաշվարկի տեղեկագրերի տվյալների համադրման արդյունքում տասնհինգ դեպքով արձանագրվել են անհամապատասխանություններ, համաձայն որոնց ՍԷԿՏ տվյալներով Հայաստանի Հանրապետությունից դուրս գտնվելու ժամանակահատվածում ՊԵԿ-ի գործուղման մեջ չգտնվող աշխատակիցներին աշխատաժամանակի հաշվառման տեղեկագրերում հաշվառել են որպես ներկա և բացակա օրերի համար հաշվարկել ու վճարել են աշխատավարձ:

Արդյունքում, ՊԵԿ 2019 թվականի «Հիմնարկի կատարած բյուջետային ծախսերի և բյուջետային պարտքերի մասին» ՊԵԿ-ի հաշվետվությունում ծախսերը ներկայացվել են խեղաթյուրված՝ «Հարկային և մաքսային ծառայություններ» միջոցառման «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» հոդվածով ծախսերը ավելի է ներկայացվել 669.4 դրամով:

4. ՊԵԿ-ՀԲՄ-ԾՁԲ-19/1 պայմանագրի կատարման վերաբերյալ

ՊԵԿ Բագրատաշեն, Բավրա, Գոգավան-Պրիվոլնոյե և Մեղրու մաքսային կետերում տեղադրված RAPISCAN EAGLE GANTRY մակնիշի ռենտգենյան զննող սարքավորումների տեխնիկական սպասարկման ծառայությունների ձեռք բերման նպատակով ՊԵԿ-ը 2019 թվականի մարտի 14-ին էլեկտրոնային գնումների հարթակի «Armeps» համակարգում հրապարակել է բաց մրցույթի հրատապ հայտարարություն, ծառայության նախահաշվային գինը կազմել է 411,428,571 ՀՀ դրամ: Մրցույթին մասնակցել է միայն մեկ կազմակերպության՝ Արաբական Միացյալ Էմիրությունների Շարժա Աէրոպորտ միջազգային ազատ տնտեսական գոտում գրանցված Արեմպա Ինթերնեյշնլ ՖԶԵ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) կողմից, որն էլ ճանաչվել է հաղթող մասնակից: 2019թ. ապրիլի 9-ին Ընկերության հետ կանքվել է ՊԵԿ-ՀԲՄ-ԾՁԲ-19/1 պայմանագիրը՝ 411,180,000 դրամ գումարով: Ծառայությունների մատուցումը իրականացվել է Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 250 օրացուցային օրվա ընթացքում՝ 2019 թվականի ապրիլի 9-ից 2019 թվականի դեկտեմբերի 14-ը: Մեկ օրվա ծառայության գումարը կազմում է 1,644,720 ՀՀ դրամ:

Հաշվեքննողների կողմից պահանջված պարզաբանմանը այն մասին, թե ինչ հաշվարկների հիման վրա է կատարվել ներկայացված ժամանակահատվածների ծառայության արժեքների և ոչ ռեզիդենտի շահութահարկի գումարների որոշումը (գրություն 22.02.2021թ. ՀՊԵ-ՎԱ-42), ՊԵԿ-ի կողմից ներկայացվել է, որ ոչ ռեզիդենտի շահութահարկը հաշվարկվել է ներկայացված հաշիվ-ապրանքագրի (ինվոյսի) գումարի նկատմամբ 20% դրույքաչափ կիրառելով, սակայն չի պարզաբանվել պատասխանատու ստորաբաժանման կողմից ծառայության արժեքի՝ ինվոյսի կամ հանձնման-ընդունման արձանագրության գումարի որոշման սկզբունքը կամ հաշվարկը:

Համաձայն կողմերի միջև հաստատված հաշվարկային փաստաթղթերի ծառայության հաշվարկային տվյալները հետևյալն են՝

Ծառայությունների մատուցման ժամանակահատված	Հաշիվ ապրանքագրով ներկայացված		Հանձնման-ընդունման արձանագրությամբ ներկայացված գումարը (ՀՀ դրամ)
	Գումարը ԱՄՆ դոլարով	Համարժեքը ՀՀ դրամով	
09.04.2019-30.06.2019	240,000.0	114,506,400	144,000,000
01.07.2019-31.07.2019	85,000.0	40,443,850	49,470,000
01.08.2019-31.10.2019	255,000.0	121,405,500	144,000,000
01.11.2019-15.12.2019	121,000.0	57,778,710	70,218,000
Ընդամենը	701,000.0	334,134,460	407,688,000

ՊԵԿ-ի կողմից կատարվել են հետևյալ հաշվարկները և վճարումները.

Վճարում Կատարողին			Վճարված ոչ ռեզ. շահութահարկ		Ընդամենը (ՀՀ դրամ)
Ամսաթիվ	Գումարը (ԱՄՆ դոլար)	Համարժեքը ՀՀ դրամով	Ամսաթիվ	Գումարը (ՀՀ դրամ)	
17.07.2019	240,000	115,560,000	24.07.2019	23,112,000	138,672,000
15.08.2019	85,000	40,842,500	19.08.2019	8,168,500	49,011,000
12.11.2019	255,000	122,910,000	14.11.2019	24582000	147,492,000
17.12.2019	121,000	58,346,200	19.12.2019	11669240	70,015,440
Ընդամենը	701,000	337,658,700		67,531,740	405,190,440

Ծառայության գնի հաշվարկ ըստ պայմանագրի հետևյալն է.

ՀՀ դրամ

Ժամնակա հատված	Օրեր	Ծառայության մեկ օրվա արժեքը (411,180,000:250օր)	Ծառայության գումար	Ոչ ռեզիդենտի շահութահարկ	Ընկերությանը վճարման ենթակա գումար
09.04.2019-30.06.2019	82	1,644,720	134,867,040	26,973,408	107,893,632
01.07.2019-31.07.2019	31	1,644,720	50,986,320	10,197,264	40,789,056
01.08.2019-31.10.2019	92	1,644,720	151,314,240	30,262,848	121,051,392
01.11.2019-15.12.2019	45	1,644,720	74,012,400	14,802,480	59,209,920
Ընդամենը	250		411,180,000	82,236,000	328,944,000

Համադրման աղյուսակ

ՀՀ դրամ

Հաշվարկ ըստ պայմանագրի		Փաստացի ծախսը (կատարված վճարումները)	Տարբերություն (2-3)
Ժամնակահատված	Ծառայության գումար		
1	2	3	4
09.04.2019-0.06.2019	134,867,040	138,672,000	-3,804,960
01.07.2019-31.07.2019	50,986,320	49,011,000	1,975,320
01.08.2019-31.10.2019	151,314,240	147,492,000	3,822,240
01.11.2019-15.12.2019	74,012,400	70,015,440	3,996,960
Ընդամենը	411,180,000	405,190,440	5,989,560

Հաշվարկները և դրա դիմաց վճարումները հաշիվ-ապրանքագրերի (ինվոյսների) հիման վրա կատարելու հետևանքով պայմանագրով սահմանված 411,180,000 ՀՀ դրամի ծառայության արժեքը ՊԵԿ-ի կողմից ձևակերպվել է 405,190,440 դրամով, Կատարողին վճարվել է 8,714,700 ՀՀ դրամ ավելի գումար, իսկ ՀՀ պետական բյուջե՝ 14,704,260 ՀՀ դրամով պակաս ոչ ռեզիդենտի շահութահարկ:

Արդյունքում «Հիմնարկի կատարած բյուջետային ծախսերի և բյուջետային պարտքերի մասին» ՊԵԿ-ի հաշվետվությունում ծասերը ներկայացվել են խեղաթյուրված՝ «Ռենտգենյան սարքավորումների տեխնիկական սպասարկում» միջոցառման «Այլ մեքենաներ և սարքավորումներ» հոդվածով ծախսերը պակաս են ներկայացվել 5,989,560 դրամով:

5. ՊԵԿ-ԳՀԾՁԲ-19/12 պայմանագրի կատարման վերաբերյալ

ՀՀ ՊԵԿ Բազրատաշենի, Բավրայի, Գոգավան-Պրիվոլնոյեի, Մեղրիի մաքսային կետ-բաժիններում և Արևմտյան մաքսատուն-վարչությունում տեղադրված թեթև մարդատար մեքենաներ զննող Rapiscan CO2, ֆիզիկական անձանց զննող Rapiscan Secure 1000 մակնիշների և Rapiscan 600, Rapiscan 500 սերիաների ռենտգենյան զննող սարքավորումների տեխնիկական սպասարկման ծառայությունների ձեռքբերման նպատակով ՊԵԿ-ը 2019 թվականի հունիսի 12-ին էլեկտրոնային գնումների հարթակի «Armeps» համակարգում հրապարակել է գնանշման հարցման հայտարարություն: Ծառայության նախահաշվային գինը կազմել է 132,716,000 ՀՀ դրամ: Մրցույթին մասնակցել է միայն մեկ կազմակերպության՝ Արաբական Միացյալ Էմիրությունների Շարժա Աէրոպորտ միջազգային ազատ տնտեսական գոտում գրանցված Արեմպա Ինթերնեյշնլ ՖԶԵ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) կողմից, որն էլ ճանաչվել է հաղթող մասնակից: 2019թ. հուլիսի 12-ին Ընկերության հետ կանքվել է ՊԵԿ-ԳՀԾՁԲ-19/12 պայմանագիրը 132,702,000 դրամ գումարով: Ծառայության մատուցումը իրականացվել Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 150 օրացուցային օրվա ընթացքում՝ 2019 թվականի հուլիսի 16-ից 2019 թվականի դեկտեմբերի 12-ը:

Համաձայն կողմերի միջև հաստատված հաշվարկային փաստաթղթերի ծառայության հաշվարկային տվյալները հետևյալն են՝

Փաստաթուղթ	Համար	Ամսաթիվ	Ծառայությունների մատուցման ժամանակահատված	Գումար	
				ԱՄՆ դոլար	ՀՀ դրամ (համարժեքը դրամով)
հաշիվ-ապրանքագիր	SINAIS0119-0409	13/12/19	16.07.2019-12.12.2019	228,950.0	109,371,705
հանձնման-ընդունման արձանագրություն	1	13/12/19	16.07.2019-12.12.2019	-	132,702,000

ՊԵԿ-ի կողմից կատարվել են հետևյալ վճարումները.

Վճարում Ընկերությունը			ՀՀ պետական բյուջե՝ ոչ ռեզ. շահութահարկ		Ընդամենը դրամ
Ամսաթիվ	Գումարը ԱՄՆ դոլար	Համարժեքը ՀՀ դրամով	Ամսաթիվ	Գումար	
17/12/19	\$228,950.0	110,399,690	18/12/19	22,079,938	132,479,628

Ծառայության գնի հաշվարկ ըստ պայմանագրի հետևյալն է.

ՀՀ դրամ

Ժամնակա հատված	Օրեր	Ծառայության մեկ օրվա արժեքը (132,702,000:150օր)	Ծառայության գումար	Ոչ ռեզիդենտի շահութահարկ	Ընկերությանը վճարման ենթակա գումար
16.07.2019-12.12.2019	150	884,680	132,702,000	26,540,400	106,161,600

Համադրման աղյուսակ

ՀՀ դրամ

Հաշվարկ ըստ պայմանագրի		Փաստացի ծախսը (կատարված վճարումները)	Տարբերություն (2-3)
Ժամնակահատված	Ծառայության գումար		
1	2	3	4
16.07.2019-12.12.2019	132,702,000	132,479,628	222,372

Հաշվարկները և դրա դիմաց վճարումները հաշիվ-ապրանքագրերի (ինվոյսների) հիման վրա կատարելու հետևանքով պայմանագրով սահմանված 132,702,000 ՀՀ դրամի ծառայության արժեքը ՊԵԿ-ի կողմից ձևակերպվել է 132,749,628 դրամով, Կատարողին վճարվել է 4,238,090 ՀՀ դրամ ավելի գումար, իսկ ՀՀ պետական բյուջե՝ 4,460,462 ՀՀ դրամով պակաս ոչ ռեզիդենտի շահութահարկ:

Արդյունքում «Հիմնարկի կատարած բյուջետային ծախսերի և բյուջետային պարտքերի մասին» ՊԵԿ-ի հաշվետվությունում ծասերը ներկայացվել են խեղաթյուրված՝ «Ռենտգենյան սարքավորումների տեխնիկական սպասարկում» միջոցառման «Այլ մեքենաներ և սարքավորումներ» հոդվածով ծախսերը պակաս են ներկայացվել 222,372 դրամով:

VII. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՄԲ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԱՅԼ ՓԱՍՏԵՐ

Հաշվեքննության ընթացքում անդրադարձ չի կատարվել ՊԵԿ-ի կողմից իրականացվող ՀՀ պետական եկամուտների կոմիտեի շենքային ապահովվածության բարելավում միջոցառմանը, քանի որ նշված միջոցառմանը վերաբերվող հիմնական փաստաթղթերը թիվ 61210020 քրեական գործի շրջանակներում տրամադրվել են ՀՀ հատուկ քննչական ծառայությանը:

VIII. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Յուրաքանչյուր տարվա ծախսերն իրականացնել տվյալ տարվա բյուջեով նախատեսված միջոցների հաշվին և տվյալ ծախսատեսակի կատարման համար սահմանված առավելագույն չափերի սահմաններում:

2. Կատարել վերահաշվարկ չհաշվարկված և չվճարված աշխատավարձի հավելումների մասով՝ պահպանելով ՀՀ գործող օրենսդրության պահանջները և ապահովել անընդմեջ հերթապահության ռեժիմով աշխատող աշխատակիցներին օրենքով գիշերային աշխատանքի համար հասանելիք հավելումների տրամադրումը:

3. Պարգևատրումների տրամադրման համար սահմանել աշխատանքի գնահատման չափորոշիչներ, մեխանիզմներ, փաստաթղթավորման և վճարման ընթացակարգ ապահովող կանոնակարգ:

4. Ներքին վերահսկողության արդյունավետության բարձրացման նկատառումներից ելնելով վերանայել աշխատաժամանակի հաշվարկի համար կիրառվող հսկողական մեխանիզմները:

5. Ոչ ռեզիդենտ կազմակերպությունների հետ կնքվող պայմանագրերի շրջանակներում կազմվող փաստաթղթերում (հաշիվ-ապրանքագիր կամ այլ) նախատեսել հնարավոր հարկման ազդեցության մասով տվյալների ներկայացում, ինչի արդյունքում յուրաքանչյուր գործարքին վերաբերվող հաշվարկային փաստաթղթով կարտացոլվի ինչպես գործարքի ընդհանուր գումարը, այնպես էլ հարկային գործակալի

կողմից պահվող հարկի մեծությունը և մատակարար կազմակերպությանը վճարման ենթակա զուտ գումարը:

Հաշվի առնելով, որ ոչ ռեզիդենտ կազմակերպությունները ՀՀ-ում ծառայություններ մատուցելիս և աշխատանքներ կատարելիս կարող են եկամուտներ են վճարել ՀՀ ռեզիդենտ ենթակապալառու և գործակալ կազմակերպություններին, ինչպես նաև ֆիզիկական անձանց, պայմանագրի կողմ՝ պատվիրատու, հանդիսանալու դեպքում դիտարկել վերջիններիս կողմից եկամուտների հայտարարագրման և հարկերի վճարման իրավաչափությունը:

6. Այնպիսի պայմանագրերը և գործարքները, որոնց տեխնիկական բնութագրերը բացի մատուցվող հիմնական ծառայությունից (ապրանքից, աշխատանքից) ներառում են ածանցյալ կամ հիմնավորված այլ բնույթի ծառայություններ, դրանց կատարումը հիմնավորող փաստաթղթերում ապահովել տվյալներ, որոնք կփաստեն նշված ծառայությունների մատուցված լինելը, կամ յուրաքանչյուր բաղադրիչի հանձնում-ընդունումը կատարել և փաստաթղթավորել առանձին:

7. Սահմանել պատասխանատու ստորաբաժանումների գնման հայտերի իրատեսությունը և կարիքին համարժեքությունը գնահատող մեխանիզմներ և չափորոշիչներ, այդ թվում՝ գնումը կատարելու ժամանակացույցներ:

ՀՀ հաշվեքննիչ պալատի անդամ՝

Ա.ԳԵՎՈՐԳՅԱՆ